

14649
14650

891.99
4-40

1. Upright long leaf
2. Spindles to long upright

2003



указ

- 1
2. Указ Уведомления
и Отделения к Указам
ф. инв. 4. Июль 1924.

3236

ՏՈՂՄԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՔԻՒՂ

891.99

ՇՂ - 40

u m

57^Կ

ՍՏՈՒՆԵՐՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՔԵՐԹՈՒԱԾՔ

Ի ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՆԱՐ ՊԷՅ

Ը. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Հրատարակողն «ԼՈՒՍՏՈՒ» Հրատարակչական
Ընկերություն, Սեբաստիոյ.



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ

1914



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Սերասիոյ «Լուսսո» Հրատարակչական

Միութեան կողմէ

Միութիւնս հրատարակելով հանգուցեալ Նար-
պէյ Արբազանի ֆերուածներու այս շինաղ փունջը՝
կը կարծէ ծառայել իր նպասակին՝ որ է ազգային
գրականութեան սպառած հասրնիք երկերուն նոր
լոյս տալ եւ այսպէս փրկել զանոնք մոռացութենէ:
ՍՏՈՒ ԵՐՔ Հ.Ս.Յ.Ս.Կ.Ս.Ք.Ր գլուխ գործոցն
է Նար պէյի ինչպէս կը վկայեն հմուտ անձնաւո-
րութիւններ:

Ուստի Միութիւնս իր անդրանիկ հրատարակու-
թիւնն ընելով այս գործը՝ ուրախ եւ հպարտ է որ
գրասէր հասարակութեան կը ներկայանայ իրա-
ւամբ հրաշակէրս նանչցուած հասորով մը, որմէ
ֆաշալերուած՝ հետզհետէ պիտի նոխացնէ օգտակար
երկասիրութիւններու իր շարքը, որուն ահա այն
ինչ կը թեւակոխէ, միեւնոյն աստիճան շեշտելով սա
պարագան եւս թէ Օսմանեան Սահմանադրութեան
սկիզբէն ի վեր, մինչ շատ մը մոռցուած ազգային
հեղինակներ հրատարակութեան պատիւը ունեցան,
Նար պէյ արբազան հակառակ այնքան ազատաշունչ
ֆերուածներու ծնունդ տուած ըլլալու, չունեցաւ
իր հրատարակիչը դժբախտաբար, եւ միայն Միու-
թեանս կը վիճակի ահա Նար պէյի յիշատակին
համար խոնդաժողովութեան ծափեր խլել եւ թե-
լալիցէլ այսօրուայ Հայ սերունդին թէ՛ Նար պէյ
կապրի ու պիտի ապրի հայութեան արթին մէջ:

1914 Մայիս 14, Կապրա

* *

Ընկերութեան կնիքը չկրող օրինակները կեղծ են:



170
40

Յ Ա Ն Կ



ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ — ՎԷՊՔ

Երգ .	Ա .	Հրեշտակն Հայոց	5
»	Բ .	Հայկ	12
»	Գ .	Արամ	17
»	Դ .	Արա զեղեցիկ և Նուվարդ	24
»	Ե .	Զարմայր և Շուշան	37
»	Զ .	Տիգրանուհի	46
»	Է .	Հսկայն Հայոց Տորք	49
»	Ը .	Վերջին Հայկազն , Վահէ	52
»	Թ .	Արասչէս Մեծն , Տիեզերակալ	58
»	Ժ .	Արտաւազդ Ա . բնաղծ . Թագւր	67
»	ԺԱ .	Արտաւազդ Բ . Հայոց վրիժաճան	76
»	ԺԲ .	Նախավկայունին Սանդուխտ	89
»	ԺԳ .	Կոյսն Հոխիսիմէ	98

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ — ԵՂԵՐԵՐՔ

»	Ա .	Հայուն կեանքը	101
»	Բ .	Պանդուխտ առ ամպն	104
»	Գ .	Հայ մայր մը	106
»	Դ .	Նորածիլ աերեւք	112
»	Ե .	Առ տաճարն Հայոց , առէն պանդխտին 114	
»	Զ .	Հովիկ հայրենի	117
»	Է .	Թէ տային ինձի	119
»	Ը .	Աղղութաց Հայեր	121

Երգ . Թ . Ի Սահմանադրական օճն	123
» Ժ . Արշալոյս	126
» ԺԱ . Թշուառ Հայեր	128
» ԺԲ . Հայոց մայրեր	131
» ԺԳ . Պանդուխտն առ ծիծառնիկ	134
» ԺԴ . Հառաչք Հայ պանդխտին	136
» ԺԵ . Հայ ապրինք	138
» ԺԶ . Հայ մեռնինք	141
» ԺԷ . Ի գերեզմանս պանդուխտ Հայոց	145

Այս երգերը գրուած են մեծաւ մասաւք հայրենի ափունքներէ հեռու, պանդխտութեան մէջ, յերոսպա, յիշատակաւ փառաց յուսափայլ Անցեղոյն, եւ ներկայիս սգասուեր աղետսին աղեկիգեղով:


Հեղինակը ներշնչուած է մերք հոյակապ քաղաքի մը շինիչներու, եւ մերք գիտական քաղաքի մը անդորրութեանը մէջ. երբեմն ակտուաց խորհրդաւոր հովանեացը ներքէ, երբեմն քարձարքերձ շերտանց խորիս ապառաժներու վրայ նստած, եւ այլ երբեմն կանաչագեղ հովտաց զեփիւռներու մէջ յերագեղով, մերք մրնուացող փրփրադէզ կոհակաց առջեւ, եւ մերք՝ զերեզնակաց մահասարսուն սուներներու մէջ քալառելով, Հայրենեաց խանդավառ յիշատակը արտին մէջ քորքոսելով, եւ գրեթէ միշտ իւր վնարին քեղերը աղեկեզ արտասուօքն ոռոգանելով:

Երկու մաս կառ գիրք քաժնած է Հեղինակն այս երգերը. ՎԷՊԲ եւ ԵՂԵՐԳԲ: Առաջինը Անցեղոյն, երկրորդը՝ ներկայիս նուիրեալ: Երկուքն եւս անկասար, որովհետեւ ոչ մեր քոչոր անցեալ փառքերը կը քովանդակեն, եւ ոչ՝ ներկայ քշուառութիւնք: Սառ պատճառը ոչ միայն իւր սխարութիւնն է՝ նիւթոց անքաւ առատութեանն առջեւ, այլ եւ դժբաղդ ու ահաւոր հրդեհ մը՝ որ Բերայի մէջ Հե-

դիմակին սասնառեայ երկասիրութիւնները բողոք յա-
 ճիւն փոխարկելով, Վեպերուն մեծ մասը, որ մեր
 Դիպագանց կենսագրութիւնն էր, յափշտակեց սաւառ,
 ուրիշ քանի մը հաստ խորոզական եւ բանասիրա-
 կան աշխատութեանցն հետ: Իսկ այս հաստին մէջ
 անփոփոռածները՝ բաղդ ունեցան ազատքը, ուսնի
 ազգային օրագրաց մէջ հրատարակված շինելով, ո-
 մանք աչքաբեկանաց փոխակերպութիւնները քարեղիպութեանը:

Հեղինակը այսօր այն նշխարեայ մնացորդին ի
 յոյս ընծայած ժամանակ յոյս ունի որ հայրենա-
 սենց ազգայնոց ընդունելութիւնը պիտի փայտէրէ գին-
 ֆր որ արքին խորշերուն մէջ քաղաւած ու նիրհած
 յիշատակներն արթնցունէ օր մը. եւ իւր սգաւոր իր-
 նարին յանձնէ վերերգել այն գուպարայաղք Դի-
 ցագունքն եւս ու անոնց յուսափառ Ստուերներուն աչ
 Հայոց պանդխտութեանը մէջ առաջնորդելով՝ Ներ-
 կայիս աղէկները Անցելոյն փառփոյր մխիթար եւ
 խրախոյս ընդունիլն, ու Արեւելիկ ոգոյ մէջ արծար-
 փ յիշատակ եւ սեր հայրենեաց:

Երբ այս երգերը յայտնի Վերասուրաց իյճ մը
 քոցնէլ տալ դեպ ի Հայրենիս, կայծ մը վառել հայ-
 րենասեր եռանդեան, կարծի մը արցունք պղպտեղը-
 նէլ. ու հրախաւնդ ախ մը կորգել Հայոս մը զգա-
 յուն արքին, — Հեղինակը իւր աշխատութիւնը պակ-
 ուած պիտի հա՛ւարի:



ԳԻՐԿ ԱՌԱՋԻՆ



ԵՐԳ Ա.



ՀՐԵՏՏԱԿՆ ՀԱՔՈՅ



Ա

Ո՛ւր կ'երթաս պանդո՛ւլստ: — Ի՞նչ տըխուր այդ քան
 Այդ անհուն աւերց մէջ թափառական,
 Պահ մը հառաչես, կը կանգնիս պահ մ'այլ,
 Ճակատ վայրահակ, խոնջած թըւի քայլ:
 Ետին թէ դառնաս, թէ յառաջ գընաս,
 Ամէն տեղ սըգով սեւած կը տեսնաս,
 Շըշուկ մը խորէն ազդէ քեզ աղէտ...
 Է՛ն, թէ դու ըզցաւս կը փնտռես յաւէտ.
 Տա՛ր մէջ այդ աւերց ըզքայսըզ մոլոր.
 Բայց ի՞նչ 'տի գըտնես... ո՞ր սուր բըռնաւոր
 Չե՛հաս հոն գիլել աւեր ընդ աւեր: :
 Ի՞նչ կարծես լըսել այս մահու տեղեր՝

Ուր միայն բուին ջայլեր կը հընչեն .
 Այ՛ո՛, թէ լայկաց գաւառիս միջէն
 Ուզէր քոյդ քընսար թըւոյընել մի երգ,
 Մի՛ կարծեր, պանդս՛ւխտ, թէ քոյին յեղերդ
 Սոխակն ու սարեկ պոտաոխտն մի տան,
 Կամ բըլուրն ու դաշտ լըսեն ու խոյտան. —
 Դարձի՛ր, ո՛չ դարձի՛ր, մի՛ ճընչեր բզձոց.
 Գիտե՛ս զայդ երկիր. . . — ԵՐԿԻՐ Է ՀԱՅՈՅ:—

Բ

Բայց ինք ոչ չառնայ. . . գիտէ զիւր ճամբան.
 Կարծես թէ յերկնի հնազանդի հրաման: —
 Սիրտ իւր կը թընդայ երբ կոխէ զփոշին
 Ուր մերթ հոյակապ քաղաքք կանգնէին.
 Չորս զին ցիրուցան տաճարք ու պալատ,
 Եւ եկեղեցիք դարձեալ յանապատ.
 Պարխպք որ ըզանթըս ծաղր առնէին՝
 Արդ փըռուած խոնարհ դարձել հարթ գետին.
 Հոն ուր պանծային արքայք թագուհիք՝
 Գայն է դըրեր ըտյն և աղուէս խըշաիք.
 Անդրիք՝ որ քաջաց կանգնեալ անուշով՝
 Թաւալեալ, անդ ի՞նչ սողայ սուլելով.

Հոն ա՛յն զիւցադանց կործանեալ դամբան՝
 Յորոց փառս եւ գործ Հայրենիք մեծցան.
 Եւ արդ սըրբազան սակերք ցիրեցան,
 Վա՛հ, խեղճ Հայք եւ ո՛չ ունին գերեզման. . .
 Չըկայ ձեռք զըթամ որ ժողվէ գնտին,
 Ի՛նչ ի քուն հանգըտտան դարձունէ շիրմին.
 Չըկայ հայրասէր սիրտ մը եռանդուն

Որ գըրկէ զանոնք տանի շըրթներուն,
 Պազնէ զրոկ վըկայս այն պերճ Անցելոյն՝
 Որ կայ զերդ տապալ բուրգ մ'ի խարըսխոյն:

Գ

Իսկ ինքը նըստաւ. . . — Արցունքոտ աչեր
 Ընկան ի փըշրեալ սըգաժանգ զէնքեր.
 Յերկին նայեցաւ, հառս՛չ մ'եռ հրավառ,
 Յուսահատ սըրտին կարծես էր պատառ.
 Թընդաց օչն, ու հով՝ շունչն ի յեռ քարչեց,
 Երասիս ուռեցաւ, զընդըզներ գըլեց.
 Դըզըրզին հովիտք, սակերք արթընցան,
 Կարծեն թէ ըզփո՛ղ լըսեն յարութեան. . .
 Գոռան արձագանգք լերանց եւ ձորոց.
 «Լըռէ՛ք, լըսե՛ցէ՛ք, ՀՐԵՇՏ՝ ԿՆ Է ՀՊՅՈՅ»:

Առաւ ըզքնար եւ կ'ուզէր զարնել,
 Երկնուսոյց մատու՛ք թըւին կարկամել.
 Ձեռք որ են սովրած զըւարթ յալէլուս՝
 Ի՞նչպէս շարժին յողբ խառնեալ յարտասուս.
 Ի՞նչպէս խընդութեան զարնեն մի դաշնակ
 Հոն՝ ուր տան ըզգանգ շիրմք 'ւ աւերակ.
 Ի՞նչպէս ըզյուսոյ աւետիս հընչել
 Ուր յոյան ըզվերջին բարեւն է տըւել. . . :

Եւ ընկաւ քընարն ի ծոց Հրեշտակին,
 Կարծես ձայնն անուշ հատեր ի կըրծին.
 Այսպէս եւ թըռչուն տը կըտերեր է շունչ՝
 Վերջին մ'ի ծոցէն արձակէ շըշունջ.
 Կը ծալէ զթեւիկ, բըբեր կը փակվին,

Գլուխն ի վար ծըռի՝ գըլորի յովտին :
 Բայց մահադիտակ պանդըխտին ճակատ՝
 Յհա կը վառի յանկարծ քան հըրատ .
 Սեւ սեւ աչքերէն բոցեր կ'արծակին ,
 Կանգնի զինչ բըլուր հասակ Հրեշտակին ,
 'Ի ակընպիչ Մասեաց հալւոր սարերուն՝
 Կարծես հին զԱղեղ խընդրէ ի յամպուն ,
 Որով հաշտութիւն Աստուած խոստացիլ . . .
 Եւ զԱղեղ լարողն էր ինք Գարրիէլ :—

Եւ բարբառ հընչէր լերանց եւ ձորոց .
 «Լըռէ՛ք, լըսեցէ՛ք ՀՐԵՇՏԱՎԻՆ Ե՛ ՀԱՅՈՅ» :

Գ

«Աստուած իմ, — գոչեց, նայեցաւ յերկին, —
 Լըսէ՛ դձայն պանդուխտ Հրեշտակապետին,
 Որ թողած գեթեր, թողած՝ զիմս երամ՝
 Եւ յերկիր իջեալ զբաղդն Հայոց ողբամ .
 Իջայ՝ որ զիմ լաց չըտեսնէ՛ Երկին,
 Եւ մի՛ ուսաննայք յիմ հառաչ կըտրին . . . —
 Այս է երջանիկն անդրանիկ Երկիր . . .
 Ո՛ր գըլխոյն պըսակ փառաց լուսակիր . . .
 Իբր ըզհէք Բարէլ անյարիր տապասս :
 Ո՛չ եւս կ'արթըննայ յիմ ձայն մահասաստ .
 Զի, Տէր, դաջ գըլթոյդ իրմէն յեա առած՝
 Զախով թօթափես հարուած ի հարուած .
 Որչափ ունէր փառս՝ ա՛յնչափ արդ նախատ,
 Եւ ի սուգ խաւար սեւցեր է ճակատ :
 Բայց դու զՀայաստան գըգուէիր ի սէր,
 Զնա իւր օթեւան Հրեշտակդ էր կարծեր,

Նախանձորդ երկնից մինչ եղեր ըզ Դրախտ :
 Յայն պայծառ օրէր ի՛նչ մեծ էր իմ բախտ
 Յոր զիս հայրական գըլթովդ ընտրելով
 Հրամեցիր սիրեմ ու հըսկեմ զանով .
 Զի՛ յընկերաց պար ճակատս անդ բարձր էր,
 Ի՛նչպէս կորակոր այժմ հեծեմ, ո՛վ Տէր . . .
 Ինչո՞ւ արդ յաւեր առնես զՀայաստան,
 Վասն ա՛յն զի Եդեմն էր նա փափկութեան .
 Եւ որ նախ եղեւ յօրհնել ըզքս լոյս՝
 Թաւալես այսպէս ի մութ մահայոյս :
 Ինչո՞ւ յանդընդոց ընկղմել յատակ
 Զայն որ բարձրացաւս այնչափ ձեռքիդ տակ :

Ո՛հ, բայց դըժընդակ յողէսս՝ Հայաստան
 Պիտի չըմոռնայ՝ զիւր փառս յա խտան .
 Անցեալ իւր չըքեղ՝ պատէ՛ զիւր գըլուխ՝
 Ինչպէս ամըուտան ամպ կայծակնաբուխ :
 Եւ ես յապագայն հայիմ յուսահատ,
 Յաւոցս աճի հետ եւ սիրոյս հըրատ :

Ե

«Ո՛վ, ո՛վ ցամքեցնէ զաչացս աղի ջուր :
 Յերբ զաղեղ Հայկայ տեսնամ ես փըչուր . . .
 Ամէն տեղ աւերք մեծութեան, փառաց,
 Ամէն տեղ ըստուերք մահո՛ւ դագաղաց :
 Եւ ես զերդ սըգոյ արձան մի սպիտակ
 Յուսասեկ է՝ սիրա գըլուխ վայրահակ՝
 Դիւցազանց չիրմաց հըսկելով ի լաց,
 Լամ եւ ես վերայ մեռեա՛լ կենդանեաց . . .

Լամեւ ննջելոց՝ ոյց փառք մոռցըւեր .
Եւ անուանք նոցա թաղեալ են յաւեր . . . : —

Սակայն բարութիւնդ որ չունի սա՛ման՝
Պիտի չըստիտիէ՞ եւ հէքն Հայաստան . . .
Ե՛րբ տեսնեմ ձեռքիդ կայծակներ մարուած,
Հայիս ու ժրպտիս գըթութեամբ, Աստուած :
Նայէ՛ այս կործան տանց ու պալատանց .
Եւ զի գըթած ես՝ ներէ՛ գէթ հիմանց . . .
Զը՞ հասնիր քեզ սուրբ Տաճարաց հառաչ,
Զե՞ս տեսներ ջախջախ կործանեալ ըզ Սաչ .
Ո՛հ, թէ զնախատինս զիտես քո այսքան՝
Պէտք է, Տէ՛ր, յիշես ըզհին Գողգոթեան : —
Յիշէ՛, բարձեալ Տէ՛ր, որ փառացն օրեր
Հայն ի վիշտ եւ ցաւ Սաչիդ է՛ ձօներ . . .
Եւ թէ ցարդ մոռցար՝ բայց տե՛ս զեռ երկիր
Զըչորցաւ զանգեալ յարենէ կարմիր .
Դա մարտիրոսաց բիւրաւոր արիւն՝
Որ քեզ բողոքեն խընդրեն «Գըթութիւն» :
Բայց թէ պէտք է զո՛հ մ'ալ ցասման քոյին
Աստուած, թողութիւնն աուր այս խնճ Ազգին .
Յի՛մ գըլուի թափէ զանաւոր կայծակս . . . » —
Ասաց ու ընկաւ ի ծունկ յաւերակս : —
Եւ անա Մատեաց ի գլուխ Միաձան ,
Եւ Տէ՛ր երեւցաւ ի հուր փայտական .
Նայեցաւ ի ժպիտ առ Հրեշտակն Հայոց,
Եւ գոչեց Աստուած ի միջոյ ամպոց .
«Փրկեցի, դարձեալ կը փրկիեմ ըզՀայս» :
Իսկ Հրեշտակն Հայոց երբ որ լըսեց զայս .
Սիրան ի խինդ տրտիւնց, բզլայն բացաւ թեւ,
Սլացաւ ի Մասիս, ապ՝ յերկինս թեթեւ : —

9

Քընտրն այն տառն պըրծաւ ի ձեռաց,
Եւ գըլոր յերկիր՝ տըրամագին հեծեաց : —
Անշարժ յանուշող ըզհեա Հրեշտակին
Աչք իմ մինչ յաթոռն Անմահին ելին .
Շըլացան յայն լոյս բիրք իմ հրաշատես,
Հրեշտակն, եւ տեսիլ լինէին անտես : —
Բայց բոց էր ձակատս ու բոց ի հողիս .
Իբր ըզմօրենին անձախ վառէր զիս,
Բոց՝ որ սըրբեալ սիրտ յունայն ըզգածմանց՝
Ըզսուրբ բորբոքէ անդ սէր Հայրենեաց,
Յիշեցի յայնժամ որ եւ ես պանդուխտ
Երկար առենէ բոլոր սիրտս եւ ուխտ
Նըւիրել էի յիմ քաղցր Հայաստան .
Եւ իբրու գըտեալ գոնձ փառս յաղթութեան՝
Գեանամած պազի վեր առի զըընար,
Եւ ի սուրբ աւլան թըրթուեցուցի լար .
Սիրտ իմ բարձրացա՛ւ, եւ յերկինս ի վեր
Թուուցի եռանդուն սխաննայս առ Տէ՛ր : —

5

Երկար զեռ եկի ման յաւերս տըրտում .
Զոր կանգնեցէ՛ որ մ'Աստուծոյ խոտտում .
Դաջաց ու սըրբոց ոսկերաց վերայ
Հաւատարմութիւն ցըմահ երզուընցայ :
Այո՛, աշխարհի քարոզեմ համբուն
Ըզքաջ Հայոցս վէպս վե՛հ գործովք զեղուն .
Սովրին ակն ամեկ յաղեալից մերոց,
Եւ թափեն արցունք մը ի յու՛շ Հայոց :

ԵՐԳ Բ.

Հ Ա Յ Կ

... Tuum Nomen
Gantantes sublime ad sidera sygni.
VIRGIL.



Ա

Հայր իմ, Հայկ... ո՛վ հարց հարանց մերոց հայր,
Ո՛վ դու փառաց մեր հայրենեաց հիմն ու ծայր.
Ո՛վ որով Հայն այսօր ունի հայրենիք՝
Եւ մարդկութեան մէջ՝ կընիք:

Հո՛ւր հայր, ըզքեզ կարդայ յետին քո որդի,
Որ քո չնորհիւզ անուն մի վե՛հ իւր ունի,
Անուն՝ յոր սիրտ իւր մեծաթուռդ որոտայ
Եւ ընդ աշխարհ նա պանծայ:

Այո՛, յաշխարհ համօրէն Հայն է կարող
Խըրոխտալ, Ո՛վ ի՛նձ պէս ունի վե՛հ ծընող,
Հըսկայ՝ ահեզ, ում առջեւ քաջք ձեր բոլոր
Թ՛ըզո՛ւկք են անդօր:

Նորա անուան չորս ծագք երկրի ոչ բաւեն,
Բոյլք աստեղաց յերկնից երես զայն հեզեն,

Եւ փառք նորա լըցեալ զերկիր մեծապանծ
Խաանի ընդ դա՛րս յաւիտեանց:

Ազգե՛ր, Հայուն թըշուտութեամբ մի՛ սոնքայք.
Թէ պէտ բազուկքն արդ ծանրանան ի շըզթայք,
Բայց սիրտ նորա երկաթիւ ո՛չ կաշկանդի...
Ազատութեան է որդի:

Ազատութիւն եւ Հայն՝ միմեանց են եղբայր,
Եւ զերկոսին իսկ մի եւ նոյն ծընաւ հայր՝
Միոյն՝ տրաւ ժառանգութիւն զՀայաստան,
Միւսոյն՝ զաշխարհ՝ ամենայն:

Յառաջ քան զՀայկ՝ տակաւին մարդ ոչ գիտէր
Թէ քաջութիւն ի՞նչ է, զի՞նչ փառք անվեհեր.
Սա՛ փառք կարծէր գազանաց հետ մարտընչել,
Նա՛ շինել խօյն ըզբարէլ:

Եկաւ Հայկ, նա սուրեցոյց նախ առաջին
Կըռուել վանել զազատութեան թըշնամին,
Եւ կանգնել՝ ո՛չ թէ անխորհուրդ աշտարակ,
Այլ ըզփառաց ամբարտակ:

Ինքն առաջին ելաւ հըզօր ախոյեան
Սուրբ իրաւանց զոր ետ երկինք մարդկութեան.
Նորա ձայնէն ա՛նաւոր նախ արթընցան
Սըրտեր ընդգէ՛մ բըռնութեան:

Երբ գերութիւն՝ երկրակործան քան հեղեզ
Ծաւալեցաւ քանդեց տիրեց ամէն տեզ,
Վազեց մեծն Հայկ, և զՀայաստան իւր վըսեմ
Կանգնած պատուար բըռանց դէ՛մ:

Առաւ ըզնեան, ըզփրկութեանըն գործի՝
Զոր ինքն իսկ Տէր ցըցուց իրեն յերազի, (*)
Զարդարադատ երկին կոչեց իւր վըկայ՝

Եւ զգարերն ապագայ:

Զիւր լայնալիճ քարչեց բազկաւն ահագին,
Եւ իբր յամպոց ըզշանթ թըւոյց սուր փըքին.
Շեշտ ստապրեց սրտաընդստ ընդ գետին
Ըզբունաւորն ասաջին:

Եւ Զըւարթունք սրտաընք ազգաց ավենայն
Որ սըրտաթունդ խըրոնէր հանդէս էին յայն,
Հրեզէն թեւօք յաղթանակին ծափ դարկին,
Ըզնախկին Քաջն երգեցին:

Ապա Հայոց յերանց վերայ ել Հըսկան՝
Իբր աշխարհի միահեծան տէր իշխան,
Եւ մինչ երկիր խոնարհեցոյց պարանոց
Աւնուլ ըզլուծ Հօրն Հայոց:

«Աշխարհ գոչեց, դու իմ բաժին ես այսօր.
«Ահա իմ ձեռս է լինել քս բըռնաւոր.
«Բայց ես ընտրեմ քեզ հայր լինել հարազատ,
«Հայր եարդկութեան մի ազատ»:

Եւ սուր աչուին ձըգեալ յերկիրն այն անհուն՝
Փոչեց Հըսկայն, «Ե՛լ աշխարհ յազատութիւն».—
Լերինք եւ ծովք սրտացին ի թընդին,
«Ե՛լ աշխարհ յազատութիւն»...

(*) Ազգային աշակերտութիւն եւ որ ցարդ կը պատ-
մուի ի քերական քնակչաց Հայոց ձորոյ:

Բնութիւն անդէն իբրու թէ նոր նորոզէր՝
Զըւարթացաւ քան ի գարուն կենսաբեր,
Եւ սիրտք մարդկան նոր շունչ տուալ յորդառատ
Եւ գոչէին «Ե՛մ, ազա՛տ»:

Եւ հաշտութեան կամարն ի գլուխ անդ Մասեաց
Եօթնաճաճանչ ել եւ ըզչող արձակեաց.
Արեւ, լուսին քօնեցին զօր պանծալի
Ազատութեան աշխարհի:

Իսկ ինքն Հայրն ազատութեան աշխարհի՝
Ի փառաց այն բարձրութենէն գերարիլի՝
Յօր ս'չ յառաջ ս'չ յետոյ, ք մահացուաց
Երբէք հասնել ժամանեաց:

Յայն երկնամերձ գահաւանդէն ի խոնարհ
Վըսեմափայլ յօնօք նայէր ընդ աշխարհ,
Եւ ի վեհին ակնարկութիւն եւ ժըպիտ
Փայլակք ընկան խիտ առ խիտ:
Ամպ լուսավառ շուրջ ըզ Հըսկայն պարփակեց,
Ազատութեան Ողին ըզնա պըսակեց.
Նա՛վերջին մ'ալ ի Հայաստան նայեցաւ...
Յանմահութիւն ծածկեցաւ:

Բ

Ո՛վ հայրդ Հայոյ, Երբ յերկնակէտ քոց աստեղաց
Ըզյօնս շարժեալ լուսաղագեաց,
Եւ սըրտաթունդ ի վայր նայիս դու յայն երկիր
Զոր քս նետով փըրկեցիր.
Տեսնես ըզձորն—Հայոց՝ փառացի հանդիսարան,

Բեկեանցն ռախց արդ կոխան...
 Տեանես զանյաղթ ձեռացդ ըզգործ կուռ Հայկաչէն
 Յերկիր Կործան ի բաղդէն.
 Տեանես որդւոց քոյոց ի ձեռս՝ ո՛չ նեա սուսեր,
 Այլ ժանգածս՛ր շըղթաներ...
 Տեանես զազատ որդիսդ՝ անկեալ բազմաարխուր
 Որդւոց Քամայ առաթուր...
 Հայր, ի՛նչ արդեօք ըզգայ քո զի՛նչ սիրա որդեսեր
 Յայտչափ աղէա ցաւոց մեր,
 Յայտչափս անեղ թըշուառութիւն բազմադարեան
 Յոր կորընչի՛ Հայաստան...
 Եւ զի՛նչ ասես, Հայր, ապերախտ այն մարդկու թեան
 Թր երախտեացդ անբաւ՝ փոխան,
 Ըզքս զաշխարհ՝ զազատութեան բուն խանձարուր՝
 Ի գերութեան՝ արկ յանուր:



021

ԵՐԳ Գ.



Ա Ր Ա Մ

«Այր հայրենասեր»,
 Մ. ԽՈՐԾՆ



Ա

«Դեռ չէ՛ ծանօթ մեր Հայ անուն,
 «Դեռ չէ՛ ծանօթ Հայ քաջութիւն.
 «Երթամք հայեր, սովրեցընեմք
 «Որ դիւցազանց մեք որդիք եմք:

«Աշխարհ մոռցեր է վեհ լեզուն
 «Ձոր սովրեցուց Աստուած մարդուն,
 Աշխարհ մոռցեր մեր Նախահայր
 «Որ իւր եղաւ ազատարար.

«Առէ՛ք աղեղ, սուր եւ նիզակ,
 «Ծաւալեցէ՛ք վիշապ դրօշակ, (*)
 «Գունդ գունդ ելէք եւ ռազմ ի ռազմ,
 «Շեփոր զարկէք ի պատերա՛զմ»:

(*) Հայկազանց նշանն եր վիշապ:
 Սուսերէ Հայկակաւն



Բ

Գոչեց Արամ, — եւ գունդադունդ վազեցին
Որդիք Հայկայ ի ձայն քաջայ այն քաջին,
Արօրն ու խոփ թափեցան դէզ դէզ ի կրակ,
Եւ շանթաթոպ պսոթկացին սուր, տէգ, նիզակ:

Հայոց դաշտեր որ քան զերկու երկայն դար
Ըզարինդ հովուին լսկ լրսէին հեշտարար,
Յանկարծ ի շոխնդ մարտագոռոջ շեփօրին
Դըղըրդեցան ձորք եւ հովիտք թընդացին:

Փայլուն պողպատ զըրաններէն 'ւ ի զինուց
Ասես՝ կայծակք թափին ի սեւ սեւ ամպուց,
Եւ երբ Հայ գունդք նիզակածօձ գընային՝
Կարծես անտառք ի շարժ ելեալ խաղային:

Տեսէ՛ք ի՛նչպէս աչքեր ցոյան Հայկազանց,
Եռան բազուկք արօփին թընդան սիրտք անսանձ,
Ո՞վ հաւատայ թէ դեռ զինուորքն այն ի խաղժ
Առջի՛ անգամն է որ գընան պատերազմ:

Ո՞վ հայրենեաց սէր, ի՛նչպէս ես զօրաւոր,
Որ զամենայն յոր մօտենաս՝ փոխես նոր,
Դու երկրագործ աղբ մը վառես վեհ յաւիւն,
Եւ զազգ ընկճեալ՝ յանկարծ փոխես դիւցազուն:

Երէկ դեռ Հայն թըրջէր քըրտամբք իւր արտեր,
Երէկ դեռ Հայն բըռնաւորաց տակ հեծէր,
Եւ անա խրոխտ յանկարծ ճակատ ամբառնայ,
Եւ բըռնաւորք իւր դողացին՝ ակամոյ:

Վազեց նիւքար, խըմբեց բանակ առ բանակ,
Հայոց թափոյն դէմ խիզախել ամբարտակ.
Բայց ո՞վ կարող ճընչել ըզսէր հայրենեաց՝
Ո՞ր զէնք յաղթել բաւէ ուժոյն երկնազգեաց:

Մի Հայուն դէմ՝ բիւր Մեղացիք կանգնեցան,
Բիւր Մեղացիք մի Հայ բազկէ հընձեցան.
Անմիտք, նոցա էր առաջնորդ բըռնութիւն,
Հայոց վառող սըրտից սուրբ Ազատութիւն:

Ազատութիւն գոչեցին Հայք դոռալով,
Զտաքերն ի գլուխ բըռնաւորաց դոփելով...
Անոյշ քամի ըզգրօջն Հայոց ծածանէր,
Ազատութեան ձայն լեռնէ լեռ ծաւալէր:

Հայ արձագանգք որ ընդ զինուց շառույճան
Մոռցեր էին եւ ըզըրինդն յաղթութեան,
ԸզՀայ երկնից գըմբէթն ի թունդ հանէին,
Եւ չօրս գետոց Դրախտին ըզլուր տանէին:

Մեծ աւետիսն հասաւ ի պերճ Արմաւիր,
Ուր սիրտք հարսանց ու մարց յերկիւղ յուսալիր
Ըսպատէին յիւրեանց փեսայն եւ յորդին,
Եւ ասէին. «Արդեօք դատնա՞յր սիրելին»:

Եւ սիրելիքն Արմէնուհեաց դառնային,
Նոր յաղթութեան երգս ոգելով խընդագին,
Եւ թշնամեաց գաւարն օսկի՛ եւ զարծաթ
Բերէին յտըս սիրունեաց խանդակաթ:

Եւ սիրունիքըն վաղեցին ընդ առաջ.

Յրմենակայ սօսեայ (*) ճիւղերըն կանաչ
Փափկիկ գըրկօք բարձած բերեայ են պըստի,
Քաջայն Հայոց պատել ըզգլուխ եւ նիզակ:

Մեծ էր այն տօն եւ բերկրութեան աղաղակ,
Զի առաջին էր այն Հայոց յազթանակ.
Զի առաջին այն օր Հայեր մըանէին
Յազգաց քաջայ եւ ազատաց ի կարգին:

Եւ տիեզերք՝ ա՛ն եւ զարմանք ի սըրտին՝
«Ո՞վ է այս ազգ՝ ո՞վ են այս քաջք հարցուցին,
«Ո՞վ է այս ազգ, որ դեռ երկ կեայր անշուք,
«Այսօր յանկարծ ելին անյա՛ղթ զիւրազունք»:

Գ

— Սոքա որդիք են Արամայ,
Պատասխանէր Մեղացին,
Սոքա որդիք են այն քաջին
Որ զմեզ՝ զընկճողքս՝ ընկճեաց գերի.
Եւ ըզհրտեայն մեր մեծ Նիւքար
Շամիրեց նա սղջ սղջ յիւր նիզակ,
Եւ յազթութեան իւր նըշաւակ
Քամեց գոռոզ նա յԱրմաւիր:

(*) Արմենակ ևսահայէսը Արմաւրի մօտ սօսեաց
անստն մը սնկեղ տուած էր, ուր ևսահայի Հայկա-
գունի իրենց կրօնական պաշտամունքը կը կատարէին
ու հնայս հնայէին: Այս ևսահայի սօսեաց ուսե-
րով կը պատկերէ Նահապետի գգնուխ քաջացն Հայոց:

— Սոքա որդիք են Արամայ,
Պատասխանէր Ասորին,
Սոքա որդիք են այն Քաջին
Որ զմեր ըրաւ ազգ անորդի,
Ու զմեր անեղ աստուած Բարչամ
Մէկ հարուածով հար սատակեց,
Շանց կերակուր ըզղին նետեց
Եւ ըզհոգին ի սեւ գլծոխք:

— Սոքա որդիք են Արամայ,
Պատասխանէր Միջերկրեայն,
Սոքա որդիք են քաջին այն
Որ զմեզ հրնձեց իրրե ըզխոտ.
Եւ Պայտալիս հուժկու արտան
Ի տես Վեհին այն սարսափաւ՝
Հազիւ ծովուն ի ժայռս փախաւ,
Զերդ յառիւժէն տայ խոյս այծեամ:

— Սոքա որդիք են Արամայ,
Պատասխանէր Պոնապցին,
Սոքա որդիք են այն քաջին
Զոր մեր հայրեր ոչ գիտացին.
Եկաւ փըրկեց սա իւր սըրով
Բընաւորաց ըզմեզ ձեռքէն.
Կապաղովկիոյ ետ բարս 'ւ օրէն,
Եւ ըզկըրթիչ Հայոց լեզուն:

— Սոքա որդիք են Արամայ,
Պատասխանէր Բելորդին,
Սոքա որդիք են այն Քաջին

Յորմէ դողաց մեծ մեր Նինոս,
 Պըսակ զըրկեց իրեն ընծայ,
 Զի մի՛ գուցէ նա կուռ սըրով
 Ըզթագ գըլխոյն պահանջելով,
 Ըզկեանս ընդ թագն յափըշտակէր:

— Սոքա որդի՛ք են Արամայ,
 Պատասխանեն դողադին,
 Սոքա որդի՛ք են հըսկային
 Ում փոքր եկաւ մե՛ծն Հալատան.
 Զարկաւ փըլցուց լեռներն ու ժայռ,
 Անցաւ սուրաց, եւ գոհգն հուժկու
 Տընկեց յեզերս անդ Սեւ ծովու,
 Գոչեց. «Ա՛յս է Հայոց սահման»:

Դ


Այո՛, քո որդի՛ք եմք ազատերամ,
 Ո՛վ հայր հայրենեաց զիւցայա՛դթ Արամ,
 Այո՛ քո որդի՛ք, եւ ըզգամք իսկ բուն
 Թէ քանի՛ պարծանք է մեզ քոյդ Անուն:

Ըզգամք թէ զո՛ր պարտք որդւոցըս վերայ
 Արկանէ անուն քոյին զիւցազնեայ.
 Ըզգամք որ թէ քո ժառանգեմք ըզփառս,
 Հա՛րկ է ժառանգեմք եւ ըզՎե՛ն՝ քո բարս:

Հա՛րկ է որ քո՛ պէս սիրեմք մեր լեղուն,
 Եւ տամք պատկառելի մեր վե՛ն՝ Անուն...
 Հա՛րկ է որ քո՛ պէս սիրեմք Հայրենիս,
 Եւ նըմա՛ զոհեմք ըզկեանս եւ զոգիս...

Զի մի՛ երբ օտար ազգեր չըրջակայ
 Կոչեն դեռ ըզմեզ «Որդիս Արամայ,
 Դու յամպոց բարձանց հայիս մեր վերայ՝
 Եւ գոչես. «Որդի՛ք... չգիտեմ ըզդոսայ»:

ԵՐԳ Դ.



Ա Ր Ա Գ Ե Ղ Ե Յ Ի Կ

ԵՒ

Ն Ա Ի Ա Ր Գ



Ա

Արեւն էր ծագել, արեւ հայկական,
Կարմրուկ ցոլքերով նորահաս գարնան,
Մասիսու զարկեր ճակտին ըսպիտակ
Ու շուրջ կը պատէր վարդաճոյլ պըսակ:

Թըռչնոց արթընցան երգեր քաղցրոյր,
Ու լըցին լըռիկ դաշտերն ու ծործոր,
Ծաղկունք վերուցին աչեր ցողալից,
Ու ծաւալեցին բոյրեր խնկալից:

Արամենակայ սօսեաց ծայրերէն՝
Անուշակ քամին անցաւ հեղօրէն,
Երասխայ ջրերն իջաւ պըսպըղուն
Ու գըլտորարկեց ալիս ծրփծրփուն:—

Այն նըւիրատունկ ծառոցն ի սաղարթ
Ըզբբս իւր յառեր պարման մի գուարթ

Մըտիկ դըներ զինչ սըլուըլան սօսիք՝
Եւ զինչ պատասխան տան գետոյն ալիք:

Գլուխն ականակուռ դըրած սաղաւարտ,
Եւ լանջ կը փայլէր ի զրահ բաղմամարտ,
Հըզօր յաջն ուներ տէգ մի զինչ գերան,
Ու մէջքն էր կապել ըզթուր ընդ մահուան:

Հանց աղեղ լարած թուխ լայն լայն յօնքեր,
Ճակատուն հովտին կարծես ցանկ պատեր,
Ու գոռւզ հոպոպիք ոյրելով սեւ սեւ՝
Կը ծըփան մարմար վըզին ծաղկածեւ:

Իսկ երբ բոցափայլ աչուին եռանդնոտ
Վեր առած հայէր յարփին անաղօտ,
Կարծես դէմ ընդդէմ յերկիր եւ յերկին
Զոյգ մի արեւներ յիրար պըշնուին:—

Այն Քաջին ուսոց կըթընած քընքուշ
Կին մի ահանըւէր քան շուշանն անուշ,
Ինչպէս ձիւնաթոյր հեղիկ աղաւնի,
Թեւերն ամիտփած լոյնին քով թասի:

Արշալոյսն երբ գայ այդուց ցողազարդ
Ոչ այնպէս փափկիկ ճակատն ունի վարդ,
Ինչպէս նէրա սուրբ այտերուն վերան՝
Բոսոր ու ճերմակ վարդեր կը ցոլան:

Կաղոյտ աչուընեքն՝ են ջինջ աւելի՛
Քան թէ այն դարնան մաքուր դէմք երկնի՛

Ոչ չըկայ քըրքում մի ա՛յնպէս սիրուն՝
Որ նորա յաղթէ ոսկի մազերուն:

Չէ, նա՛ մահացու կարծես թէ չէ՛ր կի՛ն,
Այլ երկնաբընակ հրեշտակն էր քաջին,
Որ կընոջ առել գողարիկ կերպարանք,
Հոյս տալ աչքերուն, սըրտին՝ ըստփանք:

— Անուշակ քամին իջաւ մէյմըն այլ
Եւ ծածանեցան ծամերն ոսկեփայլ,
Ու երկու կաթիլ այն ծաւի աչքէն
Ընկան ինչպէս շիթք ցօղոյ կրկընքէն:

Լըռեցին թռչունք, եւ սօսեաց քընքչանք
Լըռեցին կարկաջք, սոյլ եւ արձագանգք.
Կարծես թէ ընութիւն լըսել փափաքէր՝
Այն վեհ տարփածուաց ա՛ն վերջին խօսքեր:

Բ

Քաջն Արա ասէր.

«Նուվարդ, ո՛ն, տեսն՞ր

Ի՞նչպէս ըզզլուիս շարժեն սօսիներ
Հայոց դիւցազանց են այն ըստուերներ՝
Որ ջուրքք Երասխայ կուտան ինձ հրաւէր:

«Նուվարդ, ես կ'երթամ, բայց քեզի՛ համար.
Հրեշտակ իմ անուշ, մի՛ դու ո՛ն, մի՛ լար...
Քո սէրդ է անբիծ առաջնորդող զիս,
Ու սէ՛րդ այլ ես հետ կը տանիմ սըրտիս:

«Նուվարդ, թէ չ'երթամ մահուան դիմադրաւ,
Թէ ես չըվազեմ թուր ձեռքս ինքնարշաւ,
Չէ՛, Արայդ չ'ըլլար քեզի արժանի,
Ո՛չ վըսեմ սըբաիդ՝ ո՛չ այս արցունքի...»

«Նուվարդ, ո՛ն, մի՛ լար. թէ կ'ուզէ երկին
Որ Արա մեռնի այս պատերազմին,
Արայի արիւն սէրըդ չի՛ մարեր,
Այլ կարմրուկ կընիք՝ դընէ ի սէր մեր:

«Թո՛ղ, հրեշտակս, երթամ... պարտքս լընում արդ:
Քեզ չեմ լըքաներ, քովդ եմ ես, Նուվարդ.
Երկընքէն կ'իջնեմ սիրաբղ յողույս թեւ,
Ինչպէս ցօղն անուշ ի վարդին տերեւ:

«Ու թէ սր չ'ըլլաս յաշխարհ բարերաստ՝
Ըզձաս բընակցիմք յերկնից առաքաստ՝
Թեւ թեւի կուտամք ու սրանամք ի վեր՝
Չինչ երկաւ ծողկանց այգասփիւռ հօտեր...»

— Անուշակ քամին իջաւ մէյմըն այլ՝
Ծըփեցան հարսին հոպօսը ոսկեփայլ,
Կապոյտ աչքերէն արցունք շիտ առ շիտ
Ի ծոց փեսային թափթըփին մարգրիտ:

Հուռ կային թըռչունք սօսեաց յոստ կանաչ,
Հուռ կացել Երասխ, արգիլեր կարկաչ.
Միայն Արայի կըլըսվին դգուանք,
Ու քընքուշ հարսին աըխսէր հեծկըտանք:

Գ.

Եւ նուզարդ ասէր .

«Ո՛վ Արա, Յրայ,

Թող յետին անգամ ամուսինըդ լայ .
Թըշուա՞ն ամուսին՝ յորոյ քեզ ծոցէն
Երկին եւ երկիր նախանձով խըլեն . . .

«Եւ ինչպէս չըլամ՝ որ իմ արշալոյս
Դարձաւ արդ գիշեր ու կըմարի՛ յոյս . . .
Արա՛, դու կ'երթա՞ս, շուզես որ վերջին
Վերջին արցունքս այլ տանիս ի յերկին :

«Ո՛հ, դու ինձ համար, փեսայդ գիւցաղուն,
Կը զոհես թագեր ու կենաց գարուն . . .
Ես ինչ տամ քեզի փոխարէն, Արայ,
Որ ա՛յսքան սիրոյդ արժանի ըլլայ . . . —

Սէ՛ր միայն, գոչեց Արայն գեղեցիկ,
«— Սէ՛ր միայն, նուզարդ, ինձ սո՛ւր յիշեցիք .
Ես գո՛հ, ո՛վ հրեշտակս, գո՛հ ես կը մեռնիմ
Թէ գիտնամ մընալդ ինձ հաւատարիմ :

«Թէ գիտնամ՝ որ իմ գերեզման, նուզարդ,
Պիտի չըմընայ անուք եւ անվարդ .
Չոր հողն իմ թըրջի սիրոյդ արցունքով,
Սառ քսո՛րն իմ ջեռնու սիրո՛յդ համբուրով . . . » —

Անուշաի քամին իջաւ մէյմըն այլ՝
Ծըփեցան հարսին գանգուրք սսկեփայլ .

Ծաւի աչքերէն արցունք կաթկաթին,
Ինչպէս այգուն ցող ի թերթեր վաշղին :

Լուռ կային թըռչունք, եւ երասխ լըռեաց .
Միայն թէ սոխակն անտառին սուսեաց՝
Երբեմն արձագանգ կուտայր տըխրագին
Վերջին հեծաթեանց հարսն ու փեսային :

Գ.

Սրբեն երկնից անդ բարձրացել ի կամար,
Կըլա՛յ ու բոց յերկրին երես կը տեղար,
Ամենայն ինչ վառել էր յիւր ջերմութիւն,
Ու տոտըւանն էր մարել զով լըռութիւն :

Յ'Արարատայ կանաչագեղ դաշտորայս
Երկաթագէն ծածանին զօրք ընդ ըսպայս,
Ինչպէս հասուն ցորենի արտ սսկեջով՝
Յանկարծ ծածկի սեւ մարախին գունդերով :

Քամին իջեր Մասեաց մըռայլ սարերէն,
Կը մըռընչէր սաւառնացեալ դրօշներէն,
Յորս էր նախշուն Շամիրամայ Աղաւնին (*)
Եւ Ասորի ձայնք աղխաղուր հընչէին :

(*) Յոյն Պատմագիրք կ'աւանդեն թէ Շամիրամ
իւր դրօշակաց վրայ ի եջաւ իւր անուան Աղաւնի մը
նկարեղ տուաւ, զոր ինքնակալի Ասորեստանեայց պա-
հեցին :

Ձայն զիւաշունչ բարբառ առջի անգամ էր
Որ Երասխայ լրձիկ հովիտ կըլքսէր .
Ու այն նախկին էր որ լեզինք հայկականք
Ասորեստան զինուց տային արձագանգ :

Այն սեւաբունդ զօրքերու գլուխն էր անցած
Կին մ'արուեստիպ թագով իւր հերք պըսակած .
Բանակն սղջոյն զողայր ի մուռնչ իւր անեղ,
Աչուըններէն ցոլայր վըրէս բոցանեղ :

Ինչպէս մի գետ որ լեռներէն սուրալով
Կատաղութեամբ կ'իջնէ դաշտեր աւրելով,
Այսպէս եւ սիրտ նէրա լըցուած սեւ սիրով
Գայր նինուէէ Արայի վրայ վըրփրալով :

Գոչեր. «Թէ այն անգութ Արա գեղեցիկ
Չ'ուզեց լըսել իմ սիրալիր ձայն հեզիկ
Թող արդ լըսէ զինուց իմ ձայն մահարեր,
'Ի երկիւղ շարժէ զսիրտ իւր՝ թէ ոչ շարժէ սէր :

«Քաջեր, անա երկիրն Հայոց բաղմածօխ,
Չեզի աւար առէ՛ք, թափէք հին ձեր զօխ .
Իսձ պահեցէք միայն Արայն գեղեցիկ,
Արայի սիրտ լոկ զիս կընէ երջանիկ» : —

Երբ Շամիրամ Արա անուն կը հընչէր՝
Սիրոյ կըրակ մը լըպիրշ այաքըն վառէր,
Սիրաը թունդ թունդ կ'եղեր կ'իջներ ծուփ ի ծուփ
Ինչպէս ծովուն ջուր հողմալար շուփ ի շուփ :

Անա հասեալ նորա՛ յերկիր, նորա՛ մօտ,
Ու աւելի՛ այլ բորբոքէր ի կարօտ,
Չէր գիտէր ե՞րբ այն ցանկալին ժամ համնէր՝
Որ սիրան ի սիրտ իւր սիրելւոյն բարախէր . . .

— Չէ՛, Շամիրամ, խաբէ՛ քեզ յոյս քո եւ զէն,
Քո պիղծ շըրթունք՝ նորա շըրթանց համար չէն .
Սէ՛ր նորա սուրբ՝ արձաթախայ ջինջ առուակ,
Ի՞նչպէս սըրաիդ լըցվի ի խորշ սեյտտակ :

Պիտի տեսնեն ըզնորա դէմք գեղեցիկ,
Բայց դալկահար՝ ինչպէ՛ս չիրմացըն ծաղիկ .
Պիտի տեսնեն եւ զայն աչեր սեւ ու սեւ,
Բայց երբ մահուան յայն տարածի հոլաթիւ :

Պիտի եւ սիրան այն շօշափես, սիրտ զըւարթ,
Բայց ինչպէս յանկարծ ի սառոյց պատեալ վարդ .
Տի չըարօփէ նա քո սըրտին դուժ սիրով .
Ու սէր նորա պիտի չըտայ սըրտիդ զով :

Այն մաքրակէզ սիրտ եւ շըրթունք եւ աչեր՝
Ուրիշ կընոջ հարըստութիւն եւ զա՛րդն էր .
Նէրա զըրկէն զայն խըլեցեր, անգո՛ւթ կին,
Ա՛ն եւ խընդա՛ . . . Ի՞նչ է առածդ : ցո՛ւրա մարմին :

Ն

Իրիզունն էր եկել, արեւ ի մար մըտած,
Վերջին մըն ալ կը բարեւէր ըզգլուխ Մասեաց,
Որ աըխրագին կը տարածէր իւր ըստուերներ
Ձերթ դազալին ծածկոյթ ձորերն ու հովիտներ :

Արարատայ դաշտ խընկարոյր՝ որ յառաւօտ՝
Կարմրուկ 'ւ սակի ծաղկօք խայտայր կանաչ յարօտ,
Արդ ողողած արեան գետովք էր անաւոր,
Ու ծածկըված զինուք զիօք կոտոր կոտոր:

Հոն որ թըռչնոց կըլըսվէր նախ հեշտ ճըռուընչիւն՝
Վիրաւորաց արդ կընընչէր ի թառաչիւն...
Ապա եւ այն դադարեցան ճիչք, մըրմօւնջք, ա՛ն,
Ու ծայրէ ծայր թաղաւորեց լըռութեամբ մահ:

Այլ որպէս կռինչ տըխուր բուեն սեւագուշակ
Որ ընդհատէ գիշերն ի մռունչ իւր սառնորակ,
Երբէք երբէք հառաչանաց լըսվէր մի ձայն. =
Շամիրամայ սէգ թագուհւոյն տըրտմն էր տյն:

Յոսկի դանոյս զըրած մարմինն էր Արայի՝
Ու ծիրանեաւ շուրջ պարփակեալ քաջն արքայի.
Խունկ եւ հարուէք բուրնն ծըխեն հոն բարդ ի բարդ,
Աստուածաբար պատուել զայն վե՛հ երիտասարդ:

Ահա գիմացն իւր գեղեցիկն այն զիւցաղուն՝
Որոյ սիրով նէ չըգիտէր հանգիստ եւ քուն.
Եւ թէպէտ արդ՝ իբր ըզկոտրած անկեալ շուշան,
Բայց եւ կոտրածն իսկ այն շուշան՝ էր աննըման:

Գըլխուն պըսակ նետեր գետին հէգ Շամիրամ,
Մաղ կը փետէր, կ'անիծէր զօրն այն եւ ըզժամ
Յօր վառեցաւ ի սէր անբիծն իւր Արայի,
Սէր՝ որ թըշուառ ըզնէ ըբաւ, որբ եւ այրի...:

— Բայց Արայի հոգին զըլարթ յամպ լուսահրատ՝
Երբ իւր մարմնոյն քով լըսեց ողբն այն յուսանատ,
Եւ ըզվաւաչ տեսաւ դըշխոյն՝ քըսամընեցաւ...:
Բացաւ թեւերն ու վեր յերկինըս սըլացաւ:

Զ

Գիշերուան մութն հասաւ խաւար թեւերով,
Ու մառախուղ երկնից երես պատելով,
Արարատայ մտնու դաշտին տեսարան
Ծածկեց որ մի յայն Հայ աստղեր թալկանան:

Հով մը փըրթաւ յանկարծ ամպոց խորերէն,
Իջաւ անցաւ սօսեաց ծըփուն ծայրերէն,
Եւ շառաչմունք անեղալուր հընչեցին,
Կարծես թէ մռունչք ուրուականաց լըսվէին:

Եւ Երասխայ անդուստ ալիք փըրփրելով,
Սօսեաց կարծես թէ պատասխան առնելով,
Լալահառաչ գընան որ զգոյժ այն օրուան
Տանին բոյր հառաչեցնեն Հայաստան:

Ո՛չ. — տակաւին այնպէս տըխուր մի գիշեր
Մեր Հայրենեաց վերայ երբէք չէր պատեր.
Դեռ աղետից՝ էր անսովոր Հայաստան,
Որ իւր բաժի՛ն պիտի լինէր անբաժան:

Խեղճ Հայաստան, այն օրուընէ մինչ ի մեր
Քանի՛ քանի անգամ տեսաւ իւր դաշտեր,
Ձոր, գետ, լեռներ ծածկած յորդուոց իւր մարմին...
Ո՛րչափ լացաւ... լայ... եւ տի լա՛յտակաւին...:

Սառերբ Հայկական

Է

Բայց ո՞վ է նա որ՝ հեռուն կ'երեւի,
Մահու դաշտին մէջ՝ զերդ շուք յերերի.
Արդեօք նա կենաց հրեշտակ լուսարոց,
Որ ըզյարութիւն գայ տալ մեռելոց:

—Արային է նէ այրի ամուսին,
Դէմքն է շողչողուն հանց գարնան լուսին.
Այլ ո՞հ, լուսնի պէս արխուր եւ թօնուտ,
Եւ յարցունք լըյլած են աչք իւր կապուտ:

Թէպէտ զիականց նէ ման գայ միջով,
Սակայն աներկիւղ թըւի՝ ւ անխրոով.
Սէր՝ իւր կանացի սըրտէն վախ մերժեր,
Ու մեռելոց մէջ է զինքն իջուցեր:

Թողեալ զարքունիս եւ ըզքունն անոյշ
Փայր յԱրմուիրայ ոտիւքըն քընքոյշ.
Փայր որ գանձկալին իւր փընտուէ Արա,
Զի զիշերն եկաւ՝ եւ ո՞չ դառնայր նա:

Ասել էր. «Զինուց լըտեցին ձայներ,
«Ըզձայն սիրելոյս ինչո՞ւ չեմ լըսեր,
«Թընչունք ամենայն դարձեր են ի բոյն,
«Արծիւն իմ ինչո՞ւ ոչ ի զիրկ սիրոյն...»

Ասեր ու թողեր պալատ վըշտակիր,
Մահու դաշտն իջեր սըրտով մահակիր.
Ու ծաւի բըրայ արցունք միշտ սրբէր
Որ տեսնէ հեռուանց զիւր ցանկալին սէր:

«Արա՛, նէ գոչէր. Արա, ո՞հ, ո՞ւր ես...»
Եւ խոր արձագանգն որ կըրկնէր «Ո՞ւր ես...»
Կարծես տարփելոյն անուշիկ ձայնն էր,
Որ իրեն զիմաց կըրկնէր ըզհրաւէր:

Ը

Այն պահուն կ'եյնէր ամպերէ լուսին,
Կարծեց Արա՛յի թէ անն էր հոգին.
«Արա՛, մընչեց, ո՞հ, Արա, իմ քով չե՛ս.
Արա՛, դու յերկին, յերկիր մինակ ե՛ս...»

«Ա՛հ, այս առաջին գիշեր, առաջին
Յոր հոգւո՛յս հատոր, այրի՛ է քո կին.
Առաջին գիշեր անվե՛րջ ցաւերոյս,
Առաջին գիշեր որ ինձ չըկա՛յ լոյս:

«Քւր դու իմ մօտ չես՝ աղբիւր եմ պատուք,
Ուր դու իմ քով չես՝ դաշտ եմ ուր չի՛ք շուք.
Երբ ես միայն եմ՝ ծաղի՛կ եմ անբոյր,
Դո՛ւ էիր իմ ջուր, ըստուեր, խունկ եւ թոյր...»

Արա՛, դու երբ որ սըրացօր յեթեր՝
Ո՞չ հեա քո տարիւր եւ մեր թըշուառ սէր.
Արա՛, դու զիմ սիրտ քաղեցիր՝ Արա՛,
Ե՛րբ կ'առնուս 'ւ ոգիս, ո՞հ Արա՛, Արա...»—

Ու կըրկնեցին՝ բըլուրքն ու դաշտեր,
«Ո՞հ Արա՛, Արա՛...»

Եւ շունչ վերջին հարսին հեծեծէր
«Ո՛հ Արա՛, Արա՛...»

Թ

Այն ժամն երկընքի պատուեցան ամպեր,
Ու զոյգ մի փայլել ըսկըսան աստղեր.
Կ'ըսեն թէ մէկն է Արայն թագազարդ,
Միւս՝ աստղ սսկեհեր Հայ զըջխոյն Նուվարդ.




Ե Ր Գ Ե.



Ջ Ա Ր Մ Ա Յ Ր

ԵՒ

Շ Ո Ւ Շ Ա Ն



Ա

Հայաստանի արեւմտեան ծայրերու
Քանակ մ'է տանն հազար կանգներ քաջերու,
Աչք եւ զէնքեր կըփայլիլին բոցավառ
Յարեգական ճառագայթից նորավառ:

Արդեօք բանակ է գաղանաց խուժադուժ
Որ դան Հայոց վերայ զիւրեանց կըչսել ուժ.
Թէ՛ զՀայաստանն արդէն արեամբ հեղեղած,
Ճոխ աւարօք դառնան, վըրէժ կըչտացած:

—Ոչ. եռանդուն սոցա աչքեր չըցուար
Յոխ թըշնամի, եւ ձեռքերնին չիք աւար.
Դրօշն որ իրենց գըլխուն սըփուէ հովանի՝
Է վիշապն արփիաթեւ Հայաստանի:

Բ

Քաջերուն գըլտ խ անցել էր յառաջ
Վըսեմ հասակաւ դիւցազանց մէկ քաջ.

Որ ըզտիգազէն զաջ կարկառելով՝
Փառաց նոր ուղի ցոյց տայր անվրդով:

Յահիպարանոց էր բազմած նըժոյգ,
Հեծեալն եւ հեծող սխորտ համադոյգ.
Կարծես մին առ միւս կ'ազդէին խրախոյս
Վազել ի վըտանգ եւ փառաց ի լոյս:

Գըլխոյն արծուաթեւ ոսկի սաղաւարտ
Շողչոյլայր նորա յաներկիւղ ճակատ՝
Յոր սահէր կընճիւ աըխրութեան թեթեւ,
Զերգ լըճին յերես՝ ագուաւի մութ թեւ:

Եւ բիրն որ ըզբոց թափէր ի նայեաց՝
Երբեմն ըսքօղէր ի կաթիլ մի թաց,
Ինչպէս յամառուան ամպեր վազվազուկ
Ծածկի արեւուն ճառագայթ կարմրուկ:

Կեցաւ, մէյմըն ալ նայեցաւ ի վեր
Ի տապանակիր Մասեաց վեհ սարեր,
Ու սրբաէն թըռաւ մի բոց հառաչմունք,
Որպէս ի հոսբուխ լեռնէ կայծակունք:—

Ո՞վ էր այն կըտրիճ, ու ինչո՞ւ արգեօք
Սըրբաէն արձակէր զայն շունչ հրաբորբոք.
Ինչո՞ւ ճակատին վերայի ըստուեր,
Աչքերէն ինչո՞ւ արցունք կըսասէր:

Նա Հայաստանեայց էր Զարմայր իշխան,
Որ իւր քաջագունդ զօրօքն արամեան

Ըզգրօջ եւ ըզփառս Հայոց վեր առեր
Եւ ի հայրենեացն էր սահման իջեր:

Բայց ինչպէս ծիծառ ձըմբան համեկուն
Կըժողվէ ձագեր որ երթայ տաքուն,
Բիրն ու դողդոջուն կը դարձընէ թեւ,
Բոյնին իւր վերջին տալ աըխուր բարեւ:

Այսպէս եւ այն քաջ՝ գընդին հեռ մէկտեղ
Անցեր Հայաստանն, երբ հասեր այն տեղ
Որ դէմն՝ օտար դաշտք, ետին՝ հայրենիք,
Ու հայրենեաց հեռ՝ սըրբին սիրելիք:

Կարծես իւր ամէն նոր քայլ առնելուն
Սրբատուչ ըզձայն կըլըսէր նոցուն.
«Զարմայր, ո՞ւր կ'երթաս, ո՞ւր քաջօք այսքան,
«Ինչո՞ւ, եւ որո՞ւ թողուս Հայաստան...»:—

Կեցաւ նա, եւ զիւրն ըզլանջ անլեհեր
Որ այն առաջին անգամու արոփէր՝
Աջոյն իւր անեղ ոյժ աըլաւ ճընչեց,
Ու աչքին արցունք սըլաքաւ ջընջեց:

Մէյմ' ալ սիրելեաց բողոք ցաւագին
Հասաւ նորանոր յականջըս քաջին.
«Զարմայր, ո՞ւր կ'երթաս, որո՞ւ զՀայաստան,
«Որո՞ւ ըզքօ հարսըն թողուս Շուշան»:

Գ

«Զհարսն իմ Շուշան՝ թողում յԱստուած...»
Գոչեց յանկարծ սիրան այլայլած.

«Եւ զհայաստան՝ թողում Հայոց,
«Կարչնեղ բազկացն եւ հո՛ւր ոգւոց .

«Իսկ ես կ'երթամ ուր ի բարձանց
«Վարեն ըստուերք զիս զիւցազանց,
«Կ'երթամ ի վրէժ արդարութեան՝
«Որ ինձ քաշել սուր ետ հրաման :

«Կ'երթամ դրօշուք մեր աննրկուն
«Ըզհայութեան տանել զանուն,
«Եւ բարձրաճեմ յաշտ աշխարհի
«Կանգնել ըզմեր փառս հայրենի .

«Կ'երթամ ի մեր զինուց շըսինդ
«Հայոց լեզուին հանել տալ թինդ .
«Ի օտար երկնից ըզմեր անուանս
«Սովրեցընել եւ ըզպարձանս ,

«Կ'երթամ ի քէն ո՞հ, ես կ'երթամ,
«Բայց մեծափա՛ռ եւս այլ դառնամ,
«Որ պըսակաց յիմ ի դափնիք
«Պատեմ ճակատդ, ո՛վ Հայրենիք .

«Հա՛րսն իմ անուշ, քեզմէ կ'երթամ,
«Մի՛ լար, փութով գիրկըդ դառնամ .
«Ու երբ երեսս բացեալ ինձ ծոց՝
«Գըտնես անչէջ Զարմայրիդ բոց . . .

«Բարեա՛ւ կացէք, ո՛վ Հայաստան,
«Բարեա՛ւ մընա, հա՛րսն իմ Շուշան .

«Դառնամ, դառնամ նախ քան տարին,
«Թէ ոչ դարձայ՝ ելայ յերկին՝ . .

«Բարեա՛ւ կացէք լերինք Հայոց,
«Հովիտք եւ դա՛շտք իմ ծաղկածոց .
«Երասիս, Եփրատ, բարեա՛ւ կացէք,
«Դրախտին Հայոց միշտ ջուր սըւէք :

«Բարեա՛ւ մնացէք, ո՛վ իմ նախնեաց
«Շիրիմք՝ սակերքք ձեր կենսազգեաց,
«Եւ զքաջութիւն ոգւով ձեր սէգ
«Ի սիրտ որդւոյս ձեր թափեցէք :

«Բարեաւ մընա, իմ Հայաստան .
«Բարեա՛ւ մընա, քա՛ղցր իմ Շուշան .
.

Գ

Բայց քաջին սըրտէն յայտ անուն վերջին
Հառաչք հրատոչորք ըզձայն խեղդեցին,
Ու ձիոց ի դափր օտից անհամբեր,
Փոշին ամպի պէս դիզդիզեալ ի վեր ,

Ծածկեց այն զիւցազն իւր պարմանեաց հետ,
Մինչեւ հեռացաւ բանակն հետ ըզհետ .
Եւ դեռ լեռն ու ձոր հընչէր Հայոց ձայն,
«Ողջո՛յն քեզ՝ ողջո՛յն մայր մեր Հայաստան . . .»

Այն յետին անգամն ըզվերջին ողջոյն
Հայաստան լըսեց իւր այս քաջերոյն ,

Որոց քիչ գտյով լայն դաշտք Հայրենեաց՝
Յասպարէզ բազկի եւ սըրտին իւրեանց ,

Կ'երթային ծարաւք փառաց քան արեան ,
Կ'երթային անվախ յօտարին սահման ,
Որ եւ զօտարին ժողովեն պըսակ
Եւ իւրեաց անմահ թողուն յիշատակ :

Այո՛ , ընկալան պըսակս եւ համբաւ ,
Բայց ո՛ն , եւ ըզման յայն դաշտ հիւրադաւ .
Եւ ի դավնիդեայս իւրեանց ճակատին՝
Աւա՛ղ , Հայրենիք խընդալ չըկրցին :

Օտա՛ր երկնից տակ նոքա քաջացան ,
Օտա՛ր երկնից տակ հալեցան՝ ընկան ,
Ու խեղճ Հայաստան տամն հազար որդւոց
Եւ ո՛չ զոսկըրներ ժողովեց ի ծոց :

Իսկ օտա՛րն՝ սրոյ օգտին եւ յօճան
Ջէնք ու կեանք տըւին այն բիւրք հայկական ,
Օտարն , ո՛չ միայն չեղաւ շնորհակալ ,
Այլ եւ ո՛չ անուանքն է նոցին պահեալ :

Այն անե՛ղ կըռուին՝ ամէն քաջ իշխան
Ունեցաւ իրեն երգիչ՝ զովաբան ,
Ա՛ն , Զարմայր միայն եւ տա՛նն հազարեակ
Չ՛ունեցան եւ ո՛չ մի փո՛քր յիշատակ . . . :

Ո՞վ գիտցաւ թէ յայն խուռն ազգաց ժողով՝
Որ տարան իւրեանց զէնքեր Տրոյոյ քով ,

Եւ բիւր մի քաջ Հայք յասպարէզ իջին ,
Եւ յանուն Հայոց զաշխարհ սարսեցին :

Ո՞վ գիտաց երբէք թէ Հեկտորին հետ
Կայր քաջ քան զէաս , Աքիլլեայ հանգէտ՝
Որ բիւր յոյն քաջաց զարեւ իւաւրեց ,
Եւ յուզարկաւոր իւր շիրիմ նետեց :

Ո՛չ . զայն ո՛չ յիշեաց ոք եւ կամ գիտցաւ .
Եւ ո՛չ ոք յանուն Զարմայրի լացաւ .
Ո՛չ ոք Հայ վեհեց սակերաց վերայ
Բուռ մը հող ցանեց՝ գըթալով նոցայ . . . :

Հայեր , ե՞րբ պիտի ա՛ն դուք ե՛րբ սովրիք՝
Որ ձեր շունչ՝ միայն Հայրենեաց պարտիք . . .
Ի՛նչ միշտ աշխատիք ի փառս օտարին .
Օտարն՝ ոչ տայ քա՛ր մ'ալ ձեր սակերոտին . . . :

*
* *

Ե

Սակայն անցան օրեր , անցան ամիսներ ,
Լըցաւ տարին զոր էր Զարմայր խոստացեր .
Եւ թագուհին Հայոց ձիւնեանըն Շուշան
Վազեց զըրկել ըզփառաւքանչ իւր փեսան :

Հագեղ էր նէ սակեճաճուկ ծիրանի ,
Գըլուխն առած պըսակ ի քօղ վարդենի .
Խաժա՛կ աչքեր վառին սիրով եւ յուսով ,
Զի այն օր Քաջն իւր տի դառնայր իրեն քով :

Կեցաւ այն տեղ ուր ըզբարեւըն վերջին
 Տըւաւ Զարմայր ու ծածկեցաւ ի փոշին .
 Սիրան ի կարօտ եւ կէս յերկիւղ էր ի ծուփ ,
 Զեփիւսին մէջ ինչպէս վարդին ծաղկաթուփ :

Յանկարծ հեռուստ ականջն հասաւ դըզըրդիւն ,
 «Մէրս է , մընչեց , ա՛յս իւր քայլիցն է արօրիւն» .
 Ու գեղաթոյր այտք դեռահաս այն հարսին
 Իբր արշայոյս ծիրանեփայլ շողացին :

Յոյս իրեն թեւ տըւաւ , փութաց ընդ առաջ ,
 Բացաւ ծըղիս որ սիրելին գըրկէ Քաջ ,
 Եւ ըզճակատ նորա՝ այրած արեւէ՝
 Կապոյտ աչքին իւր ցօղերով զովացնէ :

Բայց յանկարծ ե՛տ ետ քաշուեցաւ դալկագոյն .
 Աւա՛ղ , առջեւն էր ոչ հատոր իւր հոգւոյն ,
 Այլ էր վըստամ՝ քաջ արքային զինակիր ,
 Որ դող ի դող գայր աչք խոնարհ ի յերկիր :

«Վըստամ , գոչեց հէգ թագուհին շընչասպառ .
 «Ո՛ւր է Զարմայր , Հայոց արեւ լուսափառ . . .»
 — «Զարմայր , կըրկնեց հեծեծելով պատանին ,
 «Իըշխո՛յդ Հայոց , ո՛ղջ լեր . . . արքայդ է . . . յերկին» :-

Կարծես թէ շանթ դարկած սըրտին՝ ընկաւ վայր ,
 Վարդ շըրթունքէն ելաւ միայն «Ա՛հ , Զարմայր . . .»
 Ընկաւ ինչպէս ի լըրթագոյն մանուշակ՝
 Որ յարեւուն թսուփ մարի բոց կըրակ :

Զ

Կ'ըսեն թէ Հայերն երբ երկրորդ օրին
 Եկան որ իրենց փընտուեն թագուհին ,
 Հոն՝ ուր փակեց աչք նազելին Շուշան՝
 Գեղաշող միայն մի ծաղիկ գըտան :

Թագուհւոյն ձիւնի պէս դէմքին նըման
 Ունէր նա սպիտակ շըղարշ լուսերփեան ,
 Եւ տերեւներուն անուշիկ բուրում
 Դըշխոյին մաքրիկ սըրտին էր բըզխում :

Իսկ ճակատին վերեւ մարգարտի ցօղեր՝
 Անշուշտ խեղճ հարսին վերջի արցունքն էր . . .
 Որով հեղափայլ ծաղիկն այն օրէն
 Ըզ Շուշան անուն առաւ դըշխոյէն :

*
* *

Հայեր , երբ ճերմակ զայն ծաղիկ տեսնէք ,
 Զըքնաղ թագուհին ձեր ի միտ բերէք .
 Ու գէթ ձեր աչքէն կաթիլ մ'ընդունին
 Զարմայր եւ նորա թըշուա՛ռ Ամուսին :



ԵՐԳ Զ.



Տ Ի Գ Ր Ա Ն Ո Ւ Հ Ի

Tu decus omne tuis.
VIRG: Ecl. V.



Ա

Գեղեցիկ էիր, ո՛ր Տիգրանունի,
Մեծափառ յերկրի քան ըզգիցունի՝
Ասիոյ լոյսը գեղանեաց ի հոյլ՝
Էիր զերդ լուսին յաղթող յաստեղց բոյլ՝

Զինչ գարնանափայլըն վարդ փաղաքուչ
Ծաւալէ ըզհոտ հովտին մէջ անուչ,
Այսպէս եւ գողարիկ ոգիդ իսկունի՝
Սըփռէր զիւր շընորհան ո՛ր Տիգրանունի՝

Հայոց աշխարհին չըքնաղ դու պարծանք,
Թագաւոր եզբօրդ սրբասլառ հրրճուանք,
Քո մօտ մոռանայր նա վիշա եւ ըզքիրտ,
Եւ սըրտէդ առնոյր մըխթար իւր սիրտ՝

Փափուկ խորհրդոց ոգին քո՛ խորան,
Անդ առանձնանայր եղբայր քո Տիգրան,

Եւ ի կուսանիդ շըրթանց սիրակաթ
Բըղխէին Հայոց պատգամք մեղր ու կաթ՝

Դու անդ յասպարէզ երկնից հայկական
Գեղեցկաճաճանչ հաշտից ծխածան .
Երբ երեւէիր բըբօքդ հեշտայոյս՝
Ոգիք Հայկազանց հրրճուէին ի յոյս՝

Քո ըսքանչելի գեղոյդ ի տարփանս՝
Ըզթագն Ասիոյ քեզ բէրին վարձանս,
Բայց դու անձկանօք հայրենի օդոց՝
[Վաղեցիր վակժոյժ քս եզբօր ի ծոց՝

Կոյս դացիր, դարձար դու Տիկնանց Տիկին,
Այլ անրիժ մնացեալ էր կոյս քս ոգին .
Ի գալ քո ա՛յնպէս խընդաց Հայաստան՝
Խնչպէս բընութիւն ի դառնալ գարնան՝

Ի կարօտագին համբոյր քս սիրոյ
Բաբախեաց ա՛յնչափ սիրտ վե՛հ եղբօր քոյ՝
Զի նոր մի խրախոյս ըզգաց ի ծոցուս,
Էջ ի պատերազմ, եւ ել դիւցազուն՝

Թէ դու ոչ էիր, ո՛ր քոյրդ աննրման՝
Հայաստան չ՛ունէր արդեօք զիւր Տիգրան .
Թէ դու ոչ էիր, ո՛ր Տիգրանունի,
Հայաստան լինէր օտարին գերի՝

Քո խորհրդաւոր չըքնաղ կերպարան՝
Իբր աստուածունէոյ ի հայ պատմութեան,

Պատկեր է քրնքուչ, ո՛ր Տիգրանուհի՛
Թէ զինչպէս պարտ է գոյ Արմենուհի:

Բ

Ո՛ր Արմենուհիք,
Գիտէ՞ք ինչո՞ւ այժմ Հայաստան
Ոչ եւս ունի զիւր քաջ Տիգրան:—

Ո՛ր Արմենուհիք,
Զի Հայաստան ոչ եւս ունի
Զիւր գողտր ու վեհ Տիգրանուհի...

Ո՛ր Արմենուհիք,
Զեր վեհ քրրոջ լերո՛ւք նըման,
Եւ զմեզ ըրէ՛ք մէն մի Տիգրան:

ԵՐԳ Է.

ՀՍՊԱՅՆ ՀԱՅՈՅ

Տ Ո Ր Ք

... ὄπον κράτος ἐστὶ μέγιστον
Πᾶσιν Κυκλώπεσσι.

ΟΔΥΣΣ. Παρωδ. Α. 70(*)

Սեւ ծով... չէ՛, միշտ փոթորկածուփոք ալիքներ
Զէ, միշտ ըզՀայ նըկուն գերի չ'են տեսեր...
Տեսեր, տեսեր են Հայ՛ս ազատ գոռալով
Քե՛զ անգամ, քե՛զ օրէնըս տալ՝ անզո՛ւսպ ծով:

Տեսեր դու շա՛տ անգամ Հայոց դէնքն ու թուր
Ըզթընամեաց արիւն ի քոյդ լըւալ ջուր,
Եւ շատ անգամ Հայոց յազթող երգ գոչիւն
Խառնըւեցան յալեացդ ա՛նեղ մըռընչիւն:

Քո պարեխից վերայ՝ զերդ ժայռ ի ժայռի՛
Տեսեր երբեմն Հայոց Հըսկայն վիթխարի,
Զոր երբ նաւազն հեռուանց դիտէր մըրմուգին՝
Փախչէր՝ սոսկմամբ, կարծէր ծովուցն է Ոգին:

(*)... Ոյր մեծագոյն է գորութիւն

Քան ըզքնաւ Կիկրոպայց:

ՀՈՄԵՐ. Ոգիս. Ա. 70

Ստուերի Հայկականի

4

Հայոց Հրակայն երբ թունդ ի դաշտ իջանէր՝
 Ի դիւցական դոփմանց երկիր տատանէր .
 Եւ մահացուաց ծրփէր ամէն սիրտ յերեք՝
 Արդեօք հիմունք երկրի կոծին տարուբեր :

Երբ նա գոչէր՝ կարծես թէ շանթ են յորոտ ,
 Եւ արձագանգ տային դըղորդ օչ ընդ օգ .
 Արծուիք ի թռիչքն թափէին պակուցմամբ ,
 Առիւծն ու վագր անշընչացան սարսափմամբ :

Եթէ յանկարծ՝ աչս ամելով բոցակէզ՝
 Հրակայն Հայոց կանգնէր հասակն երկնագէզ ,
 Մասիս , Կաւկաս պիչ պիչ հային նախանծորդ՝
 Զինչ այս շարժուն լեռ մեզ ընդդէմ ել ոխորտ :

Սէգ , հանդուրժէ ոչ խուժ ոչ պատ ոչ պատուար ,
 Իբր ըզփոշի փըշրէ զամէն դիր եւ տար .
 Խլէ արմատով կաղնիս , ջաղխէ առաթուր ,
 Թոպէ , քանցէ , գիզէ բըլուբս ի բըլուբ :

Ինք՝ մէն միայն՝ կ'եյնէ ընդդէմ բիւր գընդից ,
 Ինք՝ արհաւիրք է համախուժը հրակայից ,
 Աջ իւր հուժկու անջափ նեաից տայ տարափ՝
 Որչափ բանակք ամէն չ'բաւեն ի թօթափ :

Անցաւ ընդոստ՝ յերասիս , յեփրատ , լեռնէ լեռ ,
 Զարկաւ ջընչեց բոլոր Հայոց ստոխներ .
 Կայծակնայայտ դարձաւ յախունս Սեւ ծովուն ,
 Տարածեցաւ յապառաժից սարս ի քունս :

Արթընցաւ . . . նաւուց տեսաւ գումարտակ .
 Որ գայր սուրայր թափել յերկիրն ասպատակ .
 Արձանացաւ Հրակայն Հայոց եւ գոռաց ,
 Զինչ կարկտարեր ամպրոպ ի գլուխս անդ Մասեաց :

Երբ Հրակային մըռնչիւն նաւք լըսեցին՝
 Սարսափեցան , կարծեն տեսնել մահերնին .
 Առագաստից գոգ պարզեցին ուռուցիկ ,
 Ըշտապ խուճապ իբրև ի սեաւ փոթորիկ :

Կատաղեցաւ Տորք , դիզան հերք զերդ նետեր ,
 Յապառաժից յարձակեցաւ ի կողեր .
 Քանդեց զբրկեց ըզբըրրածեւ մի խարակ ,
 Թափ անդ արվաւ ու շեշտ պարսեց զինչ զընդակ :

Ետինդ ի շառաչ պատուեցաւ ծով Պոնտոս ,
 Փեռեկեան անդրնդոց վիշք լայնալիոս .
 Անհողմ անամպ՝ ծրփին կոճակք լեռնապէս՝
 Ինչպէս յամառն ի փոթորկաց անդ հանդէս :

Ճարճատին կայմք , ջաղխի ցընդի նաւաց գունդ ,
 Զէնք եւ զինուոր սուզին թափին գլոր յանդունդ ,
 Գընալ գուժել եւ վիրապացն այն խորոց
 Զոյժ անաւոր լազկի Սկային մեծ Հայոց , —

Զէ՛ , Սեւ ծով , չէ՛ . երերածուփդ ալիքներ
 Ոչ միշտ ըզՀայ նըկուն գերի չ'են տեսեր . . .
 Գոռա՛ Սեւ ծով , գոռա՛ ծրփա՛ մի՛ լըուեր ,
 Մինչև ի մուռնչ քո արթըննան իմ Հայեր :

Ե Ր Գ Ը.



ՎԵՐՁԻՆ ՀԱՅԿԱԶՆ

Honneur au courage
malheureux !

NAPOLÉON

Ա



Գիշերուան առել էր զերկին խաւար,
Ծածկէին լեռներն ու ձորք հաւասար.
Հայոց դաշտերուն՝ մահ ու սուգ տիրէր,
Եւ իբր անապատ ամենայն լըռէր:

Բարձրածայր սօսեաց սաղարթուց միջէն
Հոտ մահու առեր սոխակն ի բոյնէն,
Գող ի գող ըզձայնն էր քաղել անուշ,
Ու զարկեր թեւին զիւր ճըտիկ քրնքուշ:

Լուսնակն ամպէ յամպ փախչելով մըռայլ՝
Ըզարխուր զիմաց կ'ուզէր ծածկէ փայլ,
Որ մի՛ հայկական դաշտին տեսնէ սուգ,
Ու նըշոյն հասնի լոյս տալ յարասուրք:

Միայն պահ ընդ պահ մի խոր մըռնչիւն
Կըլըսվէր դաշտէն խառն ի խըզըրտիւն.
Կարծես հեռաւոր ծովու կոհակաց
Շառաչն էր փըշրած ժայսից եղերաց:

Եւ հովն որ քովի սարէն թաւալզլոր՝
Խառնէր հեծութեանց նըլազս անաւոր,
Կարծես արասուրաց՝ Է ողբոց էր Ոգին
Որ իջեր ու լայր յաղէաս աշխարհին:

Այս՛, աղետից անեղ սըզարեր
Հայաստան երկրին այն օրն էր ծագեր,
Մին օր՝ պանծալի դարուց երկասանեան
Հայկազանց փասաց ասաղունք մարեցան...

Բ

Պահ մը լուսինն ըզկիստփայլ ձրգեց քող,
Ու դայկահար ամպէն սահեց զիւրն ըզշող,
Ինչպէս վերայ սեւասըխուր դազաղին
Մահու լապտերն արծակէ լոյս մըթագին:

Այս ժամուն՝ դաշտն այն ահաւոր առաւ տես,
Ծայրէ ի ծայր դիակներով խառնաղէզ.
Ինչպէս ամասն Գողթան արտեր փըթթազարդ՝
Յօրայս նընձոց շեղճակուտեալ բարդ ի բարդ:

Սուր եւ տէգեր, ոսկի՛ Է երկաթ զըրահներ,
Վահանք ջախջախ, պարսպ ու լի կապարճներ,
Եւ ապաժոյժ արեանց լըճեր հոն դոնդող՝
Տըխուր մէկ փայլ առին լուսնին յայն ի շող:

Դիակներուն հոն ի բըլրակ մի շորթուն
Տեսնըվեցաւ յաղթահասակ զիւցողուն.
Որ ըզգըլտին ի վեր առաւ ծանրագին,
Եւ չօրս քովերը ման բերաւ ի դաշտին:

Այն դիտներն ոչց էր վերան տարածվեր՝
Իրեն ձեռքին հարուածներովն էր գիզեր,
Ու ինք կարծես յոգնած՝ հանգիտ հոն կ'աւանուր,
Ինչպէս հընձող հանգչի խոտոցն ի բլլուր:

Ապա աչերն ամեց Դիւցազն այն ի վեր,
Ու զասող Հայկայ յերկնից կամար կըփընտէր.
Բայց նա սըգոյ առեր ըզքող մի զիւրեւ,
Ու ծածկըվէր էր ի գիշերն այն ի սեւ:

Մըտիկ րրաւ, բայց այլ ինչ նա լըսեց ոչ՝
Քան մահամերձ Հայոց հառաչըս դողդոջ.
Ապա եւ ինք սըրտի վերջինն հեծութիւն՝
Իւր քաջերուն խառնեց մահու ի մընչիւն:

Գ

«Վահ իմ, գոչեց, քրսան հազար իմ քաջեր,
Այս օր սըրեմն յետին կընքեալ օր էր ձեր.
Այսօր թըշուառ թագաւորիս ձեր բազդին
Ձոն տալ ձեր կեանքին:

«Անա նըման այն մըշակին սըգազգեաց՝
Որ կարկտահար տեմէ ըզյոյս իւր դաշտաց,
Եւ ես ընկած ձեզ կը տեմեմ, իմ քաջեր,
Ի մահն աննըւէր-

«Կուգամ եւ ես, հայրենասէրդ ընդ երամ
Եւ ես ձեր հետ առ քաջ նախնիս մերկ' երթամ.
Կ'երթամ սակայն ո՛ն, զի՛նչ թողում Հայաստան...
Ըզլս՛ւծ գերութեան...:

«Հայկ եւ Սրամ երբ խոր վէրքեր մեր տեսնան՝
Պիտի ձանչեն որ չենք իրենց անարման.
Ու մեր ձեռքէ՛ն բըռնած՝ ցուցնեն մեծապանձ
Խըմբին զիւցազանց:

«Բայց ապագայ Հայք՝ որ զարիւն մեր չ'տեսան,
Գովե՛ն պիտի զՎահէ՛ զհազար իւր քրսան,
Թէ՛ գերութեան շառայելով ըզթմաներ՝
Գոչե՛ն անէժքներ...:»—

Այս սեւ խորհուրդ ընկաւ քան ժայռ մ'ահաւոր,
Ու զՎահէի ընկձեց ըզսիրտ զօրաւոր.
Չ'էր թըշնամուսն նետ որ քաջին մահ տըլաւ,
Այլ խորին այս ցաւ:

Եւ անա ձայնըն Դիւցազլին կըտրեցաւ,
Ու հառաչանք մ'աղեխորով լըսվեցաւ...
Աւա՛ղ, վերջին էր այն սըրտին տըրտիմանց
Վերջնո՛յն Հայկազանց:

Գ

Լուսին թանձր ամպոց մըտաւ ի կըռնակ,
Մըշուչն ու խաւար փրեց բովանդակ:
Քիչ մ'ատեն երկինք 'ւ երկիր լըսեցին...
Բայց ապա յանկարծ յամպրոպաց մըթին
Որտա ընդ որտա թընդմամբ գոռալով
Թօթափեցան շանթք զերկին պատռելով:

Մըռընչեն տարերք անեղ ի տարափ.
Երկիր այն ժամուն բըռնեց խոր սարսափ,

Կարծես այն քրտան հաղար Հայկազանց
Ողբքն ի ծոցոյ հրաճօճ կայծականց
Ի գլուխ թըշնամեաց յերկնից կ'ուզէին
Թափել վրէժ զոր հոս կիսկատար թողին-

Քանզի ոչ միայն երբ յերկրի է Հայն
Սիրէ զՀայրենիս ու զո՞ն լինի յայն,
Այլ եւ նահատակ երբ երթայ յերկին՝
Հայրենեացն ըզսէր տանի հետ սրբաին՝
Եւ յերկնից՝ նորոգ զօրութեամբ երկնի
Հայրենեաց իւրոց վրէժխնդիր կանգնի:

Ե

Ապագայ Հայք՝ յոր վերջին ժամդ ի սրբաէ
Այդպէս աբխուր միտք կ'ընէիր, ո՞վ Վահէ,
Որդի՛ք են քո: Ինչ, նոքա քաջդ անիծե՞ն,
Որ դիւցազանց հաւատար ընկար ձեռքըդ զէ՞ն:

Քեզ անիծե՞ն՝ որ քո զարի՛ւն փառաւոր
Նըւիրեցեր քո հայրենեացըդ բոլոր.
Ու ցուցուցեր ի զարմացումն աշխարհի,
Լէոնիդաս մը Հայաստանն ալ ունի:

Դու թըշնամուոյն բիւրուց զօրաց մըշտաբաղդ
Դէմ կըշօեցեր զողիդ ազատ եւ անյաղթ,
Մակեդոնեան դէմ յորձանաց բըսնավար
Կանգնեցեր սիրաբղէ հայրենեաց ի պատուար:

«Ըսիր. «Թէ այս կա՛մք են երկնից՝ թո՛վ գոռն այն
Զի՛ս նախ կոխէ եւ ապա՛ թէ զՀայաստան».

Ի՛մ նախ աչաց լոյս խաւարի մահալցեաց,
Որ ըզխաւար չըտեսնեմ ի՛մ հայրենեաց:»

Ըսիր, ու դէմ մահու անլախ վազեցիր,
Ու ապառուին Ալեքսանդրի ցուցուցիր՝
Որ թէ ընարել պարտ է չըզթայն կամ ըզմահ՝
Հայը չըզթայն չ'ուզեր, կ'առնու զմահն՝ լանահ...:

Ո՛վ Վահէդ քաջ, այո՛, մեք եւ ապագայք
Պիտի պարծինք քանի որ մեք կ'ըսվինք՝ «Հայք».
Պարծինք ի քեզ ոչինչ ընդհատ ի նըւադ՝
Քան թէ ի Հայկ, յԱրամ, Տիգրան եւ Վահագ:

Ինչո՞վ, ինչո՞վ քան ըզնոտա դու պակաս,
Ո՞չ նոյն յաջումդ անընկճելի եւ անկաս:
Ո՞չ նոյն կըրակ եւ յերակներըդ քալէր,
Ո՞չ ձեռքըդ նոյն հայրենավրէ՞սն էր սուսեր:

Այո՛, որչափ այն մեր անմահ զիւցազունք՝
Եւ դու սիրոյ մեր սենխո նո՞յն իրաւունք.
Բայց գուցէ դու, Վահէ՛, եւ քիչ մ'աւելի՛,
Որչափ թըշու՛ա քաջ մ'որ ի մն'ր սէր մեռնի:

Այո՛. մեռար դու մեր սիրոյն. ո՞վ զիւցազն,
Եւ չնորհօպարտ են քեզ բոլոր սիրաք Հայկազն.
Ոչ. քանի որ Հայու մը սիրա դեռ ողջ է՝
Կ'երզնումք որ դու անմահ մընաս, քաջ Վահէ:

ԵՐԳ Թ .



Ա Ր Տ Ա Շ Է Ս Մ Ե Մ Ն

Տ Ի Ե Ձ Ե Ր Ա Կ Ա Լ

... οὐποθ' ὁμοίης ἔμμορος τιμῆς
σκηπτουῦχος βασιτηύς, ὅτε Ζεὺς κῦδος ἔδωκεν
ΙΛΙΑΔ. Παρῳδ. Α. 278(*)



Ա

Ոչ, քան ըզնա չ'եղա՛ւ երբէք մեծ արքայ,
Չ'եղաւ ճակատ որ յա՛յնչափ թագ չողչողայ .
Չ'ունեցաւ զան մե՛ծ քան ըզնա գահակալ,
Ոչ երբէք աջ քան ըզնորա՛ քաջակալ
 Ընդ մականին ոսկեկուռ
 Եւ գահաւոր տարաւ սուր :

Քան դից պատգամ՝ անդիմադա՛րձ իւր հրամանք,
Յերկրէ յերկիր սըփռէին մահ կամ ըզկեանք .
Իսկ երբ զըւարթ աչերն ամէր ի ժրմիս,
Իբր ի գարուն արեւուն փայլ լուսախիտ՝
 Ազգաց ազանց սըրտաթինդ՝
 Ծաւալէր յոյս եւ ըզխինդ :

(*) ... երբեք ոչ ի նոյնգունակ եհաս պատիւ .
Քազաւոր մականակիր՝ որում զփառս եւ Արամազդ .
ՀՈՄԵՐ. ԻԼԻԱԿԱՆ. Ա. 278

Յոտիցն ի շարժ՝ դարչապարին իւր յաղթող
Երկըրպագու մատչէին ազգք ազգք ի դող .
Փառք չըզըտին երբէք ոգի մեծագոյն ,
Յոր եւ սրչափ լըցան՝ թըւէր քիչ՝ ոգւոյն .
 Իբր Ովկէան՝ զոր չ'բաւեն
 Լընուլ երկրի ուխք ամեն :

Դարձաւ հիւսիս՝ հիւսիս առջեւն իւր անկաւ .
Դարձաւ հարաւ՝ հարաւ չըզթայն իւր առաւ .
Վազեց ի Պարս, եւ ի բիւրուց բիւրուց մահ՝
 Խարխիս եւ հինն եղ ամթուոյն նախագահ .
 Կոռուզ ճակատք արքայից՝
 Իւր պատուանդան են ոտից :

Եւ դարձ առնէր յիւր անձկալին Հայաստան
Ահեղազորն այն թագաւոր յաղթութեան .
Եւ ժողովուրդն իւր ընդ առաջ եռանդնուտ,
Քան ընդ այնքան թագաց գահուց կողսպուտ՝
 Մեծազըւարձ խընդային
 Ի տես իւրեանց Դիւցազլին :

Վե՛հ Արտաշէս, յո՛ր բարձրութիւն դու ելեր՝
Եւ զՀայրենիս ի թեւս ոգւոյդ ամբարձեր .
Չայս առաջին անգամ որդին Արամայ
 Լըսէ զիւր տէր կոչել «Արքայից արքայ» .
 Չայս առաջին՝ Հայաստան
 Է աշխարհի գերիշխան :

Բ

Ահա դսրձեալ նա պատենէն հանէ զսուր . . .

Ո՛վ մեծ, չ'ե՞ն բաւ քեզ յազթանակքէ երկնալուր .
Կամ թէ փառաց քոց ի ճաճանչ հրաշաղան
Ո՛չ բաւական ողողեցաւ Հայաստան՝

Որ նոր փառաց ի խընդիր
Արքայդ լինիս զինակիր :

Բայց նա խորհուրդ վե՛ն անդամէ ի սըրաին ,
Խորհուրդ արժան այնքանոյ մեծ Դիւցազլին .
Գիտէ թէ փառք՝ որչափ իցեն մեծագոյն ,
Մե՛ծ եւս յաւէտ են պարտք նորա վե՛նագոյն .
Որչափ թէ ոք ի վեր ել ,
Այնչափ եւ պարտք են փայլել :

«Թէ զգահն ունիմ ես Արքայից արքայի ,
«Հարկ է, ասէ, ես ի՛նձ լինիմ արժանի» : —
Կարձեա՛ Սերքսեալ եւ Դարեհի ըստուերներ
Թեւածէին ըզնովաւ տիւ եւ գիշեր ,
Զանույժ ըզլրէժըս իւրեանց
Պահանջելով ի թախանձ : (*)

Ասիական իւր յազթուլիւնք՝ որոց կէ՛ս
Շա՛տ էր այլոց ի փառս՝ չ'է՛ր ինչ յԱրաաչէս .
Սուր աչք ոգւոյն ի Յունաստան նըշմարէ
Դափնիս փառաց դեռ ոչ քաղալս յաւմեքէ .
«Թէ յայն դափնիս պըսակիմ՝
«Յայնժամ անմահ ես լինիմ» :

(*) Դարեհ եւ Քսերէս եւ վերջին Դարեհ Պարսից քա-
գաւորի յազթուեցան ի Յունաց, եւ մեռան առանց կարեկա-
լու վրէժնի առնուլ :

Ասաց, եւ փո՛ղ ե՛նար անեղ գոռալով,
Եւ սիրաք Հայոց արծարծին նոր ի կորով .
Գունդք գունդք վազեն յտան ի մատին ընդ առաջ ,
«Ո՛ւր քո հրամանք են արշաւեմք քաջաց քաջ .
«Ո՛ւր մեր թափեմք հայ նետեր ,
«Ո՛ւր տանիմք քո շըղթաներ» : —

Անեղ յունքերն լարելով սեւ ի սեւ ,
Դէպ յարեւմուտ դարձուց աչքերն Պարթեւ .
Ինչպէս արծիւ որ դիտեալ զորսն ի բարձանց՝
Եւ ցուցանէ կորովարիբ իւր կորեանց ,
Զի խոյացեալ իբր ըզանթ՝
Յարձակին շեշտ առ ի սպանդ :

Յարձակին շեշտ եւ քաջք Հայոց արծուապէս ,
Գիտեն զ'ի փառս տանի զնոսա Արաաչէս .
Փուլթան յամէն կողմանց արքայք թեւակից ,
Խառնել ընդ Հայս՝ փառացըն գոլ մասնակից .
Զինչ ջուրք ի գետ մեծ թափին
Առնուլ զանուըն նորին :

Ելաւ համբաւ , տարածեցաւ մեծ շըռինդ ,
Դողաց երկիր գոռ բանակին յտալից թինդ .
Քան զարծուէնիչ հայ զըրօշնէր բարձրագէտ
Արտաշիսին անուն գընայր կարապետ .
Ազգ եւ ազինք ի սարսափ
Մընան մահուն սըրտաթափ :

Բանակ այնպէս մեծ երեւեալ չ'էր երբէք ,
Երբէք արեւ չ'էր ցոլացեալ յայնչափ զէնք .

Երբէ՛ք այնչափ նեա չ'էր զերկին մըթագներ ,
 Երբէ՛ք այնչափ վանանք չ'էին կուռ դոփեր ,
 Եւ ոչ յայնչափ քաջաց գունդ
 Լերինք աըւեալ էին թո՛ւնդ :

Յառաջապահ վաշտն երբ յաշխարհ մեծ անցնէր ,
 Դեռ վերջապահ գունդ ի սահման մըտեալ չէր .
 Գետք յաղթաշուր ցամաքեցան քան յերաշտ ,
 Գոռող բըլուրք յաղթին հարթին իբր ըզդաշտ .
 Դաշտաց ծոցէն յանկարծ լեռ
 Ճակատ յաստեղըս տանէր :

Զօրութեան՝ որ եւ տարերց նախանձընդդէմ՝
 Յական քըթիթ նուաճէր ըստ կամս բազմադէմ ,
 Ո՞վ յանդրդներ դիմակայել ախոյան ,
 Ո՞ր ազատել կարէ զգըլուխսըն վանան՝
 Ի կայծականց գոռ եւ վէս
 Զոր թօթափէր Արատչէս :

Հասաւ հեղեղն այն ահաւոր դեռալով
 Եւ քո յեղերս սանձել եւ քեզ , անսահմ ծով .
 Ընկճին ալիք ի յաղթարերձ եղեւնեաց ,
 Շարժուն ցամաք յանկարծ գործի դիւրընթաց .
 Կայմք եւ նիդակք ահագին
 Ըզծով յանտառ փոխեցին :

Փարսախս հազար լի էր ցամաք դեռ ի զէն ,
 Եւ ոչ բաւէր ծով դեռ տանել համօրէն ,
 Երբ ծայր նաւուցն արդէն հասեր ի յԱթէնս՝

Եւ Յոյն արիւն օծեր Հայոցն էր ըզզէնս .
 Եւ յանառիկ բերդս ի վեր
 Հայ դըրօշակ ծածանէր :

Գ

Ի վեհալայր այն մեհեան՝
 Ուր Արամազդն Ոլիմպեան (*)
 Փիղիասայ հրաշակերա՝
 Առնոյր պաշտօն վեհապետ :

Անդ՝ աստուածոյն բազնին զոյգ
 Յոսկեկուռ բարձր ի դահոյք
 Յաշխարհախուճս ի հանդէս
 Բազմեալ էր մեծն Արտաշէս :

Թէ զթագաւորս՝ հին ազգեր
 Համարեցան դից պատկեր ,
 Ո՞ քան ըզհայ դիւցազն այն
 Վեհ այդ փառաց էր արժան :

Ի սպիտափառ ճակատուն
 Վերանըստէր զօրութիւն ,
 Զոր պըսակէր լուսաճեմ
 Արշակունի թագ վըսեմ :

(*) Փիղիաս, հին ժամանակաց ամենէն անուանի անդ-
 բիագործը, Ոլիմպեան Արամազդայ արձան մը շինած էր՝ որ
 հրաշալիք կը համարուէր :

Յայն մեծութիւն վեհափառ՝
Յաչացն ի լոյս բոցավառ,
Շրլացեալ աչք յունակոնք,
Ծըփին սիրտ յահ եւ զարմանք:

Ընկեր յընկեր իւր հըծծէ,
« Ո՛չ, մահացու ոք սա չ'է՛ ,
« Այլ հայրն է սա Ոլիմպեան
« Իջեալ փառօքն աստուածեան » :

Յոսկի բազինս անդ շըքեղ
Դաս դաս քըրմաց զարդագեղ
Անուշ խընկեր ծըխէին՝
Դիցանըման արքային,

Եւ քըրմուհիք աչագեղ
Փունջ փունջ ծաղկանց գունագեղ՝
Պըսակ ի ձօն բերէին
Աստուածակերպ Պարթեւին :

Եւ ժողովուրդ գունդագունդ՝
Ի ծունկս անկեալ սըրտաթունդ,
Գըթալ խընդրեն մեծեռանդ,
Մի՛ բարկութեան տեղալ շանդ» :

Եւ դըղըրդէր մեհեանն այն
Բաղմարարբառ անդ ի ձայն,
« Կեցցէ՛ ընդ Զեւս (*) լուսապէս
« Կեցցէ՛ աստուածն Արտաշէս » :

(*) Զեւս (յունարէն Ζεύς) էր հայրն աստուածոց Արամազդ:

Դ

Աստուածն Արտաշէս...
Բայց անա ի գլոր ի պերճ գահոյից
Աստուածն Արտաշէս
Թաւալի յարեան իւրում մահալից :

Նա կիսակենդան
Կանգնեցաւ ի վեր ծընկօք դողդոջուն,
Աչք արծարծեցան
Ի հուր մի վըսեմ, ոչ ի վըէժ մահուն :

Ի վեր նայեցաւ՝
Ի փառաց իւրոց անհա՛ս բարձրութիւն .
Ի վայր նայեցաւ՝
Ի գերեզմանին ընդունայնութիւն...

Պահ մի կեցաւ լուռ,
Խորհուրդք ի սըրտին ծըփէին իւր խոր...
Եւ ապա տըխուր՝
Գոչէր նա. «Աւա՛ղ փառացս անցաւոր»...

Վերջին էր այն բան
Զոր անեղ շըրթունք խօսեցան Վեհին .
Լըռեաց ի տապան,
Բայց դեռ արձագա՛նդ տան բանք այն վերջին :

Ե

Ո՛չ, ոչ երբէք վըսեմագոյն ի շըրթանց
Վըսեմագոյն ելին բառք :

Ստաւերք Հայկակաճի

Ո՛չ բնաւ քան յայդ բարձրութենէն գերազանց
Դատապարտեալ եղեն փառք:

Մեծ եղար դու, մե՛ծ ի դահ, գո՛ուդ Արտաշէզ,
Յամենայն կեանքս քո մե՛ծ.

Բայց մեծագո՛յն եղար եւ քան ի՛նքդ ըզքեզ
Ի սըրտառուչդ յետին հեծ:

Եւ թէ չ'էիր յերկրի աստուած երկնածեմ՝
Զերդ Ելլադա քեզ պաշտէր՝

Այլ գուարթուն ոմն անշուշտ շըրթամբ քո վըսեմ
Զայդ վեհ պատգամ բարբառէր:

Եւ դոր ո՛չ գէնք քո մըշտայազթ տըւին քեզ՝
Եւ փաղաքուչ ո՛չ խուժան,

ԶԱնմահութիւն զայն քեզ շնորհեց Արտաշէզ՝
Մահուդ վերջին անմահ բան:

ԵՐԳ Ժ.

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Գ Ա Դ Ա Ջ Ի Ն
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ք Ա Գ Ա Ի Ա Բ

En erit, ut liceat totum mihi
ferre per orbem,
Sola Sophocleo tua carmina digna
coturno?
VIRGIL. BUCOL. VII. (*)



Ա

Բանա մահաստուեր, բացվէ՛ հողւոյս իմ առջեւ...
Ես պատերէն քո չ'եմ սարսիր թանձր ու սեւ,
Ես խորչերէն քո չ'եմ խորչիր գէճ խաւար,
Ես չ'եմ փախչիր շըղթաներէդ ժանգաճար.—
Բանա մահաստուեր, բացվէ՛ հողւոյս իմ առջեւ:

Եզիպտական ոչ զիս վաճառք սոկեզանձ,
Ոչ արքունիք զիս հրապուրեն Պըպոմեանց.
Այլ գամ արխուր ի Հայրենեայ իմ պանդուխտ,
Գամ ես գերի թագաւորիս ոտն ի յուխտ.—
Բանա մահաստուեր, բացվէ՛ հողւոյս իմ առջեւ:

(*) Իցի՛ւ լիներ ինձ սարսի պել յաւարն համայն
ԸզՍոփոկիլեան սղերց արժանի սոյս քո միայն:
Վ.Ի.Գ.Ի., ՀՈՎՈՒԱԿ. Ը.

Հո՛ն ուր արքայն իմ կայ թըշուա՛ռ Արտաւազ՝
 Քաղցր է դիմել ինձ տարփանճօք սրբոտալազ .
 Ես զիմ մոռնամ պա՛րզխառութիւն եւ ցաւեր՝
 Երբ զիմ պանդուխտ տեսնեմ արքայն յիւր վըշտեր .—
 Բանս մահաստուեր, բացվէ՛ հոգևոյս իմ առջեւ :

Բ

Գիշեր է, եւ այն օթեւան ցաւոց
 Կրրկին խաւարի մէջ երերակոծ ,
 Ոչ մէկ գըթալիր աստեղ դող ի դող
 Կամ լուսնին անուշ սըպըրդի հոն շող :

Ալեքսանտրիոյ վառ ի վառ ջահեր
 Կարծես յօր փոխել ջանան ըզգիշեր .
 Եւ ուրախալից գոչիւն ամբօխին՝
 Բանտին պարըսպաց զերդ հողմունք բախին :

Լո՛ւռ էր այն բանտ , լո՛ւռ իբր ըզգերեզման . . .
 Բայց երբ թընդաց օդ խուժանին ի ձայն ,
 «Կեցցէ՛ Մաբկ-Անտոն . կեցցէ թագուհին ,
 «Մեռցի՛ր Արտաւազդ Հռոմայ հայ գերին» : (*)

(*) Մարկ-Անտոն, կամ Անտոնիոս, Հռոմայ եռապետաց մին, չկարենալով իւր հզօր զենքերովը մեր Արտաւազդ Ա. Բայց ու իմաստուն քաղաւորին յաղթել, աղաչանքներով ու սուտ երգ-մունքներով ֆովր հրաւիրեց , ու շրջալիկայ սարսա զնա յե-մունքներով ֆովր հրաւիրեց , ու շրջալիկայ սարսա զնա յե-գիպսոս, մասնելով կլէոպատրայ քաղուհւոյն՝ որ իւր սարսա-ծուն էր: Այն անօրէն քաղուհին որ արդէն ոյս ունէր Արտաւազ-դայ դէմ, հանդիսի օր մը երիտասարդ Արեակունուոյն զլուխը կտրել տուաւ:

Այն ժամուն բանտին նըսեմ կամարանք
 Մի խուլ հեծութեան տըւին արծազանգ .
 «Հռոմայ հայ գերին» . . . վա՛յ զարկաւ ձակտին ,
 Եւ շառաչեցին շըղթայք իւր կըրկին :

Պահ մը մըտայոյզ գըլխով գեանայեց ,
 «Այո՛ Արտաւազդ, գերի՛ ես , գոչեց .
 «Գերի՛ ես , վըկա՛յ շըղթայք ի դաստակ ,
 «Գերի՛ ես , վըկա՛յ ձակասդ անպըսակ :

«Գերի՛ . . . ե՛ս գերի՛ , ուղի՛ս Տիգրանայ՝
 «Որ իւր պատուանդան ունէր զԱսիայ . . .
 «Գերի՛ , ե՛ս արքայս Հայոց այն մեծայ
 «Որ դողացուցին զարքայս փառազգեաց :

«Հռոմայ գերի՛ . ե՛ս որ քաջապէս
 «Նորա զէմ փառաց իջայ յասպարէս ,
 «Եւ Արծիւներովս իմով մարտագոռ
 «Գերեցի նորա զկրծուխ անաւոր (*) . . .

«Բայց անա յաղթողս եւ ե՛ս գերեցայ . . .
 «Այլ հա՛յր իմ Տիգրան , քո՛ արեւ վըկայ ,
 «Որ զայս շըղթաներ չեա ինձ վատութիւն ,
 «Այլ հռոմէական դաւաճանութիւն» . —

Գոչեց , եւ աչվին ի կրակ բոցավառ
 Վերցուց երկաթնեղն առ երկինս արդար ,

(*) Թէ՛ Հայ Արեակունեաց եւ քէ՛ Հռոմայեցոց դրօճակի-
 օր Արծիւն էր :

Եւ յընդհանրով զերդ ամպ երկրասաստ՝
Դողացո՞յց ըզրանտ առիւծն Արտաւազդ :

Գ

Առիւծդ հրզօր , քա՛ջ լեր , թէպէտ ի Բանտիս՝
Բայց դու մեծ ես քան զվատդ ոսոխ յարգունիս .
Թէպէտ կապլամ են ձեռքդ՝ Հայոց սանձակալ ,
Բայց քան զկապուլն այն ձեռք՝ հրզօր են դարձեալ :

Մերկ է ճակատդ , անփառունակ սակայն չ'է՛ .
Արքայական փառքդ ի յաչաց քոց ցայտէ .
Եւ թէպէտ աջդ ի մականէն է թափուր ,
Այլ ոչ եթէ եւ յիւր ուժոյն ամրակուռ :

Ո՛վ Տիգրանայ մեծ արժանի գո՛ւ ծընունդ ,
Թէ նա զըտո՛ր Ասիա կոխեց հանեց թունդ ,
Դու օ՛ն բաղդին ե՛լ Արտաւազդ ախոյեան ,
Եւ վերացի՛ր ի մահուանէդ յաղթական :

Այո՛ , արքայ մը ոչ միայն ի գահու ,
Այլ մե՛ծ է նա մե՛ծ եւ նըսեմն ի մահու ,
Որչափ ջանայ բաղդ քեզ ընկճել դիմակալ ,
Ո՛վ քաջ , կարես յանմահութիւն խոյանալ :

Դ

Արեւն ելեր եւ ճոխացեր պերճափառ ,
Եւ ծաւալէր զըւարթ ցուքեր վառ ի վառ .
Բնութիւն համայն զըւարճանայր լուսապանձ :
Կարծես տօնէր ըզյիշատակ դերապանձ
Նահապետին Հայկազանց :

Այն գեղեցիկ օր թեւերս լ լոցարծարծ
Ըզփառահեղն այն կը բերէր տարեղարձ ,
Յոր առաջին բընաւորին դիմագրաւ՝
Հայկ աշխարհի զազատութեան՝ ձայն տըւաւ .
Եւ մեզ՝ գանուն իւր անքաւ :

Այն սըխրալի օր անմոռացն յաւիտեան ,
Յարձանագիրս անդ բոցատառս աստեղեան ,
Երկին , առ քեզ ես բողոքեմ ցաւալից ,
Պէ՛տք էր այն օր դառնալ ի սուգ լալծնից
Հայկայ որդւոցըս սըրտից :

Պէ՛տք էր յայն օր , յազատութեան օր վըսեմ ,
Հայկայ յաջորդն իրր ըզգերի ոք նըսեմ՝
Շրլթայակա՛յ՝ յօտար երկիր դաւաճան՝
Զո՛ն լինի զո՛ն կընո՛ջ միոյ սխտութեան ,
Եւ Հոովմական մասնութեան . . .

Նըսած էր կինն այն հոմանւոյն հետ ի՛ գահ ,
Եւ շուրջ՝ որդիք եւ գունդ զօրաց անձնապահ .
Եւ բազմութիւն ի թագունհոյն մեծ հրաւէր
Յարքունական գահի՛ձ վաղեր էր խըռներ ,
Տեսնել ըզմահ քաջին մեր :

Այն թագունին՝ կընոջ յանձնէ կերպարան՝
Օձի մը սիրտ թագուցանէր ժանտական .
Ոչ . նա չ'ունէր կընոջ ըզսիրտ քաղցուննի ,
Այն՝ որ բաշխէ կեանք եւ շընորհս աշխարհի .
Սա՛ մահ միայն հընարի :

Ի՛նք միայն ինք անդուլթ աչօք քինաւոր
 Ծաղկահասակ զայն կը դիտէր թաղաւոր,
 Մինչ ամբոխին սիրտ յայն ողորմ տեսարանն
 Քորովելով աչքեր լըցուած ծըփական,
 Հայ պարմանւոյն աւանդ տան:

Բայց եւ քաջին սիրտ երեւէր ալէկոծ...
 Արդեօք մահուան է այն երկիւղ ուղէկոծ...
 Է՛ն, ոչ, զի բիւր անգամ նա դէմ յանդիման
 Տեսեալ էր մահն եւ ընկրրկեալ յաղթական
 Հըզօր բազկաւ հայկական.

Ո՛չ, մահուն ս՛չ տեսին ըզքաջ դըզըրդէր,
 Այլ հեռաւոր իւր սիրեկեացըն պատկեր.
 Գիրք ամուսին մը զոր թողուր նա այրի,
 Դո՛ւսարբ մի որբ... զուրկ ի թագէն մէկ որդի,
 Եւ Հայրենիք մի դերի...:

Ո՛վ Հայրենիք, դու արքայի՛ց խկ սըրտին
 Թագէ՛ն ալ քաղցր ես դու ի ժամն այն յետին.
 Ոչ գահ, ոչ ցուպ ողբայր ի մահն Արտաշէզ,
 Այլ զի չ՛կարէր տեսնել ըզծուխ բարձրագէզ
 Ի քո խըրճիթս եւ յերէզ: (*)

(*) Մագիստրոս կը գրէ թէ Արտաշէս Բ. սիրայիւստակ բազաւորը՝ շեռնելու ժամանակ յիշելով կենաց եւ տառաջան գարունը որ այնքան բազր է հայրենեաց մէջ, մեքեանս ըլլալ մեք ազգային վիպասանից սա արտառ ոչ խօսէր.
 «Ո՛ սայր ինձ զծուխ ծխանի
 «Եւ զարաւոսն նաւասարդի,
 Զվագելն եզանց եւ զվագելն եղչէրուաց:
 Մեք փող հարուստ եւ քմրկի հարկանեալ:»

Եւ Արտաւազդ ոչ լայր ծաղիկ իւր ըզսիք,
 Ոչ կարճատեւ զիւր փառք, այլ քե՛զ, Հայրենիք.
 Եւ արտասուք մըթագնէին խիտ առ խիտ
 Այն սեւ աչքեր՝ որ փակէին անժըմիտ
 Կարօտ վերջի՛ն ուղջունիտ:

Բայց թագունին եւ իւր անարգ տարփածուն՝
 Իբր ըզգազան որ խաղայ հետ իւր որսուն,
 Երբ ձաղանօքն այն բաւական կըչտացան՝
 Սիրան արիւննուշտ ծարաւանիւծ էր արեան,
 Մահուան կտուն ըզհրաման:

Ամբոխն յայնժամ դարձուց աչվին եւ 'առ քող...
 Այն արտասուաց մէջ իբր ըզվարդ յայգուն ցող՝
 Ընկաւ խարտէչ գլուխ պարմանւոյն գեղեցիկ,
 Դեռ մընչելով զիւր ամուսին եւ որդիք,
 Ու դքեզ ս՛վ քա՛ղցր Հայրենիք...:

Սակայն արիւն իւր ըզվըրէ՛ժ գոչելով
 Ցայտեց յերես չար այն կընօջն ի նըզս՛վ.
 Սարսափեցաւ նէ եւ հոռոմ հոմանին,
 Եւ պաղ քըրտունք նոցա ճակատ ծածկեցին...
 Մահ եղ կընիւքն ի նոսին:—

Անցան օրեր. մուցըվեցաւ օրն եւ ա՛ն.
 Բայց ոչ եթէ եւ ըզնոսա մուցաւ մահ.
 Նոյն տեղ Հոռոմն ալ իւր արեամբ լըւացաւ,
 Նոյն տեղ եւ կինն այն չար վերջին շունչ տըւաւ...
 Մահ վրէժն առաւ, հանգչեցաւ:—

Ե

Ո՛վ Արտաւանդէ, քո բա՛ղդն ողբանք թէ զմերըս բուն,
Որ քեզ նըման քաջ արքայէ եւ իմաստուն
Զըմնաց ուրիշ ժառանգութիւն ի ձեռըս մեր
Բայց քո շըղթաներ:

Ո՛վ բանաստեղծ հըզօր, (*) ինչո՞ւ արկածքդ յաւէտ
Շարժեն մեր սիրտ եւ ոչ քերթուածք քո վեհաւէտ,
Որ զօտարաց ալ վառէին սիրտ եւ զոգի՛
Յաւիւն խանդիդ ջերմոզի:

Ո՛հ, երբ զանմահ մերդիւցազունս Հայաստանեաց
Հոնեալ ի թատր ողբերգութեամբք քո սըգազգեաց,
Նըկարէիր կիրս եւ արկածսըն մահացուս,
Շարժեալ ըզՀայս յարտասուս .

Ո՛վ ողբերգուդ, ո՛հ, գիտէի՛ր թէ դու ինքնին
Ի մեծադոյն օր մը անցեալ թատր աշխարհին,
Տըխուր բազդիդ կատարածիւ պիտի առնուս
Զապագայի՛ցս արտասուս:

(*) Արտաւանդ մեր այն քաղաւորաց մին է որոց յիշատակը ցանկալի պիտի լինի միտ: Հռոմայեցի պատմիչի մեծ գովութեամբ կը յիշեն զինքը: Նա գիտցաւ արհունական մականին հետ գրիչ լծողել, ու սրայն հետ նաեւ քնար բարձել: Իւր քերտւածին, ողբերգութիւնք եւ նաեւ կը հիացընէին նոյն իսկ զՀռոմայեցիս, եւ զորս կը կարդայր Պլուտարխոս: Ափսո՛ս որ անգութ ժամանակը մեզ գրկեց նոյն բաղդէն, Ե. այս մեր քաղաւորական հայրենի ժառանգութենէն:

Ընկալ, ընկալ զոր սըրսկեմք դա՛ռն յիշատակիդ,
Զըկարելով ցօղել ի հող գերեզմանիւ:
Ո՛վ ողբերգակդ արքայ, քեզ զայս քոյդ ազգ հանուր
Ընծայէ հարկ սիրատուր:

Գիտեմ որ զայն կ'ընդունի մեծ ոգիդ սիրով .
Բայց եւ ըզտաղս իմ այս տըկար՝ ախորժելով...
Քեզ արժանի երգս ոգելոյ, պէ՛տ թագակիր,
Հարկ է ունել զքոյդ փանդիւ:

Բայց եթէ սիրաք բանաստեղծից իբրև ըզքեզ
Ըզսիրտ միայն ախորժեն եւ սէր աղեկէզ,
Ըզսուր քո բիթ՝ թափանց ի սիրտս արկ, մե՛ծ քերթող,
Մի՛ յանարուեստ իմ յայս տող:

Ե Ր Գ ԺԱ.

ԱՐՏԱԻԱԶԳ ԵՐԿՐՈՐԳ
ՀԱՅՈՑ ՎՐԻՉԱՀԱՆ

«Արտաւագդ ցայժմ կենդանի կայ,
«Եւ նա ելանելոց է եւ ունելոց դաւ-
խարհս»: ԵԶՆԻԿ Ա. ԻԲ.



Ա

Ազատ Մասիս,

Ո՛վ դու Հայոց մեծաց յաւէժ ակընկալիս,
Մերժէ՛ պահ մը, մերժէ՛ նըսեմ քո ըստուերներ,
Ու մութ սչքիս ջահէ՛ փառաց քո փայլակներ:

Ազատ Մասիս,

Թող ակնարկեմ ի մուսլըս քո խորհրդալիս,
Որ մեծապանձ Հայոց քաջին ծածկեն զանուն,
Ապագայիցըս յոյս ի ծոց վըհիցդ անհուն:

Ազատ Մասիս,

Ո՛վ յաւիտեանց հըսկայդ անեղ, աէր աշխարհիս,
Կա՛մ երկնապիշ բարձրութենէդ խոնարհէ՛ յիս,
Կա՛մ բարձրացո՛ ի վսեմութիւնդ քընարս ու զիս,
Ազատ Մասիս:

Բ

Ամառուան խաղաղ եւ անուշիկ գիշեր
Հայոց աշխարհին հովանին արկեր,
Եւ գեղածիծաղ աստեղք ի յերկնից՝
Հայրենեաց մերոց գըլեն ժամս հեշտից:

Զովուկ մէկ փըչէր սիւք ծաւալ ծաւալ,
Զառուակին սահէր ջուր թաւալ թաւալ .
Տերեւն ու ծաղիկ սարսիս հեզ ի հեզ,
Կազդուրին ի ցօղ ահօսք սօթակէզ:—

Անուշակ այնպէս եւ խաղաղ գիշեր՝
Ո՛հ ինչո՞ւ սակաւ են ունել Հայեր .
Ինչո՞ւ ոչ նոյնպէս ազատ, անվըրդով՝
Ոչ քունն է թեթեւ՝ ոչ վաղն ապանով:

Ինչո՞ւ ոչ նոյնպէս միշտ իրենց երկիր
Զ՛են դըրեր ըզգլուխս ի նինջ հեշտակիր . . .
Վահ . . . ինչո՞ւ ինձ պէս պանդո՛ւխտ վըշտագին,
Խեղճ Հայեր, հանգիստ գիշեր մը չ'ունին . . .

Ինչո՞ւ . . . — լըռեցէ՛ք խորհո՛ւրդք սըրամութեան,
Մի՛ զիմ մի՛ խոռվէք միշտ սիրտ եւ ըզձայն . . .
Թէ՛ ներկայս՝ Հայուն տայ միշտ արտասուել՝
Թողէ՛ք գէթ ժամ մի յանցելոյն վայել:

Գէթ ժամ մի թողէք որ պանդուխտ գերին
Մոռնայ զիւր այժմու վիճակ ցաւագին .
Գէթ ժամ մ'ի նախնիս փոխվի փառաշատ,
Գէթ ժամ մի ծըծէ, ժամ մի զօղն ազատ:

Գ

Յարքունական ապարանից պատըզգամ
Քաջն Արտաւազդէ անքուն նըստած էր յայն ժամ.
Եւ ի յանդոյր յայն ի հանգիստ աշխարհին՝
Զըւարթանայր սիրտ ազգախնամ արքային:

Եւ զաչս յերկին վերցընելով աստղայոյս,
«Ո՛ր տայր, ասաց, որ ըզհանգիստ այս ժամոյս
«Մըշտաշընորհ կարէի տալ հայրենեաց,
«Թէ եւ արիւն իմ յայն պիտէր ընդ կենաց»:

— Կեանք եւ արիւն՝ այո՛ պիտին, Արտաւազդէ, —
Ծանրը մէկ ձայն գոչեց նըմին աստուածազգ.
Նա աստեղացն էր Մոզպաշտէ մեծ թարգման,
Ոյր պատգամաց լըսէր բոլոր Հայաստան (*):

Զեռքի բարամունքըն կարկառեց ի յերկին,
Եւ զապագայս խոր դիտելով ծերունին,
«Արքայ, կրկնեց, կը տեսնե՞ս մեծ զայդ վարսամ.
«Որ ի գըլուխ Բասեաց ծագէ ի րոյ ծամ»:

Դարձոյց գըլուխն արքայ, տեսաւ հիւսիսայ
Կարակնաձեւ շողշողայր աստղըն խարսեայ.
«Քո՛ւրմի աստուածոց, գոչեց, ո՛ն ինչ այդ նըշան
«Արդեօք խընդայ թէ թընդայ իմ Հայաստան» (**):

(*) «Ի վիւայ բագն սցն կացուցանէ զընտանի Արտաւազդէ...
Մագպաւե՛տ անուն: ԽՈՐԵՆ. Բ. ԽԸ.

(**) Արտաւազդայ երկրորդի օրերը մեծ վարսամ կամ ցիսա-
ւոր ասց իր երեցաւ, բս աւանդութեան:

Խոր հառաչեց անդ ծերունին, լուռ կեցաւ,
Թըւէր թէ սիրտըն կեղեքի յահեղ ցաւ...
Զայնիւ դողդոջ, «Աստեղք, հեծեց, լուսարոց,
«Հի՛մ ձեզի պէս չ'է մըշտայոյս բազդ Հայոց...»:

«Ինչո՞ւ խաղաղ այս երջանիկ գիշերաց
«Յանկարծ օրեր գան յաջորդեն խաւարաց,
«Զինչ Կանգուարայ յարտեւանէն սեւաստուեր
«Բոռ փոթորիկք թափեն խաւար եւ աւեր»:

«Աւեր, ահա սպառնան աւեր յիմ երկիր...
«Ահա լըսեմ՝ կոփին շըլթայք ծանրակիր...
«Ահա ճայթին մահածորան աղեղներ...
«Ահա շկահեն փայլակնացայտ սուսերներ..

«Երկինք, արկէք ըզհովանիդ գըթուլթեան,
«Պաշտպանեցէք հէքն ու անոք Հայաստան...
«Թըլուառ Հայուն հեծութեանց խո՛ւ է երկին,
«Երկինք փակեն զաչս որ ի գուլթ չըշարժին.

«Ահա դէզ դէզ զինչ հունձք ընկած Հայք ի սուր,
«Դիակներով ձորեր փոխուեր են բըլուր.
«Ծըխուն հեղեղ այն բըլրերէն վէտ ի վէտ
«Թափի զեւայ, — ո՛ն Հայ արեան է այն գետ»:

«Ահա քաղաքք մեր բազմամարդ՝ անապատ...
«Ո՛ւր Արմաւիր, ո՛ւր էք Մըծրին, Արտաշատ...
«Քարանց դիտեմ կոյս, ս՛յս մեր գահ տէրութեան...
«Ո՛ն, ինչ գահոյս փընսռեմ, մըն՞աց Հայաստան»:

«Մնաց Հայաստան, մընացի՞ն հայ Հայրենիք,
 «Մընաց մէկ Հայ... — Ահա գունդ մը խեղճ գերիք՝
 «Որ ցան եւ ցիր՝ սիրտ եւ բազուկ ի շըղթայն,
 «Ո՛չ անուն, ո՛չ երկիր ունին... ա՛յս է Հա՛յն...»

— Այս է Հայն, ա՛յս... գոչեց անդուստ Արտաւազ,
 Ինչպէս առիծ Լիբիականն ի յուսազ.
 Ի վեր վազեց լի բարկութեամբ քաշեց սուր,
 Ձայնն՝ որտու՛ն էր, եւ փայլա՛կ՝ աջոյն թուր:

«Այս է Հայն, ա՛յս... ո՛ւր են Հայուն թըշնամիք,
 «Ցուցէ՛ք, թափեմ ի գլուխ նոցա հայ շանթիք՝
 «Երդուեա՛լ յազա՛տ Մասիս, վարսամ ի քո բոց՝
 «Որ վրէժն առնու՛մ, կտարե՛մ շըղթայն իմս Հայոց»:—

Այն հայկական որոտընդոտ բարբառէն
 Իբր ի նոր սիւք արծարծի դից մարգարէն.
 Ապագատես աչք իւր ցոլան վառ ի վառ,
 Հայրենասէր սիրան անդ տրոփէ վեր ի վար:

«Ո՛վ է այս Հայ զինեալ ի սուր ահաւոր.
 «Սըրոխտ ճակատէն դա երեւի թագաւոր,
 «Որ հայրենեաց կարկառէ զաջ իւր պաշտպան.
 «Երկինք զնա կընքեն Հայոց վրիժանն»:

«Ահա ի սեաւն իւր բոցաշունչ վերասլաց՝
 «Շանթ թափելով ճախրէ ի սարս անդ Մասեաց.
 «Այս օթեւան է դից ի վիհս անդընդոց...
 «Զի՞նչ այս... պատեց ըզնա յանկարծ ամպ եւ բոց...»

«Հայեր, 'աի գա՛ն գերութեան դարք երկնակամ,
 «Բայց երբ տեսնէք զԱրտաւազդայ մի՞մ վարսամ՝
 «Բացէ՛ք սըրաերդ ի յոյս, երկինք առնեն ազդ,
 «Ահա կ'ելնէ Մասեաց վը՛հն Արտաւազդ»:

«Վըրէ՛ժ՝ գոչէ, վրէ՛ժ, վըրէ՛ժ, լի՛ վըրէ՛ժ...
 «Արեանց Հայոց սոյժ պահանջէ բիւրավէժ...
 Աւեախս, Բաջին բազուկ՝ վրիժանն
 «Ահա կանգնէ զիմ ցանկալի Հայաստան»:

«Երանի՛ որ յայն օրե՛շ ծընանին,
 «Եւ տեսանեն զԱղատութիւնն աղգային...
 «Իսկ ես՝ քաշեմ թըշուա՛ռ զըլուխս ի տապան,
 «Թո՛ղ չոր ոսկերքս յայնժամ՝ նողուն սակ խայտան»:

Ասաց, լըռեց խորհրդաւորն թյն բարբառ,
 Ու գիշերուանըն ծածկեցու ի խաւար,
 Մինչ խորասոյզ յիւր ի խորհուրդս Արտաւազդ՝
 Կարծէր լըսել դեռ եւս ըզճայնն աստուածազդ»:

Ի վեր յանկարծ դարձոյց աչկունքն առ վարսամ,
 «Ո՛վ հրաճաճանչ, գոչեց, երկնից ինձ պատգամ,
 «Բա՛ջ է, երթամ ահա ծածկել ի Մասիս,
 «Մինչև Հայոց երկրորդ անգամ դու ծագիս»...:—

Գ

Աւաւօտեան խաղաղական լըռութիւն
 Լուծուլ յանկարծ ի շեփորին շառաչիւնս.

«Ազատք հայոց ելէ՛ք ի ձի՛ նառնէ՛ք զէն ,
«Արքայն Հայոց յորս ելանէ սասպողէն» :—

Ազատք Հայոց ելին ի ձիս օղապար .
Ի գրահ ի զէն վառին խոսան պար ի պար .
Եւ ճանապարհք Արտաշատայ դըղըրդին
Ի արտիական դոխիւն քաջացն այն գընդին :

Իսկ ինքն արքայ ըզփառացին արկեալ զարդ ,
Երբ 'առ ի դուլս և զոսկեթագ սաղաւարտ ,
Համբոյր արևաւ ,—վերջին էր այն ,—սիրունւոյն ,
Եւ զըգուելով ըզփարդահոյլ այտ նորուն ,

«Ո՛հ , բաժնըվիմ , ասաց , ի քէն Երանեակ . . .»
Եւ Երանեակ փարեալ բաղկօքն ի մանեակ՝
«Մի՛ զլս այսօր թողուր իմ քա՛ղցր ամուսին ,
Հեծեց , սիրտ իմ գելու ազդամբ երկնային» :

Եւ արցունքներ իւր յորդէին շիթ առ շիթ . . .
Հէ՛ք Երանեակ , կարծես քընքուշ քո սգիդ
Էք նախազգած թէ այն անգամ էր յեաին՝
Որ ցօղք աչացդ ընկնէր ի ծոց քս փեսին :—

«Մի՛ մտնար զլս» . . . կըրկնեց արքայ ոգեմուտն ,
Կամէր յեաին տալ ըզբարեւ . . . գելաւ շունչ՝
Փըրցուց կըրծէն մի լուսավառ ադամանդ ,
Պագաւ , նեանց հարսին , սրացաւ քան ըզչանդ :

Ոստեաւ ի սեւան իւր ամենի մըրրկրտա ,
Փռչին զիզաւ ամպ , զըղըրդէր թունտ որոտ .
Արչաւասոյր քաջք յելեւել վարդէին ,
Եւ քաջ արքայն էր միշտ քաջացն առաջին :

Ե

Գրուաց փող կերկեր
Խիղախ քաջայեր .
Ճախրեն սուբան ձիք
Թօթափեալ շանթիք—
Եւ փառաց վակժոյժ
Քաջք առնուն աշխոյժ :

Դափր անդ ի գըրնդիւն ,
Նժուգից վընջիւն ,
Որսորդաց գոչիւն ,
Բարակաց հաչիւն ,
Երէոց բաջիւն ,
Զինուց շառաչիւն ,

Աղեղանց ճայթիւն ,
Նեախց ճարճաախն ,
Շըսինդ ընդ բոմբիւն ,
Անդ յընդոսա թընդիւն՝
Յանաառ , ձոր թըմբիւն
Դըղըրդեն դանդիւն :

Քաջք անդ քան ըզքաջ
Խիղախեն յառաջ .
Ոչ մայրիք , մացառք ,
Ոչ խորք և կամ սարք
Զարիս սիգալանջ
Ընկըրկին նըհանջ :

Արքայն շահատակ՝
 Իւրոցն օրինակ,
 Երկոցս լըցոյց
 Կտարբճ մահարբոյց,
 Երկոյս ըզփրքինս
 Պարպեց անազինս :

Դէզ դէզ անասունք
 Ընկան արագունք .
 Այլք փախչին զրահեա ,
 Մահ հասանէ հեա .
 Ոչ եւս այլ բաւեն
 Մայրիք յապաւէն ,

Արիւնսուշտ վարազք ,
 Այծեամք քաջալազք
 Վազվազեն խուճապ
 Անյոյս ի տագնապ ,
 Շեշտ ի սուր փրքին
 Թաւալ տապալին :

Ձ

« Ի վեր, գոչեց Արտաւազդ, ա՛րք աղեղանց,
 « Կը աեսնէ՞ք դայդ փախըստական ջուկ եղանց,
 « Ահա թեթեւ սուրան Մասեաց ի սարեր,
 « Օ՛ն ետեւնէն ղիմեմք եւ մեք, Հա՛յ քաջեր» :

Քաջերն ըզկուշտ երխլարաց մըտրակեն,
 Եւ արքային ըզհեա ի վեր արշաւեն ,

Եւ լըութիւնք բազմադարեան սուրբ Կերին
 Ձայն առաջին ի չովնդ վեհից զըզըրզին :

Մէն մի փրքին թուցեալ ի հայ աղեղանց
 Հար շեշտակի դմէն մի ճապուկ յայն եղանց .
 Եւ պըզընձի շեփօրն ի նուազ յաղթական
 Մասեաց ի սարս որսաց փողէր ըզվախճան :

Է

Ճոխ աւարաւ իշխանք ի մի համագունդ
 Հասեալ կային վընի մը քով խորանդունդ,
 Ահնդ ժայտեր, ուր չէր՝ յայնչափ դարուց հին՝
 Յանդըզնեալ ոտք մահայուին :

Այն բարձրերէն ըզմայլէին նայելով
 Հայոց աշխարհըն ծաւալեալ անվըրդով,
 Շէնք եւ քաղաք եւ արատէք եւ հովիտ
 Շողչողային խիտ առ խիտ :

« Ո՛վ երջանիկ մեր Հայրենի՛ք սիրեցեալ » :
 Գոչեց արքայ՝ ըզլըութիւն ընդհատեալ .
 Եւ քաջք Հայոց անդ կըրփնեցին անձկալիք,
 « Ո՛վ երջանի՛կ Հայրենի՛ք » :

Ձայն ցընձալից բարբառ դոչնն երեքննն,
 Կարծես սըրտերն ընդարձակին ի ծոցէն .
 Եւ արձագանդք դուստն յազատն ի Մասիք,
 « Ո՛վ երջանի՛կ Հայրենի՛ք » : —

Սակայն անդուստ մըթնի ճակատ արքային,
 Ինչպէս յանկարծ ի սեւաստուեր ամպ՝ երկին.
 « Ո՛հ մանաւանդ, հեծեց, լացէ՛ք սիրելիք,
 « Ո՛վ մեր թըշուա՛ն Հայրենիք:

« Թըշուա՛ն, որ դայս իւր հանգըստեան կարճօրեր
 « Պիտի տուժէ՛ երկայնագոյն, ո՛հ, դարեր.
 « Այս ամէն փառք, քաղաքք այդ պերճ եւ բերդք ձեր
 « Տապալեսցի՛ն հինն ի վեր...:

« Աղա՛տք Հայոց, պարծանք Հայոց աշխարհին,
 « Գիտէ՛ք որդւոցդ ի՛նչ բաղդ կընքեալ է երկին.
 « Ա՛հ, ոչ ըզհարց փառք՝ ոչ ըզգանձ՝ ոչ երկիր,
 « Այլ շրջթմաներ ծանրակիր » ...: —

Լըռեց արքայ; եւ նախարարք լուռ կային,
 Աչքեր լըցված եւ սեւեռեալ ի գետին,
 Կարծես արխուր բաղդի աւուրց մեր պատկեր
 Նոցա զիմաց նըկարէր:

Հեծաւ արքայ, կապարճ ուղեց նեաալից,
 Ձրգեց իւր ուս, վահանն առաւ փառակից.
 Բշկահեց թուր, ճօճեց նիղակն ահագին,
 Եւ նայեցաւ ի յերկին.

« Քաջեր, գոչեց, երկինք կոչեն զԱրտաւազդ,
 « Ի դից հրաւէր՝ թագաւոր ձեր է պատրաստ.
 « Երթամ լինել աղաչաւոր Անմահից
 « Գըթալ Հայոցդ իմ բաղդից:

« Ողջա՛մբ կացէք... երթա՛յք պատմել Հայրենեաց
 « Թէ Արտաւազդ զանձ իւր իրեն նըւիրեաց.

« Երթայք ասկ թէ ի խաւար դերութեան:
 « Երբ հեծեճէ Հայաստան,

« Այն խաւարէն՝ աչլիդ յերկին վերուցէ՛ք,
 « Հոն երբ ծագեալ զիմ մեծ վարսամ տեսանէք՝
 « Խրախոյս առէ՛ք, վերջ է հասեր դերութեան,
 « Յո՛ւշ Արտաւազդ վրիժանն:

« Գայ Արտաւազդ՝ քակել կտարել ըզըղթայս,
 « Յագատութի՛ւն վրսեմ հանել բարձր ըզՀայս.
 « Գայ Արտաւազդ կանգնել ըզփառս Հայկական,
 « Գայ նորոգել Հայաստան » : —

Ասաց, եւ աչք իւր վառեցան բոցահրաչ,
 Եւ մինչ աւագք Հայոց կային հիահրաչ,
 Ի սոյ նըշան հաւատարիմ իւր ետ շանց,
 Բզնըժուզին եթող սանձ:

Ոստնոյր ի վինն արքայ զիմօք անխըռով,
 Եւ վերջին մի իւր քաջերունն նայելով,
 « Ողջո՛յն, գոչեց, ձեզ եւ Հայոց բովանդակ,
 « Ողջո՛յն առ իմս Երանեակ » : ...

Ամպ սեւաթոյր յանկարծ իջաւ հրաթաղանթ,
 Ծածկեց զանդունդն որոտարով բոցեռանդ,
 Ձանվախ վեհիցն այն սիրս սարսափ անդ կալաւ,
 Աչացն արցասնք պաղեցաւ...:

Եւ դառնային լըռիկ մընջիկ արխարդէմ,
 Անգէտք թէ լան զիւրեանց արքայն թէ տօնեն.
 Եւ դեռ յականջս հընչէր Քաջին յուսոյ բան,
 « Յո՛ւշ Արտաւազդ վրիժանն »:

Ը

Օ՛ն իմ Հայեր, զաչլիդ յերկին ճն ամբարձէ՛ք.

Փուշակութեանց մտեցաւ ժամ.

Ասացէ՛ք ինձ, Հայո՛ց որդիք, ա՛ն, ե՛րբ տեսնէք

ԶԱրտաւազդայ մեծ վարսամ:



Ե Ր Գ Ժ Բ.



Ն Ա Խ Ա Ղ Ս Ա Յ Ո Ւ Հ Ի Ն

Ս Ա Ն Գ Ո Ւ Խ Տ

... Manibus date lilia plenis:
Purpureos spargam flores (*)

VIRGIL. AEnid. lib. VI.



Ս.

Հայոց կոյսեր,

Շուշան վարդեր

Փունջ փունջ առէ՛ք, տարէ՛ք յուխա

Առ թագուհին ձեր Սանդուխտ:—

*

Ինքն ալ ձեզի նըման էր կոյս,

Աչքեր իւր քաղցր իրբու ըզյոյս.

Ճակատ՝ լուսնին պէս չողազարդ,

Այտերը ծիլ ծիլ վառ ի վարդ:

Մարմար զուլամբն՝ սակի մազեր,

Շուշանազեղ հաստի նազեր.

Ձեզի պէս էր ինքն այլ քընքուշ,

Հրավառ սըրաից փափա՛ք սնուշ:—

Հայոց կոյսեր,

Շուշան վարդեր

(*) ... Շուշանը տա՛ր քրտնա լիւր.

Հեղից ծաղկունըս ծիրանիս:

ՎԵՐԻՒՆ. ԷՆԻԱԿ. ԳԻՐԸ

Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Հայր իւր Հայոց տէր էր բաղդին ,
Եւ մայր՝ Հայոց վե՛ն թագուհին .
Ինք հօրէն միաք , մօրէն ըզգեզ ,
Յերկնից , առեր սիրտ լուսանեզ ,
Թագաւորին էր սիրելի
Գան ըզբոյր փառս աշխարհի ,
Եւ թագուհւոյն՝ քան զիւր զըսարիկ
Չըկայր գոհար չընաշխարհիկ : —

Հայոց կոյսեր ,
Շուշան վարդեր

Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Թէ գլուխն ի քօղ ոսկեքեհեզ
Յարքունական ձեմէր պարաեզ ,
Չըկայր ծաղիկ մի գեղաթոյր
Որ նէրա պէս վառէր ի բոյր .
Եւ երբ գարնանն ի զւարթ գիշեր
Յերկնես ուղղէր պայծառ բրբեր ,
Շիկնէր շողշողն իսկ արուսեակ
Ի լոյս աչաց այն հրակայրակ : —

Հայոց կոյսեր ,
Շուշան վարդեր

Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Ուր երեւէր Կոյսն այն անմեղ՝
Կարծես չնորհն էր երկնասեզ ,

Ախտ և ցուեր սրբախց ամէն
Փարատէին իւր բուրմանէն ,
Ինչպէս ամուսն ի բոց արեւ
Քաղցր է ծաղկանց սիւք հեշտաթեւ ,
Այսպէս Հայոց մեծացն այն Կոյս
էր բաղձալի տեսողաց լոյս : —

Հայոց կոյսեր ,
Շուշան վարդեր

Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Հայոց մայրերը կ'ըսէին ,
«Չ'եմք նախանձիր զթագ մեր Տիկնին ,
Այլ զի ս'յգպէս ունի ազջիկ» : —
Հայոց հայրերն ալ կ'ըսէին .
«Ինչ բաղբ է մեր թագաւորին .
Հուռմ և Հայ աշխարհ մեկտեզ
Չ'արժեն ըզգանձ այս հրաշագեզ» : —

Հայոց կոյսեր ,
Շուշան վարդեր

Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Թագաւորներն ալ կ'ըսէին .
«Մեզմէ որուն արքայորդին
Երանանայ գըզուել ի ծոց
Չայն աննրման բամբիշն Հայոց» : —
Պարթեւ , Հուռմ , Հընդիկ թագեր
Մի ըզմիտլ գան եւ գանձեր ,
Նախանձընդէմ յիրեար թափին
Առ ոսս Հայոց մեծաց Կուսին : —

Հայոց կոյսեր,
Շուշան վարդեր
Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխա:

Բայց նա փափկիկ ոտքերուն տակ
Զարկաւ կոխեց զանձ ու պըսակ.
Ո՛հ, չ'են սոքա, չ'են Սանդըխափ
Արժանաւոր փափաք սըրափ.
Ներա մաքուր սիրա և աչեր
Երկնակարօս դարձեր ի վեր,
Ո՛ր սիրա յերկրի, ո՛ր պատանի
Սըրափ Կուսին այն արժանի:—

Հայոց կոյսեր,
Շուշան վարդեր
Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխա:

Հայր իմ, — գոչեց, — ես ինձ փեսայ
Մեծ քան զամէն ունիմ արքայ.
Նորա պըսակ՝ սուր սուր փուշէ,
Ինձ քան զամէն թագ անուշ է.
Նա խոստանայ ինձ վառս անանց
Խաչ մը նորա մէկ հատիկ զանձ.
Եւ ես վազեմ այնու յուսով,
Սիրա իմ վառած իւր վե՛հ սիրով»:—

Հայոց կոյսեր,
Շուշան վարդեր
Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխա:

Օրիորդին յուզեցաւ հայր,
Եւ շատ արցունք հոսեց իւր մայր.
«Մի՛ դայդ ասեր, աղջիկ սիրուն,
Մի՛ հորդ ու մօր փախչիր ծոցուն.
Թէ՛ քիչ վըզիդ մանեակդ սկիի,
Բերեմք զսակի բոլոր երկրի.
Թէ՛ Մըծքին փո՛քր է քեզ դարպաս՝
Օժիտ քեզ սամք բոլոր ըզհայս»:—
Հայոց կոյսեր,
Շուշան վարդեր
Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխա.

— «Դարպաս տըւէք ինձ սե՛ւ այն բանդ
Ուր վե՛հ Թագէն կայ պարաւանդ.
Ինձի մանեակ կամ ապրանջան
Խընդրեմ զերկաթ շըղթայ նորան.
Ինձ թէ՛ զաշխարհ այլ տաք՝ քիչ է,
Սիրա իմ զերկին օժիտ խընդրէ»:—
Մընչեց, թողուց մօր գիրկին անյոյս,
Վազեց ի բանս փափիկն այն Կոյս:—

Հայոց կոյսեր
Շուշան վարդեր
Փունջ փունջ առէ՛ք տարէ՛ք յուխա
Առ թագուհին ձեր Սանդուխա:

Բ

Սուրբ Առաքեալ, — գոչեց ի բանս մըսնելով, —
Լըցաւ բաղձանքըս կէս, հառայ քուկին քով.

Ե՛րբ իմ լըցվի իդձ կատարեալ, ե՛րբ հասնիմ
Առ երկնաւոր փեսայն իմ... .

Հեծեց Սանդուխտ, ու կարօտոյ տաք արցունք
Կաթկըթէին զինչ շաղ զոր տան ասակունք.
«Սո՛ւրբ Առաքեալ, — կ'ըսէր, -- ո՛հ, ե՛րբ ես փարիմ
Ընդ խաչակիր Փեսայն իմ»:

— «Վաղը, ո՛վ Կոյս, վաղը, — կրկնեց Առաքեալ, —
Վե՛ն բազմանքիդ վաղիւ հասնիս կատարեալ.
Քեզմէ պակաս չէ կարօտեր յերկնի յոյս
Եւ քս Փեսայն, անբի՛ծ Կոյս»:

Ասաց Թաղէ, եւ ըզ՛րեղէն շըրթունքներ
Խոնարհեցուց Կուսին յահեղ շըղթաներ.
Եւ ըզվըսեմըն զայն համբոյր սըրբասէր
Արցունքներով իւր կընքէր:

Խառնըվեցան երկու աչաց արցունքներ,
Զինչ շուշանին ու վարդին թաց տերեւներ
Երբ հո՛վն այգուն ծոցերն որրէ զող ի զող,
Թափին խառնեն հոտն ու ցող:

Թափէր արցունք եւ Կուսին մայր ի դահոյս.
Բայց ո՛չ նոյնպէս անուշ էր այն, այլ անյո՛յս.
Ա՛հ, առաջին էր այն զիչեր՝ ուր հէ՛զ մայր
Իւր զըստրիկէն ո՛րք մընայր:

Թըշուա՛ն այն մայր. լացա՛ւ, հեծեց ու լացաւ,
Կանչեց աղջիկն . . . այլ պատասխան մը չ՛առաւ.
Մազեր փետեց, «Սանդո՛ւխտ, Սանդո՛ւխտ իմ» գոչեց
Լացաւ արիւն, հառաչե՛ց:

Մըրաէն մարեր յոյս, եւ ընկձեկ էր խեղձ մայր,
Նըւտղեցաւ, ու երբ վերջին շունչ կուտայր՝
Պե՛տ հեծեծէր. «Ո՛ւր ես, աղջիկ իմ սիրուն» . . .
— Տիրեց մահո՛ւ լըութիւն: —

Գ

Երբ առաւօտուն ծագեց ի բանտ յոյս՝
Գըսաւ սուրբ Թաղէն նըսկող ընդ սուրբ Կոյս,
Որ զիչերն ի բուն սաղմոտաց դըրուակ
Անուշ երգէին հրեշտակ ընդ հրեշտակ:

Արեւուն ճածանչ շողաց բոցահատ,
Պըսակ բոլորեց պերձ Կուսին ճակատ.
Ապչեցաւ Թաղէ, եւ պահ մը ինքզինք
Կարծեց Սանդըխտոյ հետ նըստիլ յերկինք . . .

Բանտին անաւոր ճըռնչեն դըռներ,
Ու ներս խուժեցին մահահոտ գէնքեր.
Անէ՛ծք հայհոյանք՝ հոն սաղմոտներուն
Զուգախառնեցան ընդ սուրբ ալէյուն:

Գունդ մը զինուորաց՝ զինչ ժանտ բաղէներ
Հեղիկ աղանոյն հետ կըուել կկեր . . .
Բայց քան ըզնոցայն սիրտ ծարված յարիւն՝
Կուսին սիրտ ծարաւ էր բուն իւր մահուն:

Քարչեցին բամբջան ձիւնաթոյր ըղթեւ,
Նէ՛ ծանըր շըղթայն գըտանէր թեթեւ.
Քան զիւր հալածչաց քայլերն առաջէր,
Կարծես մօրն ի գիրկ գառնուկն էր զիմէր:

Նօքա կարծէին՝ թէ ի մահ տանին,
Այլ յերկնի ճամբան առաջնորդէին.

Երկնի՝ որ բացված էր իրեն առջև,
Հրեշտակք ըզլուսոյ պատրաստեր են թևս :

Վազեր են վազեր ծերք՝ սըղայք բոյոր,
Մայրեր՝ աղջիկներ ողբան սըզուսր .
« Ո՛հ, ծաղիկ տեսքիդ թէ դու չ'ունիս գուլթ՝
« Սանդուխտ, մեզ գըթտ, մի՛ գըրկեր տեսուդ » :

Հայրը... — ո՛հ, ինչպէս տա՛մ սուրբ զանուն հօր
Յայն՝ որ էր գազան գարձեր ա՛նուսր, —
« Ի՞նչ գըթայք, գոչեց, գարկէ՛ք, մեռուցէ՛ք,
« Մօրը ետևէն զանգուլթն յըզեցէ՛ք » :

Կարգ կարգ կը շարվին երկու գունդ գինուսր,
Սանդուխտ՝ աղեղանց ի մէջ բիւրաւուր .
Շառաչեն նետեր քան շանթ փայլականց,
Բայց զիրար պատուեն գաղանք մարդախանձ :

Երբ մահուանց այն դէպ տեսաւ Կոյսն արի,
Յուգոց հնան, « Տէ՛ր, մըրժընջեց, բարի,
« Մի՛ գվրէժ իմ աւնուր, ինձ թըշնամի չ'են,
« Սոքա շընորհել ինձ ըզքեզ կ'ուզեն » :

« Առ քեզ գամ, ո՛հ, բաց գիրկդ անուշ, Յի՛սուս,
« Ընդունէ՛ Փեսայդ ըզհոգին իմ կոյս » ... —
Յերկին վերացոյց լուսակաթ զաչվին,
Ընդ երկին խառնէր եւ կարմրուկ հոգին :

Այն ժամուն մէկ սուր՝ քան ըզչանթ թռուցիկ
Իջաւ շէշտ յանբիծ յայն ձերմակ ծոցիկ .
Ո՛հ, բոսորափայլ ցայտեց կոյսն արիւն,
Զինչ ցլուն վարդեր թերթաթափ ի ձիւն... —

*
**

Հայոց կուսաններ,
Շուշանն է ընկեր .
Ելէ՛ք քաղեցէ՛ք,
Ռգւայդ դարդ տաէք :

Գ

Իսկ դու, վե՛հ Կոյս, որ արդ յերկնից ի խորան
Անմահ Փեսիդ ի ծոց խայտաս անբաժան
Ո՛վ սուրբ Սանդուխտ, նայէ՛ մաքուր յայն կոյսեր
Որ հարազատ են քու քոյրեր :

Սոցա՛ ալ սիրա այն քա՛ղցր արիւն խոխոջայ
Զոր քեզ տըւաւ մայր Հայաստան եւ նոցայ .
Անոնց ալ սիրաք ո՛հ բուսցընեն Հայրենեաց
Քո ծաղկըներ վտրդազգեաց :—

*
**

Հայոց կոյսեր,
Շուշան վարչեր
Փունջ փունջ տաէ՛ք տարէ՛ք յուխտ
Առ թագունին ձեր Սանդուխտ :

Ե Ր Գ Ժ Գ.

ԱՌ ԿՈՅՍ

Հ Ռ Ի Փ Ս Ի Մ Է

«Մայր հոգւոյս կուսուրեամբ.»
Մ. ԽՈՐԵՆ.



Գարնան վարդերուն մեր բոսորագեղ
Բզմայլեցուցիչ բուրմանց հետ մէկտեղ՝
Հասաւ, Հռիփսիմէ, քոյ գիրք յիշատակ,
Ու լըցաւ իմ սիրտ հոտովդ անուշակ:

Պանդըխտիս սակերք ու լանջ ել ի թունդ՝
Երբոր լըսեցի քո սիրուն Անունդ.
Պահ մը զիմ արխուր շըրջակայս մտցայ՝
Իբրու Հայրենեաց թէ ի ծոց մըտայ:

Կարծեցի տօնիդ քո զերդ քաղցրալուր
Լըսել անդ հընչեալ բըլուր աւ բըլուր.
Ու իբր ի քո սուրբ թէ կացեալ գաւթի՞
Լըսել զիմ եղբարց օրհնութեան շըրինդ:

Կարծե ի տեսնել քո հառակակից
Արմենիկ կուսից ըզդաս հըրճուալից,
Խայտալ Կուսանիդ ի վին յաղթութիւն՝
Որով յաղթանակ կանգնեց Կուսութիւն:

Կարծեցի տեսնել Սեղանոյդ վըրան՝
Ծաղկիդ՝ նըւրին վարդեր ու շուշան,

Ծաղկունք՝ ո՛հ թոռունք ծաղկանց այն կարմիր
Զոր արեան ցօղով քով ուռեցելիք:

Եւ ի՛մ սիրտ արտինց, լուծվեցաւ լեզու,
Եղբարց հետ խառնել ձայնիկս յալելու.
Հռիփսիմէ... գոչեմ, բայց աւանդ իմ ձայն
Օտար աստեղց տակ ցըրվեցա՛ւ ունայն:

Եւ անա սըրտէս զընաց խընդութիւն,
Կըտրեցաւ շըրթանց զըւարթ օրհնութիւն.
Սչերս հոսեցին ու զփունջն այն թացին
Զոր կապեր էի քո սուրբ Խորանին:

Ո՛հ, թէ կ'ընդունիս զեղբարց սիրտ ուրախ՝
Ո՛վ Կոյս, կընայի՞ս և յի՛մ անուվախ.
Արդեօք չե՞ս ցաւիր պանդըխտիս բաղդին՝
Որ լա՛մ՝ երբ երկիր խընդայ՝ ընդ երկին:

Եւ ի՛նչպէս չըլամ երբոր չ'եմ արժան
Համբուրել զնըջխար քո և սուրբ տապան,
Որ ցաւած աչքիս կաթի քո սուրբ եղ
Ու ցամքեցընէ վըշտաց զիմ հեղեղ:...

Այլ գու թէ տաճա՛ր ունիս զՀայաստան,
Սակայն աիեզնիք փառացի է կայան.
Թէ ևս հայրենեաց եմ աքսոր ընկած՝
Միթէ քո սիրոյդ եմ դուրս մընացած:

Ո՞ զքեզ կըսիրէ քան զիս յորդապոյն,
Ո՞ քեզ ամէն օր ի ծունկ տայ ողջոյն,
Ո՞վ քան ըզպանդուխտս ի քեզ է կարօտ,
Ո՞վ զայս զառն ըզգաց ցաւ այս առաւօտ:...

Ա՛հ... այս արաստուք հասնելին քեզի,
Ու չըցընդէին ի հողմն օտարի:

Հասնէ՛րն քեզի, ու կոյս բըբերուդ
Իջեցընէ՛րն նըշոյ մի գրթուդ:

Ո՛հ, լսկ այն ասեն կըցընծա՛յր ողիս,
Ու կը մտնայի ըզցաւ պանդըխտիս.
Պանդըխտիս՝ ում է՛րք յերկրի մըխիթար,
Ո՛չ գըլխոյն՝ ըսաուեր, ս՛չ սըրտին՝ դադար:



ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԳ Ա.

ՀԱՅՈՒՆ ԿԵԱՆՔԷ

«Շատ է աւուրն չար իւր.»
ՄԱՏԹ. ԳԼ. Զ.

Ո՛հ, բաւական լիակ դառն են կեանք մահացուին,
Բաւականէ՛ն առակ կեանքն աղգային.

Անուշընէ՛նք, ս՛լ Հայեր
Յաստուածաշունչ ի սուրբ սէր:

Եզրա՛րք, ս՛լ սր զանուն կըրէ հայկական՝
Բզրաղդ Հայուն պիտի կրէ անպայման.

Ո՛ւր եւ երթայ՝ հեա ինքեան
Տանի զհայ շուք անբաժան:

Հարս՛ւտ, աղքա՛տ, յիշեցէ՛ք մէկ ունիք հայր,
Ու ամէնքնիդ ալ մի եւ նոյն լացաւ մայր.

Հայկ ամենուդ է ծընող,
Եւ աղգութիւն՝ օրօրսդ:

Հայք, հիմ ինթիւ հայիք յեղբարս հարաղատ.
Ո՛չ նոյն ըզդրոշմ ունիք անջինջ ի ճակատ.

Ո՞չ նոյն ըզխաչ բեռն ի յուս
Շայկեց Աստուած ամենուս . . :

Ի՞նչ աւելի կ'ուզէք միմեանց ընկճել վիզ .
Ո՞ր Հայ այսօր կարէ պարծիլ բարձրավիզ .
Ամեննուս ալ նոյն երկաթ
Չը ջախջախեց վէս գաւաթ :

Ի՞նչ աւելի ջանայք արասունք թափել տալ .
Միթէ աչվիդ ո՞չ միշտ լեցված են ի լալ .
Ինչո՞ւ զկաթիլն ազգային
Կ'ուզէք ցընդել ձեր կըրքին :

Ի՞նչ աւելի փութայք միմեանց տալ ցաւեր .
Միթէ ո՞չ շատ իսկ ունիմք ցաւս, ո՞վ Հայեր .
Ո՞ր Հայուն սիրան է անվէր ,
Ո՞ր մասն անտի ողջ հասեր :

Ի՞նչ աւելի խրոխտայք կոխել ըզմիմեանս .
Չէ՞ բաւական ս'յաչափ ազգաց դոյ կոխանս .
Օտարք ի շունչդ են խնայեր ,
Դո՞ւք զայն մարէք, ո՞վ Հայեր :

Ի՞նչ աւելի աւրել միմեանց խեղճ անուն ,
Երկրիս երես մնացե՞ր անո՛ւնն է Հայուն .
Ո՞հ , թող ա՛յլ լաւ է կորովի ,
Ի՛ան բանբասամար ձեր պըղծվի :

Ի՞նչ աւելի հեռ էք զիրեար կործանել ,
Ամէնքս յաւեր , ամէնքս ի հո՞ղ եմք դարձել .
Թէ ոք յաւերց շինէ տուն ,
Չը՛ղիմանար նա հովուն :

Հայեր , զամէնքս Երկին հաւասար է նայեր ,
Հաւասար լուծ , ամօթ եւ ցաւ է բաժներ .

Ձի անբաժանք իրարու
Մընանք եղբարք սիրարկու :

Իսկ ով կ'ուզէ Հայութենէ բաժնըլիլ՝
Երման ճիւղոյն է զոր կըտրեն ի յԱպրիլ .
Չ'ունի ա՛մատ՝ կըցամքի ,
Եւ ի հընո՛ց կը նեավի :

ԸզՀայ արմատ չ'է՛ չորցուցած դեռ Աստուած՝
Այսչափ դարեր՝ ո՞չ յայն ի զուր են խնայած .
Մեր հողն է Դրա՛խա՝ — Օր մը նոր ,
Կըրնանք ծաղկիլ զօրաւոր :

Հայեր , Հայեր , երբ կ'առնուք սուր անխընայ ,
Ու կ'արձըկիք վերայ եղբօրդ Հայ առ Հայ ,
Վախցէ՛ք , անգու՛թ ձեր տապար
Յերկնախընամ զարնէ ծառ :

Ամէն տերեւ զոր թօթափէք այն ծառէն՝
Բարձեալն համբեր է մի առ մի երկընքէն .
Որդն որ ծառոյն կրկըւլի՝
Ունի զմըչակ թըշնամի :

Երկնի Մշակէն վախցէ՛ք . — գիտէ՞ ո՞ր կեղպով
Պիտի մեծնայ ճիւղն ու տերեւ առենով .
Կըրնայ արմատ ապ յոստիկ ,
Ըզքեզ փոխել ի դըմնիկ :

Ո՞հ շատ են շա՛տ հողմունք որ զմեզ են ցաներ .
Մի՛ Հայն Հայուն դէ՛մ զըրգուէ նոր մըրրիկներ .
Ո՞ր մասն երկրի մընացեր
Ուր Հայ պանդուխտ չ'է՛ լացեր : . . .

Ո՞հ , թէ ցըրված եւս եմք յիրեարց հեռաւոր՝
Ո՞վ Հայկազունք , լինի՛նք սըրտով միաւոր .
Թէ քիչ տերեւ ենք մնացել՝
Շատ ենք ի պսակ մի հիւսել :



Ե Ր Գ Բ.



ՊԱՆԴՈՒԽՏ

Ա Բ Ա Մ Պ Ն



Ա՛մպ . . . դէպ ի ո՛ւր այդքան ըշտապ ,
Ի՞նչ կը վազես բուռն ի տազնապ . . .
Արդեօք առեր տանի՞ս պատգամ
Երկրիս մէկ կո՛ղմը տարածամ :

Ա՛մպ . . . քս երես արևուր է սեւ .
Ասա՛ , վըրէ՛ժ մ՛ուսիս ներքեւ ,
Թէ՛ արբամութիւն մը վըշտահար
ձերմակ դէմքիդ ամէ խաւար :

Արդեօք երկնից բընիկդ ի դեհ
Հով մը հասաւ վարեց նըժգեհ .
Եւ դու՛ ցաւով քս հայրենեաց
Ի՞նձ պէս գընաս աչօ՞ք ի լաց :

Ի՞նձ պէս՝ որ լոկ եւ ի յերեր
Միայն ըզցա՛ւս ունիմ յընկեր .
Եւ հայրենեաց իմ կարօտով՝
Հովի՛մ մաշիմ ընդ հող ու ծով . .

Ա՛մպ . . . թէ լըցված դու սիրա ունիս
Յօղ և անձրեւ հեղուս , հանգչիս .

Թէ դու լըցված ցամառդ է չափ՝
Յօրոտ եւ շանթ թափես սարսափ :

Ի՛մ ալ լըցված վըշտօք է սիրա ,
Ծանրեալ ճակատս է դառնաքիրա .
Բայց ո՛ւմ աչքիս գետեր դեղում ,
Պանդըխտիս ցաւ թափեմ ես ո՛ւմ :

Ա՛մպ , ա՛մպ . . . քան զիս շա՛տ երջանիկ ,
Տեղ մը չ՛ունիս քեզի բընիկ .
Հիւսիս եւ կամ հարաւ վազես՝
Երկի՛նք բոլոր քեզ ասպարէս :

Իսկ ես՝ որչափ առնում մի քայլ
Թափեմ արցունք , զի քայլ մըն այլ
Ի հայրենեաց իմ հեռանամ . . .
Քայլ մ՛ալ ի մա՛ն յառաջ գընամ :



Ե Ր Գ Գ .

ՀԱՅ ՄԱՅՐ ՄԸ

O l'amour d'une mère !
VICTOR HUGO

Ա.

Ձըմբան տըխուր այն գիշեր
Սեփ սեւ մըթնած էր երկին .
Յուրտ մէկ քամի կը փչէր ,
Եւ սառ պատեր էր գեաին :
Ծառոց ճիւղեր մերկ ու չոր՝
Անպատըսպար դողալով ,
Շառաչէին սըգաւոր
Սոսկումն ի սիրտ աղղերով :

Ձըմբան տըխուր այն գիշեր
Երկնի ծագեալ էր արեւ .
Ձըմբան տըխուր այն գիշեր
Հրեշտակ՝ մարդիկ՝ թեւ ի թեւ ,
ԶԱստուածորդւոյն աճնէին
Վայրաբերել ի յաշխարհ ,
Փարեալ ի գիրկ սուրբ Կուսին՝
Իբր ըզմանձկ մի խոնարհ :

Ձըմբան տըխուր այն գիշեր
Տըներ բոլոր մութ էին ,
Բայց տաճարին լուսանցեր
Բոցաճաճանչ շողային :

Բոլոր արներ լուս կային
Իբրև մէյմէկ գերեզման ,
Բայց բարձրագոյ թընդային
Յարկք տաճարին աստուածեան :

Հաւատացեալք այն գիշեր
Իբրու զաշխարհ մոռնալով ,
Ամէն հասակ էր վաղեր
Երկնից Մանկան մըսրին քով :
Կէսք զըւարթնոց երգակից
Աղաղակեն ս'վասննայ .
Եւ այլք հովուաց դասակից՝
Սըրտեր բերեր են յընծայ :

Ձըմբան տըխուր այն գիշեր
Ամէնուն սիրտ էր ուրախ .
Փայլ շընորձնոց երկնաբեր
Մերժեալ էր ցուն ու ախախտ :
Կարծես յայն սուրբ տաճարին
Զերկրի սիրտմանց անապակ
Մանկանացուք ըզգային
Զտրեպարսր ըզճաշակ :

Բ.

Այլ հրեշտակային երգոց զուգահեւ
Եւ եկեղեցւոյն օրհնից բերկրաւէտ՝
Նսեւ վըշտայից ձայն մը այն գիշեր
Հիւղի մը մէջէն կը թըռչէր ի վեր :

Ձայն մըն էր՝ մուցված բոլոր մարդկա նցմէն . .
Բայց ո՛չ ընդհատ քաղցր ալէլուներէն
Եւ զայն ձայն բեկբեկ կը լըսէր յերկնից
Այն՝ որ միակ յոյսն է կոտորած սըրտից :

Որ խնկոց անո՛ւշ անուշ բուրմունքէն՝
Որք ամպ ամպ ծըխին ի սուրբ Սեղանէն,
Առաւել սիրով յեթերց հոտոսի
Ի դա՛ռն զըմուռ թըշուառ մէկ սըրտի:

Թըշուա՛ռ մէկ սըրտի մըրմունջ էր և այն,
Մօր մը հառաչա՛նք էր կողկողածայն,
Որ քըսան տարուան ի ծաղիկն հասակ
Այրի մընացած էր որդւոյ միակ:

Արդ և այն մատաղ գեղարոյս որդին,
Մօրը բոլոր գանձ և յոյս սրբակին,
Դեռ հազիւ գարունն ըսկըսեր կենաց՝
Ընկած էր զինչ վարդ ի շունչ փոթորկաց:

Մանկանն օրոցքին քով ծունկ ընկած մայր,
Պաղեալ անդամոց նորա շունչ կուտայր.
Փափկիկ նորա թաթ ի ծոցին ծածկէր,
Ջերմրիկ արցունքովն ըզնա ողողէր:

Թէ շունչ զիւր համայն լինէր կարելի
Սըրտէն անցընել յայն սիրտ փարելի,
Ո՛չ, ոչ դանդաղէր մայրն այն տալ զոգին,
Շա՛տ էր թէ սպրէր խանդակաթ որդին:

Ո՛հ, ինչո՛ւ զաւկին՝ մայր մը բարեխնամ
Կարող է տալ կեանք միայն մէկ անգամ...
Ինչո՛ւ տաք շընչուն՝ տաք արցունքներու
Չըտըւաւ Աստուած ոյժ կենդանատու...—

Մէյ մ'ալ անդիէն մօրն այն ցաւազին
Յակննջ հասաւ թինդ ժամու զանդակին,
Կարծես հրեշտակին լըսէր ըզհրաւէր,
Արթընցս՛ւ... ցաւէն ըզտօն մոռցել էր:

Մածկեց ըզճակատն ի քօղ սըգապատ,
Յանձնեց իւր մանկիկն Աջոյն երկնառատ,
Եւ դողդոջ քայլիցն ուժ տալով յեփն՝
Հասաւ ու մըտաւ սուրբ Եկեղեցին:

Տեսաւ որ երկիր և երկին բոլոր
Երանի՛ կուտան Մօր մը երկնաւոր.
Ինքն ալ ցանկացաւ ասել բան մ'ուրախ,
Խնճ մայր, ու սըրտէն թըսաւ սուր մէկ ակախ...

Գ

« Մայր երկնաւոր, քեզմէ լաւ ո՛վ կըրնայ՝ ո՛վ
Մօր մը սրաին ըզգալ ցաւեր ու խորով...
Ո՛վ քեզմէ դառ կարող է, Մայր սրդեակը,
Չորցընել մօր մ'արցունքներ:

« Որ դո՛ւ այլ նոյն վիշտ ու վէրքեր քաշեցիր.
Քր դո՛ւ ալ նոյն լեզի արցունք թափեցիր...
Որ դո՛ւ այլ քո Որդւոյդ տեսար մահն ի խաչ...
Մօր մը լըսէ դա՛ռն հառաչ:

« Բո մայրենի սըրտիդ խօսի մօր մը սիրտ,
Քաշածներէդ իմ քաշածներս ա՛ռ ի միտ.
Դու՛ որ Որդւոյդ վերայ ս՛նչսփի դողալիր,
Ի Աստուծո՛յ մը մայր էիր:

« Ըզքեզ՝ զւարթունք կ'ըսփոփէին մըտերիմ,
Ես ի՛նչ ընեմ, խնճ կ'ինս որ մէկն այլ չ'ունիմ.
Մէկն այլ չ'ունիմ՝ աայ ընդհանատու ոյս ուշի՛ւ,
Եւ մահ փութայ զըրկել զիս:

« Մի՛, ո՛հ, մայր, մի՛. դու որ գիտես ի՛նչ անբաւ
Մօր մը սըրտին սրդւոյն իւր մահ կուտայ ցաւ.

Քո մայրութի՛ւնդ ինձ բարեխօս ու զաւեր,
Մանկիկա ինէ մի՛ բաժներ:

« Եթէ անմահ Որդիդ վըճռած է յերկին՝
Որ հրեշտակաց հետ քոյն առնու զիմ որդին,
Ո՛վ Մայր, դո՛ւ ալ ողորմէ՛ մօր մը վերայ,
Զաւելիս հետ շունչս ալ երթայ: »

« Թէ չըկրցայ սովորեցնել ըզքայելի,
Գէթ ցուցընեմ նըմա յերկինքս թըռչելի.
Հոն քու անուանս: յօրհներգութեանց ալելու՛
Աւելնամք հեզ ձայնք երկու: »:

Գ

Այսպէս հառաչեց մայրն այն վըշտակիր,
Եւ արցունքներով ողողեց զերկիր.
Եւ երբ բաւական հեծեց ու լացաւ,
Տըխուր էր եկած՝ ըսփոփեալ դարձաւ:—

Ազօ՛թք... ոհ, ի՛նչպէս հէզ մահկանացուի
Դու ըսքանչելի պարգեւ ես երկնի.
Ո՛ր ցաւ է սրբաի զոր ոչ բըժըչկես,
Ո՛ր բեռն ա՛յնչափ ծանր զոր ոչ թեթեւես:

Այո՛, ի գահէն մինչ յորբն ու ազքատ՝
Ի քո գիրկի դիմն զըթա՛ճ և առատ.
Եւ երբ թըշուառին յոյս կըտրի ամէն,
Ո՛վ Ազօ՛թք, յեախն ևս զու ապաւէն:—

Ե

Զըմբան տըխուր այն զիչեր
Անյաւ, և նոր ծաղեց օր.

Օրն այն ձըմբան տըխուր չէր,
Արեւ փայլէր անսովոր:

Զի երկրէ ճիչ մը պահած,
Ու մայրենի մէկ հառաչ,
Բայց էր յերկին աւելցած
Երկու սղոց քաղցր աւաչ:—

Իրիկուան զէմ վառեցան
Մեռելոց մութ լապտերներ.
Ու հանդըստեան լըսվեցան
Շարականներ, սաղմոսներ:

Եկեղեցւոյն առաջեւ
Սեւ մէկ դադաղ անցուցին,
Երկու զւարթունք թեւ ի թեւ
Անուշ հոն քուն լինէին:

Մէկմէկու զիրի պըլըված
Ելեր էին զէմ մահուան,
Մահ նոյն սըրով էր կըտրած
Վարդն ու կոկոն անբաժան:

Ո՛հ, անբաժան իրարմէ
Երկուքն ի նոյն հանդչին հող.
Զերկուան ալ նոյն խոտ ծածկէ,
Երկուքն ալ նոյն կ'ըմպեն ցող:

ԵՐԳ Դ.

ՆՈՐԱԾԻԼ ՏԵՐԵԻՔ

Հաղիւ լուսոյ դողդոջ փայլ
 Պատուեց զամպոց սեւ մըռայլ .
 Մեր զաշտերուն՝ հազի՛ւ ձիւն
 Դարձոյց զիւրեանց սեւութիւն .
 Եւ դուք վակժոյժ ի փըթիթ
 Գայք մեզ ժըպիտ ի քըթիթ .
 Նախածի՛լ տերեւք ,
 Բարե՛ւք ձեզ , բարե՛ւք :

Դեռ մարգերուն մեր զըրտիկ
 Զ'եկաւ այցող ծիծառնիկ ,
 Դեռ սոխակին հեշտավանդ ,
 Զ'եաուն ծործորք արձագանդ ,
 Եւ դուք փութայք սիրալիր
 Խընդի՛ց հրեշտակք ի յերկիր .
 Նորածի՛լ տերեւք ,
 Բարե՛ւք ձեզ , բարե՛ւք :

Կանաչ երանդ ձեր փափկիկ ,
 Զեւ և իրան ձեր մանրիկ ,
 Ո՛հ , աչերուն մեր ծարաւ
 Ի՛նչպէս անուշ փայլեցաւ .
 Տոխուր ոգիք՝ ձեր տեսքին
 Կըզլարթանան՝ ւ ըսփոփին .
 Նորաբո՛յս տերեւք ,
 Բարե՛ւք ձեզ , բարե՛ւք :

Եկէ՛ք, եկէ՛ք մեր հովտաց
 Շողալ ի ծոց մըթազգեաց .
 Եկէ՛ք ծառոց մեր ի դող
 Զըգել ի գլուխ կանաչ քող .
 Եկէ՛ք արբառւմ բընութեան
 Նոր չըպարել կերպարան .
 Առաջին տերեւք ,
 Բարե՛ւք ձեզ , բարե՛ւք :

Եկէ՛ք, գարնան նորարոյս
 Ծագել վարդեց արշալոյս ,
 Եկէ՛ք հրաւեր տալ առ սիք
 Խաղալ ընդ ձեր խոպուպիք .
 Ծաղկանցն սաէ՛ք քաղցրահոտ՝
 Գան , ո՛հ , կարօ՛տ եմք կարօ՛տ .
 Նախածի՛ն տերեւք ,
 Բարե՛ւք ձեզ , բարե՛ւք :

Եկէ՛ք, եկէ՛ք ո՛հ տերեւք ,
 Եկէ՛ք յուսոյ յանուշ թեւք
 Մեր սիրեցեալ տապանին
 Ծածկել ըզհող արխրազին .
 Ա՛հ այն ոսկերց անձկալի
 Եզէ՛ք պըսակ ցողալի ,
 Նորածի՛լ տերեւք ,
 Ո՛վ հրեշտակաց թեւք :



Ե Ր Գ Ե .

ԱՌՏԱՃԱՐՆ ԶԱՅՈՑ

ԱՌԷՆ ՊԱՆԴԻՍՏԻՆ

« Բանահայր նորա հարաչեն . . . »
ՈՂԲԲ. ԵՐԵՄ. Ա.



« Ե՛լ, ժամանակն է եկել,
« Ե՛լ, Հա՛յ պանդուխտ, ե՛լ ի դուս .
« Ե՛լ, ժամանակն է եկել
« Որ դու առճար դայս թողուս . . .

« Ելի՛ր, դու հոս չ՝ ունիս այ ինչ՝ բայց քընա՛ր ջախջախ
« Ա՛ռ զայն ի յուս ու ե՛լ ի դուրս՝ թէ կ՛ ուզես տալա՛ր »:

*
*
*

Ու ելայ՝ նըման աղքատին՝ խեղճիկ՝
Չոր հուրն ըստիպէ թողուլ զիւր խըղիկ .
Կ՛ ելլէ՛ ու չ՛ ե՛լլեր, քայլեր չ՛ են շարժիր,
Կըստիպէ վըտանդ, սիրտ չը՛բաժնըւիր:

Ծընկուրներս ի դող՝ հասի վըրան մօտ,
Անկայ ի գետին, պաղի անձկարօտ .
Եւ շա՛մ թւփեցի արտուոնք ուղիւօրէն .
Կարծէի զոգիս ի կըրծից քաղեն:

Ո՛հ, ինձ երանի՛ թէ ի ժամն այն սեւ
Հասնէր մահ, խըլէր սըրոյն զիս Կերքեւ,

Որ զեկեղեցւոյն մեր սըրբանըւէր
Չըտեսանէի՛ աչօք իմ գաւեր . . .

Տէ՛ր, Տէ՛ր, դու զորոտօսիմ սակայն տեսար,
Տեսար, եւ ի՛նչպէս ինձ չ՛ողորմեցար .
Ինչո՛ւ հեծութեանցս ետեւէ յերկին
Չընրամայեցիր որ դայ իմ հօգին:

Արդեօք զի տեսնե՛մ սըրբաշնորճ զայն տուն՝
Չոր դու կընքեցիր յերկնա՛խորդ Անուն,
Ծաղր ու սաբնա՛ր եղեալ թըշնամեաց,
Եւ փակեալ յերես քոյոց սիրելեաց:

Արդեօք զի Սեղանն՝ ուր կը գնուլէիր՝
Տեսնեմ զինչ բազին տապալեալ յերկիր .
Կամ զերդ կոյս անբիծ զսրոյ պատուէն քող՝
Տեսնե՛մ ես ըզնա մերկ յամօթ ի հող:

Արդեօք զի ըզսուրբ կանթեղ պըսպըզուն՝
Որ մեզ բարեխօս հըսկէր միշտ արթուն,
Տեսնե՛մ շիջուցեալ ի շունչ անվաւեր,
Իբրեւ ըզսարեկ որ խըփէ զաչեր:

Արդեօք զի վանուշ ծուխ Հայ մեր խընկոց՝
Որ այգուն այգուն խառնէր ընդ ամպոց,
Տեսնե՛մ ցընդեալ յօդ զերդ ծուխ մահազգեաց
Որ յամալարըշտին զիզանայ յարկաց . . .

Տեսայ՛ զայս ամէն, տեսայ ես, Բա՛րձեալ,
Տեսայ, եւ արտուոնք իմ զեղան ծուալ .
Տեսայ եւ հառաչք իմ լըցին զայեր . . .
Արդեօք մինչ ի քոյդ ականջ հասին, Տէ՛ր:

Արդեօք մինչ ի քո՛յդ... զի մարդիկ, ա՛հ, խուլ
 Խո՛ւլ եղան յամէն աղերս մեր անդուլ.
 Խո՛ւլ յամէն յորդոր, արտօսք ու պատճառ,
 Եւ չըխնայեցին ի քո վեհ ստաճար:

Մարդիկ, — ի՛նչ յիշեմ ես զանունն նոցին.
 Միթէ քեզ ծանօթ չե՞ն ծածուկք սըրտին...
 Բայց դու ողորմէ՛, ողորմէ՛ Աստուած,
 Զի ի՛մ ազգայնոց է և այս յանցուած...

*
 * *

Սո՛ւրբ ատեն, որ ինձ միշտ եղար հիւրընկալ,
 Ըզվերջին սրբախ գոհուլթիւնս ընկա՛լ.
 Եւ ինչպէս ըզլւարթ երբե՛մն աղաչանս՝
 Արդ զիմ յուսարեկ հընչէ՛ հառաչանս:

Յատա՛կ տաճարիդ և սըրբազան հող,
 Առէ՛ք զարտասուեաց իմ վերջին ըզցող.
 Եւ դուք սո՛ւրբ որմունք, զայս իմ ողբ յետին
 Ո՛հ, լարձրացուցէ՛ք մինչև ի յերկին:

Բայց հնչեցուցէ՛ք ծաւալ և յերկիր,
 Հասուցէ՛ք յսկանջ եղբարց զուգակիր.
 Ու թէեւ նոցա կաթիլ մի ցողվի՝
 Պանդըխտախ գէթ սիրտ յա՛յն լոկ ըսփոփվի:

1859 ի Փարիզ



Հ Ո Պ Ի Կ Հ Ա Յ Բ Ե Ն Ի

Ո՛ւր ես Հայրենեաց իմ հովիկ անուշ...
 Գարունն է եկեր ծաղկամբ իւր քընքուշ,
 Արեգ կը ժըմտի բընուլթեան առջև,
 Ա՛խ, Հայոց հովիկ, չըտա՛ս մեզ բարե...

Օտար երկնի տակ. զո՛ւրկ մեր ասաղերէս,
 Երբ գարուն փայլի՝ ա՛խ, կ'արտասուեմ ես...
 Պանդըխտին համար արեւ փայլ չունի՛...
 Ո՛ւր ես, ա՛հ, ուր ես հովիկ հայրենի:

Գարուն՝ յորոյ ծոց չըչողար ծաղիկ
 Որ բուսած լինի ի Հայ Եղեմիկ,
 Գարունն չ'է՛ Հայուն, ձըմնու կ'երեւի...
 Ուր ես ա՛խ ո՛ւր ես հովիկ հայրենի:

Ո՛ւր ես, քեզ կարօտ եմք հովիկ Մասեաց,
 Կարօտ քեզ հըծծի՛ւն Արմաւրեան սօսեաց.
 Մուցա՛ր թէ մենք քեզ կ'ըպասենք ի սուգ...
 Ո՛ւր ես, ա՛խ ո՛ւր ես Հայրենեաց իմ սիւգ:

Ահա բընուլթիւն հեշտ հրաւէր կարդայ
 Տօնել յաղթուլթեան նորա զտարնկայ.
 Հայեցան սառուցք, զարթեր են ծաղկունք.
 Ո՛ւր էք հայրենեաց իմ սո՛յք անուշունք:

Հովիկ, ա՛խ յերկար ոգւոց մեր ձմերուն
 Եկո՛ւր մեզ բերել ըզՀայոց գարուն.

Եկո՛ւր արթնցնել մեր վե՛ն պարծանքներ...
Հովի՛կ հայրենի, մուցա՛ր դու զՀայեր:

Մուցա՛ր մեր աչեր, մեր սըրտեր մուցա՛ր,
Ինչո՛ւ չես խառնիր մեր յողբ և յաշխար.
Ինչո՛ւ մեր քընար հեծէ յարտասուք
Եւ դու չես թրթւեր զայն ո՛վ Հայոց սիւք:

Ա՛խ, մեր Հայրենեաց բե՛ր աւերներէն
Փոշեակ մը մեր պերճ Հարց սակրրներէն,
Բե՛ր նոցա հաւաչ, հըծձէ՛ մերին հեա,
Ո՛վ Հայաստանեայց հովի՛կ կենսաւէտ:

Բե՛ր Հայաստանի գէթ մէ՛կ յիշատակ,
Յափանց Երասխայ հասցո՛ւր մէկ կայակ.
Խառնին մեր Հարց հետ արտասուք և ծիծաղ,
Ո՛ւր ես հայրենի սիւք կենսախաղաղ:

Ո՛ն, գըրգէ՛ զՀայուն դու ճակատ և ծոց,
Արծարծէ՛ ինա հայրենավառ բոց.
Հասի՛ր մըխիթար զգայմանց ազգասէր...
Ո՛ւր ես հարց ճըծեալ հովի՛կ կենսաբեր:

Ո՛ւր ես... Հայ բամբուռն շընչէ զօրութիւն
Գողթան քերթողաց բե՛ր սոյլ և զաւիւն.
Հայոց սըրտերուն ազգէ՛ նոր խրախոյս,
Հովի՛կ հայրենի արթընցո՛ւր մեր յայս...


Ե Ր Գ Է.

ԹԷ ՏԱՅԻՆ ԻՆՃԻ

Թէ տային ինձի
Թագ և ադամանդ գաւաղան,
Քե՛զ զայն ձօնէի,
Թագունեաց գըլխոյ Հայաստան:

Թէ տային ինձի
Ծիրանի շողշող պատմուճան,
Քս յուս ձրգէի,
Ո՛վ իմ մայր թշուառ Հայաստան:

Թէ տային ինձի
Հուր բոց զիմ հաւուրց պարմանեան,
Քե՛զ պարգեւէի
Զաւիւն իմ և խանդ, Հայաստան:

Թէ տային ինձի
Դարերու հոյլ ի հոյլ շըրջան,
Սիրով քեզ տայի
Զիմ կեանք և հոգին Հայաստան:

Թէ տային ինձի
Սիրա և սէր կուսանի շուշան,
Ես քե՛զ ընտրէի
Սըրտիս միակ սէր Հայաստան:

Թէ տային ինձի
Պըսակ յիմ ճակատ մարդարտեան,
Զաչքիդ ընարէի
Արտասուաց մի չիթ Հայաստան:

Թէ տային ինձի
Գոռ ազատութիւն անտահման,
Ես վերընտրէի
Քս վեհ գերութիւնդ Հայաստան:

Թէ տային ինձի
Հայրենիք չըքեղ Եւրոպան,
Ես քե՛զ ինդրէի
Բոլոր ցաւերովդ Հայաստան:

Թէ տային ինձի
Սըրտիս իմ ընտրելի օթեւան,
Զաւե՛րսդ ասէի
Ինձ արքայութիւն Հայաստան:

Թէ տային ինձի
Հրեշտակի քընար բոցաղեան,
Ես քե՛զ երգէի
Բոլոր իմ շընչով Հայաստան:

Ե Ր Գ Ը.

ԱԶԳՈՒՐԱՅ ՀՍՅԵՐ

Երէկ մեր մէջ, այսօր՝ արդէն օտարցած,
Այսպէս դուք չուտ էք ձեր ըսկիզբ մոռացած.
Ո՛վ էք դուք վա՛տք, որ ըզձեզ բան մը կարծէք.
Հայկայ դուք խո՛րթ որդիքն էք:

Հայաստանի վիժած ծընո՛ւնդք սպըստամբ,
Ձեզ Հայութիւնը կը նայի սարսափմամբ.
Բա՛ղդ է մեզի որ զերկնասառը անուն մեր
Կըրել ի ձեզ չէք ուզեր:

Երկինք ի զլուխ ձեր կ'որոտայ զիւր վըճիւ,
Երբե՛ք պիտի չը խնայէ ձեզ երկիր.
Եւ Պատմութիւն՝ արձանագրեց անողոք
Ձեզ դէմ զարդա՛ր մեր բողոք:

Օտարանալըդ կ'երեւի ձեզ պատիւ,
Այլ ա՛յդ իսկ է ձեր բուն ամօթը լըրիւ.
Օտարացէ՛ք հեռացէ՛ք ս'ըչափ կամիք.
Մի՛շտ էք Հայոց դասալիք:

Հայոց բանակն ո՛վ որ զըրժէ այլասէր.
Նա Աղգութեան է ըսպանօ՛ղ վատըւէր.
Ազգին զբօշու հաւատարիմ չեղողին՝
Դէ՛մ են երկիր և երկին:

ԸզՀայութեանդ եղծե՛լ կ'ուզէք վեհ կընիք,
Ուր ալ երթայք՝ անջինջ ըզկեղտ ձեր տանիք.

Արհամարհանք, զըզուանք են ձեր դատակնիք
Սէր, մեծարանք՝ ուստեք չիք:

Ձեր ազգութեան՝ դուք էիք ցաւ, նախատինք,
Ձրկայ ազգ մը որ արդ ժողվէ ըզձեզ յինք,
Ինչ և անուն ձեզ տայք՝ անուն դուք չունիք,
'Ի ոչ սըրբազան Հայրենիք:

Դուք որ Հայուն չըքեղ՝ անցեալն ուրացայք՝
Ո՛վ սինլքորք, ձեզ ապագայ մի՛ յուսայք.
Մեր վառ աչերն առ այն կ'ուզղին իբր ի լոյս,
Ձեր մեռեալ սիրտ՝ չունի՛ յոյս:

Ձեզբայրական անարդեցիք մեր սուրբ յարկ,
Գացէ՛ք գըտնել ձեզ օտարէն երդ և վարկ.
Պիտի աեսնէք թէ ձեր ունայն էր երազ,
Ու միշտ ծըփիք քան զաւազ:

Ե Ր Գ Թ.

Ի ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏՕՆ

Ն Ո Ւ Ա Պ

Ողջո՛յն քեզ ս՛վ երջանիկ օր
Որ կը ծագիս մեզ յեթերաց լուսաւոր,
Քեզ իմ Հայեր կը սպասէին մեծայոյս,
Ե՛կ տալ նոցա կեանք և լոյս:

Խաւար օրեր, օրեր արեան
Շա՛տ մեր հայրեր ունեցան, շա՛տ Հայաստան.
Մեզ երանի՛, երկինք ի հաշտ մեզ բաժին
Ըզքեզ ս՛վ վե՛՛ն օր տըւին:

Օր որ ի ցոյս երկնաճաճանչ
Քերիբ մեզի զազատութիւն աննահանջ,
Ու զգերութեան կոտորեցիր խիստ չըզթաներ
Յոյր կապէին մեր թեւեր:

Ամէնզ եղբա՛րք էք հաւասար»
Առ մեզ պատգամ որոտացիր սիրաբար.
Եւ մերժեցիր Հայոց սրբաէն յաւիտեան
Ըզձանրութիւն բըռնութեան:

Մեզի սահման տըւիր ըզՊարտք,
Մեր իրաւունքը ճանչցուցիր գոլ մեր փա՛ռք.
Եւ արթընցան սգիք այս վե՛՛ն բառերու
Ըզգալ զիմաստ կենսատու:

Քո շընորհիւդ Հայուն մըտաց
 Լուծան կապանք, առնուլ սխաւ շունչ կենայ .
 Շունչ՝ որ իրեն պարգեւեց նոր յանկարծ յոյս ,
 Եւ մարդկութեան մէջ խրախոյս :

Դու գլուսաստիւու քոյին թեւեր
 Հայոց զըմխեմ խաւարին մէջ պարզեցեր .
 Ըսիր , մտցէ՛ք զանցեալ ողորմ՝ ձեր պայման ,
 Դարձցի՛ն ձեր աչք յապագան :

Ապագայն ձեզ եթերածեմ
 Ողջոյն կուտայ յայն նայեցէք յուսադէմ .
 Ի լալ սովրած ձեր այդ աչքին սրբեցէ՛ք ,
 Հայեր , հերի՛ք դուք հեծէք :

Ձեր հառաչանք բազմադարեան
 Յաւոց հովտեղ մինչ յե՛նովայն բարձրոցան .
 Զւարթնոց երգոց մէջ խառնեցան ողբք յերկին ,
 Շարժեցաւ գութ Անմահին :

Անա Հրեշտակն Հայաստանեայց
 Աւետաւոր ձեզ առաքի յեթերաց .
 Յահեակ ձեռին շողայ պըսակ լուսագգեաց ,
 Յաջ՝ զաշնագիր ձեր կենաց :

Այն Օրինացն է ձեր մատեան՝
 Որ ըզբազլիդ ունի ի ծոց գրուական .
 Հո՛ն ամբիօրեալ կան ձեր բոլոր յոյս , պարծանք ,
 Հոն միայն ձեր , Հայեր , կեանք :

Օ՛ն փութացէ՛ք զըւարթադէմ
 Ողջունեցէ՛ք ըզձեր Հրեշտակ երկնաձեմ .
 Նորա թեւեր ձեզ սաւառնին հովանի ,
 Դողաց ալգիդ թըշնամի :

Ձերկիւղ սըրտէդ հալածեցէ՛ք ,
 Եւ ինքզինքնիդ Հայ ըլլա՛նիդ ըզգացէ՛ք .
 Ձեր իրաւունք պոշտպանեցէ՛ք լիութի ,
 Ձեզ Պարաքդ ըլլան պաշտելի :

Հայեր , ոստիք ձե՛ր մէջ են բուն՝
 Ատելութիւն , նախանձ , հերձուած , չարութիւն .
 Ասոնց դէմ՝ օ՛ն ելէ՛ք ի խաղճ անտրիւն ,
 Յաղթո՛ղ ելլէ Հայութիւն :

Ձեր Կըրօնից նըշանն է Սէր ,
 Ձեր Օրինաց գիրք՝ Միութիւն տայ պատուէր .
 Հապա , Միրոյ և Միութեան զինուորներ
 Բանակ մ՛եզիք անվեհեր :

Խաչակրութիւն մը Հայկական
 Հաստատեցէ՛ք դէմ Անմիաբանութեան .
 Որ ձեզի հեա այս սուրբ մտրախն չէ կըցորդ՝
 Նա չէ՛ Հայոց ժառանգորդ :

Ե Ր Գ Ժ.

Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

... ήριγένεια φάνη ἔσδογάκτυλος Ἡώς.
IAIAA Παρωδ. Α. 477

Վարդեր ու վարդեր
Թերթի ի թերթի փրթիթեր,
Ի կապոյտ եթեր
Զիւնափայլ ամպեր՝
Քայլերուդ առջեւ
Սրբուելով թեթեւ,
Քեզ՝ բնութեան հետ՝
Յայս ժամ հեղաւէտ՝
Մընան մեծայոյս,
Ո՛վ քաղցր Արշալոյս:—

Անա շող ի շող
Շուշանայ ի քող,
Զիւր սոկենըչոյ
Վարսեր հոյ ի հոյ
Ծուփ ի ծուփ իսփիւս՝
Թողով ի զեփիւս,
Եւ մարգրրաայտ
Պարզելով թեւեր՝
Նազի Արշալոյս,
Երկընքին այն կոյս:

Անա վառ ի վառ
Ճակատուն գոհար,
Եւ բըբերն անուշ
Քրթիթելով քընքուշ,
Զերկին և զերկիր
Գըրգէ սիրալիր.

(*) Ծագեցաւ այգաժընունդի վարդամասն Արշալոյս.
ՀՈՄԵՐ. ԻԼԻՍԱ. Ա. 477

Շրթներուն իւր վարդ
Ի ժրպիտ զըւարթ՝
Ծաղկանց թոյր ի թոյր
Հեշտից ցողէ բոյր:

Անա սոյլ ի սոյլ
Թընչնեկացըն բոյլ՝
ձըսուողն ընդ բոյս,
Ողջո՛յն Արշալոյս.
Ողջո՛յն ո զմըւայլ
Փոխարկես ի վայլ,
Ու զտըխուտ երկիր
Գործես ցընծայիր.
Ո՛հ յէից ողջոյն՝
Արշալոյս, ողջո՛յն:

Քեզ ամէն ոք տայ
Զիւր ձօն նախընծայ.
Քեզ՝ ըզփափկագոյն,
Քեզ՝ ըզսրբագոյն.
Քեզ՝ ամալ, սիւք, վըտակ,
Ծաղկունք և սոխակ,
Ամէնք ասն քեզ գով՝
Հային քս սիրով,
Ո՛վ երկնային կոյս
Սիրուն Արշալոյս:

Ո՛հ, դու որ այժպէս
Մեր սիրան ըզմայլես,
Մեր բրբերն ազօտ
Մի՛ թողուր կարօտ.
Երբ գերեզմանին
Յաղճամուղջ փակվին...
Այլ զանուշ քս լոյս
Եւ աչաց՝ ողբոյս
Շողչողայ ի յոյս,
Կուսան Արշալոյս:

Ե Ր Գ Ժ Ա .

Թ Շ Ո Ւ Ա Ռ Հ Ա Յ Ե Ր

Ա .

Ամէն օր նոր ցաւ, ամէն օր արցունք,
 Հայեր, արտասուած ց առած էք կընունք...
 Ամէն դառնութիւն, վիշտք դրժոխըմբեր
 Ձեզ միայն պահված են, թըշուա՛ն Հայեր:

Հայրենիք ձեր սուրբ՝ աւերակ տըխուր,
 Վըրան արիւնուշտ կախված Քիւրափն թուր,
 Չունիք ըստացուածք, դողայք տիւ գիշեր,
 Կեանք է ձեր կեանքը, ո՛վ թըշուա՛ն Հայեր:

Կուլայք... բայց ո՛վ ձեր տեսաւ արտասուք,
 Ո՛վ կը լըսէ ո՛վ երբ հեծեծէք դուք.
 Ձեր ճակատագիր կարծված են վըշտեր,
 Որո՞նք փոյթ ձեր վիշտք, վա՛ն թըշուա՛ն Հայեր:

Բիրտ Սեւեռընցւոյն պաշտպան Եւրոպայ,
 Վայրագ Մարմնուոյն բանակներ կուտայ,
 Իսկ ձեզ՝ կը նային աչօք անտարբեր,
 Քա՛ր են սիրտք ամէն՝ ձեզ, թըշուա՛ն Հայեր:

Որո՞նք հոգ թէ ձեր կոյս Եկեղեցի
 Չազրալից Քիւրաէն պըղծեալ աւերի...
 Թէ՛ ձեր աղօթից հեա երկնանըւէր
 Խառնի ծուխ արեան ձեր, թըշուա՛ն Հայեր:

Որո՞նք հոգ թէ ձեր քըրտունք դառնաշխատ
 Բարբարոսաց ձեռք կողոպտին անդատ.

Որո՞նք փոյթ թէ ձեր տուն, արտք են յաւեր...
 Վըճուեալ չէ՞ ձեզ լալ, իմ թըշուա՛ն Հայեր:

Ո՛ւմ փոյթ թէ սրգիքդ՝ իբր ըզխտտ հընձվին,
 Թէ՛ գըրկէդ կուսանք վարդից պէս խըլվին,
 Թէ՛ սուրբ առագաստ ձեր սըգայ գիշեր...
 Է՛ն, միթէ մա՛րդ էք դուք, թըշուա՛ն Հայեր:

Միթէ դուք մա՛րդ էք որ խուժն անօրէն
 Հրացան վար դընէ, պատկառի ձեզմէն.
 Միթէ դուք ա՛նգ էք որ բիւր ձեր ցաւեր
 Ի նկատ առնըվին, ա՛ն թըշուա՛ն Հայեր:

Թ՛ո՛ղ երկիր խըմէ արիւնդ բընաւլէժ...
 Թ՛ո՛ղ քընքուշ կանայք՝ թոռմին անլըրէժ...
 Թ՛ո՛ղ քանդվին տաճարք և սուրբ ձեր վանքեր...
 Օտարայն ուղած այս չէ՛, խեղճ Հայեր:

Օտարին փափաք այս չէ՞ որ ո՛ն միշտ
 Օր օրուան վըրայ ծանրանայք ի վի՛շտ,
 Որ եկեղեցիդ քայքայի յաւեր:
 Եւ ոսոխք զարնեն ծափ, թըշուա՛ն Հայեր:

Օտարին ինդրածն այս չէ՞ որ բընաւ
 Չը մնայ Հայուն անուն և համբաւ,
 Կործանիք յայրոց, անտուն և յերեր,
 Կործանէք զիրեար, ո՛վ թըշուա՛ն Հայեր:

Բ

Այսպէս են օտարք.— իսկ դուք աւելի
 Միթէ գո՛ւթ ունիք աղգիդ եղկելի.

Հայրենեաց ցաւոց ո՛չ դուք անտարբեր
Օտարի նըման կը նայիք, Հայեր:

Ո՛չ սառած սրբատու եղբարցդ ազեաից՝
Ոսու էք հառաչմանց նոցա մահաղից...
Ողիք ձեր՝ փոխան զգացմանց ազգասէր
Չն՞ս լըցեալ սխալ, կրբիւք, ո՛վ Հայեր:

Ե տւթիւն անգութ սրբտերնիդ գրաւած,
Փանա ազանութեամբ հարուստք կարկամած,
Այն ատեն միայն կ'իմացի կեանք ձեր
Երբ ձեր եղբոր զէմ վառվիք, ո՛վ Հայեր:

Ո՛հ, բայց ձեր այդ կեանք որ տայ մահ եղբոր
Նըզո՛վք և կեանքիդ բերձ, ահաւոր,
Ո՛ր, ո՛ր ազգութիւն այսպէս կ'երթայ ձեր՝
Թէ չէք միանար դուք, թըշու՛տ Հայեր:

Թըշուտ առաւել էք դուք վա՛ն այնչա՛փ
Որ թըշուտութեան ձեր չը զիտէ՛ք չափ...
Աւա՛ղ. մինչև ցե՛րբ ի քուն մահատուներ
Պիտի չարթըննայք դուք, թըշու՛տ Հայեր:



ԵՐԳ ԺԲ.

Հ Ա Յ Ո Յ Մ Ա Յ Ի Ե Ր

Հայոց մայրեր,
Սիրո՛ւն մայրեր,
Չէ՛, ձեզ միայն չէ՛ք ծըներ
Չեր զաւակներ:

* * *

Այն կաթ ու մեղր անուշ արդայք՝
Առ որ ըզչունչ ծոցոյդ կուտայք,
Այն գայթ ի գայթ սիրո՛ւն արդայք՝
Որոց վերայ կը գուրգուրայք,
Ու երբ «Մայրիկ» կոչեն ըզձեզ՝
Համբոյր տայք բիւր կարօտակէզ.
Հայոց մայրեր,
Սիրո՛ւն մայրեր,
Չէ՛, ձեզ միայն չէ՛ք ծըներ
Չեր զաւակներ:

Այն կրակ ու բոց աշխոյժ որդիք՝
Զըւարճութիւնք ձեր մայրենիք,
Այն խեղացի ժիր պատանիք՝
Յոր ըզմայմամբ ողւայդ նայիք,
Իբր ի սըրտիդ յոյսեր բոլոր,
Պարծանք եւ գարդ ձեր փառաւոր.
Հայոց մայրեր,
Սիրո՛ւն մայրեր,

Չէ՛, ձեզ միայն չէ՛ք ծըներ

Ձեր զաւակներ:

Կա՛յ ձեզմէ՛ զատ կայ ուրիշ մայր՝
 Ձեր ու սրբւոցդ ամենամայր,
 Ո՛ր ձեր վախեր, վիշտ ու ցաւեր,
 Ուրախութիւն, փափաք, յոյսեր,
 Ու մայրենի զգացմունքդ անչափ՝
 Ձեր հեա և ինք կը զգայ ձե՛ր չափ:

Հայո՛ց մայրեր,

Սիրո՛ւն մայրեր,

Չէ՛, ձեզ միայն չէ՛ք ծըներ

Ձեր զաւակներ:

Որ ձեր արդոց օրոցքին քով
 Ձե՛ր հեա նըստի յոյս ըզյուսով,
 Ո՛ր առաջին նոցա քայլեր
 Կը համբէ՛ ձեր հեա սիրա յերեր,
 'Ի նըջանկութեան նոցա համար
 Կ'աղօթէ՛ ձեր հեա անդադար:

Հայո՛ց մայրեր,

Սիրո՛ւն մայրեր,

Չէ՛, ձեզ միայն չէ՛ք ծըներ

Ձեր զաւակներ:

Այո՛ այդքան սիրոյն փոխան
 Սէր պահանջէ՛ եւ Հայաստան,
 Հայաստան, մա՛յր մեր ամենուն,
 Հայաստան, կեանք մեր սրբաբուն,
 Հայաստան, յոյս մեր մութ ոչքի՛ն,
 Հայաստան, ս'ն մեր յոյս վերջին:

Հայո՛ց մայրեր,

Սիրո՛ւն մայրեր,

Չէ՛, ձեզ միայն չէ՛ք ծըներ

Ձեր զաւակներ:

Ո՛հ, ձեր անուշ անուան հեա մէկ
 Եւ զՀայրենեաց սովրեցուցէ՛ք.
 Սովրեցուցէ՛ք որ զՀայաստան
 Ձեր հեա սրդիք ձեր մայր ճանչնան.
 Ձեր հեա ըզնա մէկտեղ սիրեն,
 Ձեր և նորա սէր չըբաժնեն:

Հայո՛ց մայրեր,

Սիրո՛ւն մայրեր,

Չէ՛, ձեզ միայն չէ՛ք ծըներ

Ձեր զաւակներ:

Ա՛հ, դուք կ'երթայք. փափկի՛կ մայրեր
 Իսկ Հայաստան մնայ աներեր,
 Բայց թէ՛ զորդիս ձեր կըրթեցիք
 Ձեր հեա յիշել եւ զհայրենիք.
 Հայաստանի անուան հեա մէկ
 Ըզձերդ այլ ս'չ մտնան երբէք:

Հայո՛ց մայրեր,

Սիրո՛ւն մայրեր,

Չէ՛, ձեզ միայն չէ՛ք ծըներ

Ձեր զաւակներ:



Ե Ր Գ Ժ Գ .

ՊԱՆԳՈՒԽՏՆՆ

ԱՌ

Մ Ի Մ Ա Ռ Ն Ի Կ

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Քո էր ուրեմըն անտէրունչ այն բունիկ՝
Զոր այս երգին խորչ, — առաջին մըանելուս—
Տեսայ թափուր, և թափեց աչք արտասուս .
Արտասուս, զի յիշեցի ես աըխուր՝
Որ պանդըխտիս ալ բոյն ա՛յսպէս է թափուր :

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Ո՛հ, յինէ մի՛ հարթչիբ, փութա՛ քո բունիկ,
Յիս՝ բարեկամ մի՛ գըտանես և ընկեր .
Նըման քեզի պանդո՛ւխտ եմ ես, չ՛նս տեսներ .
Պանդո՛ւխտ, գիտեմ թէ՛ զի՛նչ քաջէ սիրա կարօտ,
Պանդո՛ւխտ, գիտեմ պանդըխտութեան ցա՛ւ մեռտա,

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Երանի՛ քեզ, ահա գըտեր քո բունիկ,
Պանդըխտութեան քո ժամանակ՝ լըցաւ կարծ,
Մոռցի՛ր վըշտերն ու ճըռուողէ՛ նորա՛ղւարծ .
Ի՛նձ թող ըզլիշա՛ որ ո՛հ գիտեմ ոչ բընաւ
Թէ՛ երբ և իմ պանդըխտութեանս է չըրաւ :

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Քո յոյս դարունն էր որ գըտնես քո բունիկ,
Իսկ ինձ՝ ձըմեան է յարատեւ ու ձըմեռ . . .
Հայրենեացս հետ կորեաւ դարունս վարդարեր :
Վա՛հ, պանդըխտին մաթ կ'երեւի լոյսն օտար,
Օգ՝ անախորժի ջուրը՝ լեզի, հացը՝ քա՛ր . . . :

Ծիծառնիկ, ծիծառնիկ,

Ախ, երբ դատնաս նորէն յանուշ յոյս բունիկ՝
Պիտի լըսե՛ս իմ բարեւիս դողողջ ձայն՝
Թէ՛ պանդըխտիս գըտնես խըրճիթ՝ յառ, սենա՛յն . . .
Թըռի՛ր յայնժամ գերեզմանին իմ հողիկ,
Հէգ պանդըխտին բեր հայրենեաց մի ցողիկ . . .

Ծիծառնիկ, ծիծառնիկ :

ԵՐԳ ԺԴ.



Հ Ա Ռ Ա Ջ Ք

Հ Ա Յ Պ Ա Ն Գ Խ Յ Ի Ն



Պանդըխտուծիւն, պանդըխտուծիւն,
Ա՛հ, սըրտմաշուք պանդըխտուծիւն.
Ո՞վ այնպէս լաւ ըզքեզ, ո՛հ, ո՞վ կը ճանչնայ
Քան զորդին Հայկայ:

Ո՞վ տառապանքդ ու քո ցաւեր
Այնպէս երկար քաշել քաշեր՝
Որպէս հէզ Հայն՝ յոր կը թափես քո զամէն
Հին վըրէժդ ու քէն:

Որո՞ւ աչքէն ա՛յնչափ արցունք,
Որո՞ւ սըրտէն այնչափ կայծունք,
Որո՞ւ բերնէն այնչափ հառաչք արիւնթոր
Խըլես ամէն օր:

Աչքն որ բանայ յաշխարհ՝ առաջ
Քե՛զ կըտեսնայ՝ քե՛զ ձախ և յաջ.
Դո՛ւ ես դայեակ Հայուն յաւուր ծընընդեան,
Դո՛ւ պատէ՛ս տապան:

Աչք լալազին՝ գըլուխ խոնարհ
Թափառելով յամէն յաշխարհ,
Հայն հեծեծէ՛ «Դո՛ւ ես արդեօք իմ երկիր,
«Զհարցն ունիս՞ մոխիր»...:

Կամ երբ տեսնէ լերանց գօտիս՝
Հառաչէ. «Դո՛ւ ես մեր Մասիս».
Եւ կամ մաքուր գետոց տեսեալ սահա արագս՝
«Դո՛ւ ես իմ Արաքս»:

Բայց լեռն հայի սեւ սեւ յօնօք,
Եւ ոչ լըսէ զՀայուն ողոք.
Եւ չըմարեր գեան այն ալեօ՞քըն թաթաւ
Հայուն ըզծարաւ...:

Ի՛նչ սրտարեկ գոյ առաւել,
Բոլոր զերկիր շուրջ թափառել՝
Եւ ոչ լըսել եւ ոչ ըզգի՛ւզ մի կամ տուն
Հարցդ յանձնէ անուն:

Ո՛հ, ի՛նչ ցաւ, ի՛նչ քան զայն արխուր
Քան չըզիտել թէ թազվիս ո՛ւր.
Զըզիտել թէ կեանք արւողացդ արդեօք քով
'Տի նընջե՞ս մահով:

Ի՛նչ քան զայն դառն՝ չ՛ունել բընաւ
Եւ ո՛չ մի թիզ աւազ կամ կոււ,
Եւ չըկարես տսել մահուդ յանկողին,
«Ձե՛զ կըթողում, որդեակք, ըզհարցս իմ գետին»...
.

Պանդըխտուծիւն, պանդըխտուծիւն,
Ա՛հ սըրտմաշո՛ւք պանդըխտուծիւն,
Ո վ այնպէս լաւ ըզքեզ, ո՛հ, ո՞վ կըճանչնայ
Քան զորդին Հայկայ:



ԵՐԳ ԺԵ.

Հ Ա Յ Ո Պ Ր Ի Ն Ք

Հայ ապրինք, եզրարք, մարդկութեան մէջը,
 Հայ կընքեր է մեզ Պատմութեան էջը.
 Հայ անուամբ ըզմեզ կ'ողջուէ են Երկինք.—
 Ե՛զրարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք.— Մեր հայրն է այն Դիւցազուն
 Որ զԱզատութիւն սովորեցոյց մարդուն,
 Ու մեզ վեհ Սնուն մը արւաւ բաժինք.—
 Ե՛զրարք, Հայ ապրինք:

Մեր աշխարհն է սո՛ւրբ:— Մեր հողուն վըրան,
 Աստուած է քաղեր, հանելով զԱղամ.
 Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Ինք.—
 Ե՛զրարք, Հայ ապրինք:

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրրան.
 Երկիր փրկութեան է մերս Հայաստան,
 Կըրծնից նախկին սեղան է Մասիք.—
 Ե՛զրարք, Հայ ապրինք:

Հայուն պերճ անունն՝ ո՞չ միայն յերկիր՝
 Այլ եւ յեթե՛րց մէջ շողայ լուսալիր.
 Քաջ Հայկին աստեղք անմահ են յերկինք,—
 Ե՛զրարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք,— Ո՞ր ազգ կայ Հայուն նըման,
 Որ ունենայ հին պարձանքներ այսքան,
 Ո՞ր ազգ Հայուն պէս չըքեզ Հայրենիք.—
 Ե՛զրարք, Հայ ապրինք:

Ըսէք, ո՞ր Ազգին չորս առաքեալներ
 Երկնից թաղաւորն է դեսպան դրկեր,
 Ո՞ր թագաւորին հեռ թղթակցեր Ինք.—
 Ե՛զրարք, Հայ ապրինք:

Ով կրնայ համրել Սրբոց մեր զանուանք,
 Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ.
 Մեր Եկեղեցին յերկրի է Երկինք.—
 Ե՛զրարք, Հայ ապրինք:

Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնէնք.
 Հաւատոց եղանք միշտ ախոյեան մո՛նք
 Հայո՞ զարմացոյց զերկիր և զերկինք.—
 Ե՛զրարք, Հայ ապրինք:

Մեր ազգ հետեւող է ճիշտ Յիսուսի,
 Որ Խաչն ա՛յսչտի դար առած է յուսի.
 Ո՞չ, չըխնարհիր չ'ըլլար դասալիք.
 Եզրարք, Հայ ապրինք:

Այո՛ Ոռչին կեանք՝ կեանք է վըշտալից.
 Այո՛, Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից.

Բայց Խաչն՝ յաղթութիւնն ունի վեհ կընիք .
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք :

Մեր քաղցր Հայրենիք , մեր թաղ , դաւազան՝
Ամպեր են ծածկեր արեւի նրման .

Յուսացէ՛ք , արեւ կուտան մեզ Երկինք . —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք :

Ո՛չ , ճակատագիր մեր չէ՛ միշտ աըխուր՝
Ըզթշուաութեանն ուսել հացն ու ջուր .
Նոր երջանկութեանն ապագայ մ'ունինք . . .
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք :

Հա՛յ ապրինք , որ մեր սրդիք ալ՝ Ե՛ղբարք ,
Կարենան պարծիլ որ զմեւ ունին հարք .
Չ'ըլանք Հայ անուան չ'ըլանք նախաախնք . —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք :

Հա՛յ ապրինք . — Օր մը յաղթական մահուն
Պիտի բարձրանայ անմա՛ր : Հայութիւն . . .
Ո՛հ , ա՛յն օր մեզի շն՛ւա ծագէ , Ե՛րկինք . . .
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք :



ԵՐԳ ԺԶ.

Հ Ա Յ Մ Ե Ի Ե Ի Ե Զ

Ոչ եղբարք , ո՛չ , օտարներէն չըկա՛յ յոյս .
Մի՛ աչվընիդ մի՛ դարձընէք յայս յայն կոյս .
Օտարն ըզձեզ թէ և սիրէ՛ հիւրարար՝
Օտարն՝ ա՛հ , միշտ է օտա՛ր :

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անգորով ,
Ի՞նչ վոյթ որ դուք թափէք արցունք արիւնով .
Ով որ Հայ չէ՛ Հայունն ցուեր նա չ'ըզգար ,
Ի՞նչ կը խարվիք անդադա՛ր :

Մի՛ դուք ձեր յոյս մի՛ աւանդէք օտարին ,
Մի՛ խոր վէրքերըդ ցուցանէք անգութին .
Արգանատա՞նքս կը յուսայք , օղնութի՞ւն ,
Չեր կը ծաղրե՛ն մերկութիւն :

Գիտեմ ձեր ընդ ծա՛նր է ծա՛նր , ով Հայեր ,
Բայց կը կարծէ՞ք զայն վերցընեն օտարներ .
Թողէ՛ք դատար , առէ՛ք եղբայր եղբոր թեւ ,
Եւ զօրացէ՛ք անդեղեւ :

Բողբը դարձեր է ձեզի դէմ թըշնամի ,
Մի՛ վըհատիք , ցուցուցէ՛ք սիրա Հայեցի .
Չէ՛ կարող բողբ յաղթել աղբին այն քաջի
Որ բողբին դէմ կը կըռվի :

Ձեր հայրերուն՝ ո՛չ չըզթայք ո՛չ սուսերներ
 Ձրկար մեռցուր ային ընկճել ո՛չ միտք ո՛չ սրտեր •
 Ինչո՛ւ ձեր սիրա այսօր դողայ արկար • հէք,
 Ի՞նչ, այն քաջաց սրդիք չէ՞ք :

Չէ՞ք դուք սրդիք այն դիւցազանց աննըման՝
 Որ Հայրենեաց ճենճերեցան ի սեղան . . .
 Չէ՞ք դուք սրդիք այն մեծ Հայոց՝ որոց կեանք
 Են մարդկութեան իսկ պարծանք :

Դուք որ ունիք ձեզ պատմութիւն մ'ազգային ,
 Որոյ վերայ մեծ ազգեր իսկ նախանձին ,
 Ի՞նչու այսօր մուցած զԱնցեալ ձեր փառաց
 Երանի՛ տայք օտարաց :

Օ՛ն , ով կըզդայ ի սիրտ եռանդ եւ սգի՛
 Թողու զօտար եւ իւր նախնեաց հետելի •
 Մեր կեանքը հո՛ն է ուր Կրօնից մեր սեղան ,
 Ա՛յն է Հայոց վառարան :

Ե՛զբարք , Հայուն կեանքը երբէք չը՛ մարիր ,
 Երկինք լեցուն են այն բոցով կենսածիր •
 Որչափ արիւժ մըշտայազիթ Սաչ Քրիստոսի :
 Հայն ալ անոր հեա կ'ապրի :

Ի՞նչ կը վախնայք . . . — Գլու խնուդ վերայ չէ՞ք քաններ
 Քառաթեւին դիւստարսուռ վե՛ն ըստուեր •
 Չայն սուրբ փայտին բուն շաղկեցին ձեր հարքը
 Իրենց վրսե՛մ արեամբը :

Դուք ալ Սաչին խարրսխեցէք ձեր յոյսը ,
 Եւ հաւատացէ՛ք պիտի ծաղի՛ ձեր յոյսը ,
 Նա ազգութեանդ եղաւ պարիսպ ամրափակ ,
 Նա ձեր ըլլայ զէնք դրօշակ . . .

Ո՛չ . հընար չէ՛ որ կորսրվի այն ազգը՝
 Որ հաւատարիմ մընաց Սաչին միշտ ոտքը •
 Նորա կեանքը պիտի տեսէ ա՛յնչափ դար ,
 Որչափ Կրօնից կեանք՝ յաշխարհ :

Այն վե՛ն Կրօնից եւ Ազգութեան անունով ,
 Հայ եզբարք ձեռք ձեռքի արեւ՛ք հուր սիրով •
 Ատելութիւն , քէն՝ մերժրվին օ՛ն ի բաց ,
 Անիծեցէ՛ք զազգատեաց . . .

Մանուդ սիրտ՝ ըզգայն նոյն սերն Հայրենեաց ,
 Ամենուր միտք թըռչի յօգուտ համազգեաց •
 Ու ձեր յեաին եզբօր արցունք ու դաւ՝ միշտ
 Ըզգացէ՛ք ձեր իրրեւ վիշտ :

Օտարին հաց մեզի սընունդ չէ՛ - բնաւ •
 Օտարին ջուր՝ ոչ . չը՛ մարեր մեր ծարաւ ,
 Մեզի կենաց արուղ եւ մեր պահապան՝
 Է՛ Աւազանն Հայկական :

Այն Աւազանն՝ այն Հայութեան կընքատուն ,
 Ո՛չ չ'ուրանամք Ե՛զբարք յուսովք զազգազգիտուն . . .
 Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջապէս •
 Թ'ո՛ղ մարի յայն սուրբ կըրկէս

Այն հառաչանք՝ զոր մոռնչէիք ի սըրտից ձեր,
Իբրու զորոտ ի սեւ ամպոց, ո՛վ հէգ հայրեր,
Երբ դողողջուն ձեռքով որդւոյն ձեր մէկհատիկ
Ըզնողն օտար ի գերեզման կը փորէիք...

Այն քան զազբիւր առատ հոտած ձեր արցունքներ՝
Հայոց մայրեր՝ երբ ըզքընքուչ ձեր ազջիկներ
Արիւնուռչա ձեռք մը կը խըլէ՛ր ձեր սուրբ ծոցէն
Իբր ըզկոկոն վարդի կորզած վարդենիէն...

Այն յուսահատ ձեր կողկողանք՝ հա՛րսն ու փեսայ
Երբ ձեր զանխոյժ սըրտերուդ կապ՝ սուրն անխընայ
Կըտրէր նետէր մէկդ ի հիւսիս մէկդ ալ հարա՛ւ,
Ձինչ զոյգ շուշան եւ վարդ խըզած արիւնթաթաւ:

Այն ճիւղ անմեղ խեղճ տըզայոյն ո՛րբ մընացած՝
Որու չորս կողմ կոհակաց պէս աղէտք դիզված,
Ու մայրենի չ՛ունէր իրեն պարիսպ ծոցոյն,
Ինչպէս մէկ ձագ մը կորուսած իւր մօրը բոյն:

Այն կուսական ծաւի կամ սեւ սև աշուկներ
Որ մարգըրտի պէս թափէին սուրբ կաթիլներ,
Երբ զազիր շունչ մը շըրթներուն վարդի՛ց վըրան
Կ՛անցնէր՝ ինչպէս ծաղկանց ընդ թերթ խորշակ
ամուսն:

Այն անդադար հառաչախառն ո՛ղբք ու լացեր՝
Որով զօտար հող թըրջէիք, պանդո՛ւխա Հայեր,
Ու ցանկալի Հայրենիքէն հեռու՝ անհա՛ս,
Նախ քան ըզմահ մեռայք ընկած պըտո՛ւղք տըհաս:

Այն ցած և ցիր դէզ դէզ Հայոց խեղճ ոսկըրներ,
Որ անձանթթ՝ չը ճանչըրված լըցիք խորշեր,
Ու չ՛եղաւ մէին ո՞ր չըկոխէ, պագնէ զձեր հող,
Ու մէկ չ՛եղա՛ւ որ ձեր վերայ թափէ հայ ցո՛ղ...

Ո՛վ հարք եւ մարք, իմ եղբայրներ, անո՛ւչ քոյրեր
Ահա և ես ձեր պէս օտար անկիւն մ՛ընկեր.
Ձեր պէս և ե՛ս Հայաստանէն դուրս՝ անժառանգ,
Ու չունիմ յոյս որ իմ լըսվի հոն արձագանդ:

Բայց ձեր արցունք՝ կ՛ողողէ ի՛մ ալ աչվըներս,
Ձեր հառաչանք՝ կը տոչորէ դեղնած շըրթներս.
Ի՛մ ալ ճակատ ըզձեր մահուան թափթըփէ քիրա,
Ձեր սըրտերուն կ՛ըզգայ ըզհուր և խեղճ այս սիրտ:


Ո՛հ, լըսեցէ՛ք խոր հողերէդ խեղդուկ գայս ձայն,
Հայեր՛, ո՛ւր ալ ընկած լինի՛ր հէգ, լըռելեայն,
Ո՛հ, այս եղբօ՛ր ձայն է որ ձեզ զամէ՛ն կ՛ողբայ,
Եղբորդ հառա՛չ է որ ըզհայտք անվըրէ՛ժ՝ լայն...

Ո՛չ, - մոռցված չէ՛ք, յո՛ր և անկիւն մեռայք երկրիս
Ձեզ մեք եղբարս, և Հայաստան՝ գիտէ Որդիս.
Ո՛չ, - ձեր արցունք չէ՛ զուր թափված, հայրեր,
մայրեր,
Ձեր սըրբութեան վարդ չէ՛ խամրեր, Հայոց կոյ-
սեր...

* *

Ա՛խ, այս կըրակ բըրտէս բըխած կըրակ արցունք
Համնի ամէն մէկուդ, պանդո՛ւխտք իմ Հայկա-
զունք.

Հալեցընէ՛ գերեզմանիդ ձիւնն ու սառոյց,
Ու միշտ սըփոխի ձեզ նո՛ր գարուն կենսայարոյց:



29/17
5-84

2013

14649
14650

